



# Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021



...Ինձ համար կյանքը Քրիստոսն է,  
իսկ մեռնելը՝ չափ:

Փիլիպպեցիներ 1. 21

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս.

Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

### **Շապիկի առաջին էջին Սբ. Շողակաթ եկեղեցին**

**Սուրբ Շողակաթ միջնադարյան եկեղեցին փոքր ածավալ, բայց շատ գեղեցիկ հուշարձան է Վաղարշապատ քաղաքում: Այն կառուցվել է 1694-ին՝ կաթողիկոս Նահապետ Ա. Եղեսացու օրոք, Աղամալ Շոռթեցի արքայազնի միջոցներով:**

**Ավանդության համաձայն՝ կառույցը հիմնվել է այն վայրում, որտեղ Հռիփսիմյան քրիստոնյա Նահատակների վրա «շող է կաթել»: Եկեղեցին կառուցված է սրբատաշ նարնջագույն տուֆից, ունի բացառիկ պարզ ճարտարապետություն, գմբեթավոր դահլիճի հորինվածք, որը բնորոշ է հայկական վաղ միջնադարյան ոճին:**

**Էջմիածնի Մայր տաճարի, Սբ. Հռիփսիմե – Սբ. Գայանե եկեղեցիների հետ միասին Սբ. Շողակաթը –ս ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:**

([www.wikipedia.org](http://www.wikipedia.org))

**Լուսանկարիչ՝ Լարա Գայսերեան,  
Փենսիլվեյնիա, ԱՄՆ  
Lara Kaiserian, Pennsylvania, USA**



# Ձիաց մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

**ԼՔ. ՏԱՐԻ**

**Դ. ԵՌԱՄՍԹԱԿ**

Աստվածաշնչի ընթերցումներ, անձնական և ընտանեկան  
ամենօրյա հոգևոր խորհրդածություններ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible  
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread  
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի  
խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Armenian Missionary Association of America  
31 West Century Road  
Paramus, New Jersey 07652, USA  
E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ  
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Սպիտակ խիճ կտամ ցրան, և այն խճի վրա՝ մի նոր անուն գրված: (Չայտն. 2.17)

## **ԻՆՉ Է ԱՆՈՒՆԴ**

**Մ**եկն ասել է, որ կյանքում մենք ունենում ենք երեք անուն. մեկը մեր ծնողների տված անունն է, մեկը՝ ուրիշների տվածը, այսինքն՝ մեր համբավը և երրորդը՝ անվանումը մեզ, այն է՝ մեր նկարագիրը: Ուրիշների՝ մեզ տված անունը կարևոր է, ինչպես ասվում է Առակներում.«Բարի անունը լավ է մեծ հարստությունից» (Առ.22.1), բայց մեր նկարագիրն ավելի կարևոր է:

Կա ևս մեկ անուն, որը առավել կարևոր է: Հիսուսը Պերզամոնի հավատացյալներին ասաց, որ Ինքը գիտի նրանց գործերը, գիտի, թե ինչ հավատարմությամբ են հետևում Իրեն և չեն ենթարկվում սատանայի փորձություններին: Ուստի նրանց համար երկնքում մի նոր անուն է վերապահված.«Ով որ հաղթում է...սպիտակ խիճ կտամ՝ նրան, և այն խճի վրա՝ մի նոր անուն գրված, որ ոչ ոք չգիտե, բացի նրանից, ով ստանում է» (Չայտն. 2.17): Վստահ չենք, թե ինչու Նա խոստացավ սպիտակ խիճ տալ: Գուցե դա հաղթանակի մրցանակ էր նշանակում: Կամ գուցե մեսիական խնջույքին մասնակցելու նշան: Թերևս նմանութուն կա երգվյալ դատարանի ժյուրիի քննիչների՝ անցյալում գործածած արդարացման քվեի հետ: Մենք չգիտենք: Բայց ինչ էլ լինի, Աստված խոստանում է, որ մեր նոր անունը կմաքրի մեր ամոթը (Ես. 62.1-5): Մեր համբավը կարող է տրորվել, մեր նկարագիրը անհնար լինի վերականգնել, սակայն դրանցից և ոչ մեկը չի կարող մեզ սահմանել: Կարևոր չէ, թե ուրիշները ինչ անուն կտան մեզ, ոչ էլ մեր տված անունն է կարևոր: Մենք այն ենք, ինչ որ Հիսուսն է ասում մեր մասին: Մեզ տրված նոր անվան համաձայն ապրենք:

**Աղոթք** - Զայն, հավատում եմ, որ ես այն եմ, ինչ Դու ես ասում: Օգնիր, որ կարողանամ ապրել որպես Քո զավակը: Ամեն:

**Սեր նկարագիրն ու աղբյուրակերպը ցույց կսան մեր ով լինելը:**



Ո՞վ կարող է նրանց սրտերը այնպես անել, որ երկնչեն ինձանից ու պահեն իմ պատվիրանները բոլոր օրերում: (Բ. Օր. 5. 29)

## **ԴԵՌԱՏԻ ՀՎԿԱՏՔ**

**Պ**ատանեկությունը ամենազովարին շրջանն է թե՛ ծնողների, և թե՛ զավակների համար: Իմ պատանեկության տարիների որոնումներից մեկն այն էր, որ ուզում էի մորիցս անկախ լինել: Ես բացահայտորեն մերժում էի նրա տված խորհուրդները, ընդդիմանում նրա կանոններին՝ կասկածելով, թե դրանց նպատակն ինձ դժբախտացնելն է: Թեև որոշ ժամանակ անց մենք այդ հարցերում համաձայնության եկանք, բայց անցյալի մեր հարաբերությունները լարված էին: Մայրս, իհարկե, շատ էր ցավում, որ մերժում էի իր ցուցումները, և համոզված էր, որ դրանց հետևելու դեպքում ես հեռու կմնայի հոգեկան ու ֆիզիկական շատ ցավերից:

Աստված նույն զգացումներն ուներ իր զավակների՝ Իսրայելի ժողովրդի հանդեպ: Կյանքի մասին Իր իմաստնությունները Նա տվել է հայտնի տասը պատվիրաններով (Բ. Օր. 5. 7-21): Թեև կարելի է դրանք դիտարկել որպես կանոնների ցանկ, բայց Աստծո միտումը հստակ երևում է նրա՝ Մովսեսին ասած խոսքերում. «Որպեսզի հավիտյան լավ լինի նրանց ու նրանց որդիների համար» (Հմ.29): Եվ Մովսեսը Աստծո փափազը փոխանցեց իսրայելցիներին՝ ասելով, որ իրենց հնազանդության շնորհիվ նրանք վայելելու են Տիրոջ մնայուն ներկայությունը խոստացված երկրում (Հմ.33): Աստծո հետ հարաբերություններում բոլորս էլ անցնում ենք «դեռահասության» այդ շրջանը, երբ չենք վստահում, որ Նրա տված կյանքի ցուցումները մեր բարիքի համար են: Թող որ աճենք ու զարգանանք այն գիտակցությամբ, որ Նրա ցանկությունը մեզ համար լավագույնն է, և սովորենք վստահել Իր իմաստնությանը:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, օգնի՛ր վստահել Քեզ և հավատալ, որ Դու գիտես, թե ինչն է լավագույնը ինձ համար: Ամեն:

**Ասծո հետ հարաբերություններում աճելու համար Նրա իմաստության կարիքն ունենմ:**

Դրա համար չենք վիատվում, այլ թեև մեր արտաքին մարդը փչանում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է: (Բ. Կորնթ. 4.16)

### **ՊԱԿԱՍԱՎՈՐՆԵՐԸ**

**Ա** մեն ինչ սկսվեց կոկորդի թեթև բորբոքումով, հարբուխով, ապա ծանրանալով դարձավ կապույտ հագ և վերջապես՝ թոքաբորբ:

Ութ շաբաթ հազարը, որը պատահականորեն չի կոչվել կապույտ, ինձ շատ թուլացրեց: Չեմ մտածում, թե արդեն ծեր եմ, բայց բավական հասունություն ունեմ հասկանալու, որ դեպի դա եմ գնում: Եկեղեցական մեր խմբի անդամներից մեկը առաջացած տարիքով մադեկանց, որոնք առողջական խնդիրներ ունեն, կատակով անվանում է պակասավորներ: Անշուշտ, որևէ հաճելի բան չկա պակասավորության զգացում ունենալու մեջ:

Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում Պողոսն էլ իրեն հատուկ ոճով գրեց «պակասելու» մասին: Այդ գլխում պատմվում է իր ու իր խմբի հալածանքների մասին: Իր առաքելության կատարումը ծանր է նստել նրա վրա, և նա հաստատում է, որ «մեր արտաքին մարդը փչանում է»: Թեև տարիքի ու հալածանքների պատճառով իր մարմինը տկարացավ, սակայն նա կռոչած մնաց իրեն պահող հավատքին. «մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» (Հմ.16): Նա համոզված էր, որ «Մեր այժմյան թեթև նեղությունը անգերազանցելի հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար» (Հմ.17):

Երբ գրում եմ այս տողերը, «պակասները» դարձյալ ճնշում են կուրծքս: Բայց ես գիտեմ, որ իմ կյանքում, որ Քրիստոսին է կռոչած, վերջին խոսքը գրանցը չէ:

**Աղոթք** - Հայր, նույնիսկ այն ժամանակ, երբ մարմիններս «ապականվում եմ», օգնիր, որ կարողանամք մեր ֆիզիկական պայքարները տեսնել Հիսուսի հանդեպ ունեցած հույսի ու Իր խոստացած փառքի ոսպնյակով: Ամեն:

**Առողջական խնդիրներ ու դակասներ կունենանք, սակայն Տիրոջ վրա հույս դնելով՝ կկարողանանք դիմագրավել դրանք:**

Բայց ժամանակ կգա, և հիմա է, երբ ճշմարիտ երկրպագողները հոգով ու ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն իրեն այսպիսի երկրպագողներին է ուզում: (Հովհ. 4.23)

## **ՈՐՏԵՂ ԷԼ ՊԱՇՏԵՆՔ**

**Ս**աստիկ գլխացավի պատճառով չկարողացա մասնակցել կիրակնօրյա առավոտյան պաշտամունքին և դրա փոխարեն դիտեցի առցանց պատգամը: Սկզբում, ցավը, ապա նաև ձայնի ու պատկերի որակը շեղեցին ուշադրությունս: Բայց քիչ անց ծանոթ երգի հնչյունները ջերմացրին հոգիս: Արցունքներս հոսեցին, և ես երգեցի. «Տեսիլքս եղի՛ր, օ՛հ սրտիս Տեր: Քեզնից բացի ոչինչ թող չլինի իմ փրկության միջոցը: Քանզի Դու ես իմ լավագույն խորհուրդը՝ գիշեր թե ցերեկ, քայլելիս, թե քնած ժամանակ: Քո ներկայությունն իմ լույսն է»: Կենտրոնանալով Աստծո մնայուն ներկայության պարզևի վրա՝ ես պաշտեցի Նրան՝ իմ հյուրասենյակում նստած: Թեև Աստծո Խոսքը հաստատում է հավաքական պաշտամունքի կարևորությունը (Եբ. 10.25), բայց Աստված սահմանափակված չէ եկեղեցաշենքի պատերի մեջ: Ջրհորի մոտ սամարացի կնոջ հետ խոսակցության ժամանակ Հիսուսը արհամարհեց Մեսիայից եկած բոլոր ակնկալիքները (Հովհ.4.9), դատապարտելու փոխարեն ասաց ճշմարտությունը (Հմ.10) և հայտնեց Իր ունեցած մտերմիկ ու գերիշխան իմացությունը Իր զավակների հանդեպ (Հմ.17-18): Հուշակելով Իր Աստվածությունը՝ Նա հայտարարեց. «Բայց ժամանակ կգա, և հիմա է, երբ ճշմարիտ երկրպագողները հոգով ու ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն իրեն այսպիսի երկրպագողներին է ուզում: Աստված Հոգի է, ու նրան երկրպագողները պետք է հոգով ու ճշմարտությամբ երկրպագեն» (Հմ.23-24): Երբ կենտրոնանաք Աստծո ով լինելու, Նրա արածների ու խոստումների վրա, կկարողանաք ուրախանալ Նրա մնայուն ներկայությամբ, անկախ նրանից, թե որտեղ ենք պաշտում Իրեն՝ այլ հավատացյալների հե՞տ, մեր տան մե՞ջ, թե այլուր:

**Աղոթք** - Հիանալի Աստված, խնդրում եմ՝ օգնի՛ր, որ կարողանամ պաշտել Քեզ՝ ուրախանալով Քեզանով, Քո արածներով ու անելիքներիդ մասին խոստումներով: Ամեն:

**Պաշտամունքի սեղի ու ձևի մասին մտածելու փոխարեն հարկավոր է կենտրոնանալ դրա էության, ոգու՛ վրա:**

Չեմ վախենա չարից: (Սաղմ. 22.5)

## ՄԵՁ ՀԵՏ՝ ՀՈՎՏՈՒՄ

**Բ**րիտանացի քաղաքական գործիչ, ստրկուկյան վերացման պայքարի առաջամարտիկ Վիլյամ Վիլբերֆորսի հորաքույր Հաննան մահից առաջ գրած նամակում նշում էր, որ իմացել է իր մի հավատակցի մահվան մասին: «Երջանիկ է սիրելի մարդը, որ արժանացել է փառքի ու վայելում է Հիսուսի ներկայությունը, որին սիրում էր առանց տեսնելու: Սիրտս ցնծում է երջանկուկյամբ»: Ապա անդրադառնալով իրեն՝ կինը գրում է. «Ես և՛ լավ եմ, և՛ վատ: Իսկ Հիսուսն այնքան լավ է, քան երբևէ»:

Այս խոսքերն առիթ դարձան մտածելու 22-րդ սաղմոսի մասին, որտեղ Դավիթը գրում է. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից» (Հմ.5): Մահվան ստվերների հովտում Դավիթի արած նկարագրությունը խորապես անձնական է: Սկզբում խոսելով Աստծո մասին. «Տերն իմ հովիվն է» (Հմ.2)՝ այնուհետև նա ուղղակի դիմում է Նրան. «Քանզի դու, Տե՛ր, ինձ հետ ես» (Հմ.5):

Որքա՛ն ոգևորիչ է իմանալ, որ «երկիրն ու ողջ տիեզերքն ստեղծող» (89. 2) Ամենակարող Աստվածը շատ կարեկից է ու մեզ հետ քայլում է նույնիսկ ամենազգոթարին տեղերում: Անկախ նրանից՝ մենք ինչ իրավիճակում ենք, կարող ենք դիմել մեր Հովվին, Փրկչին ու Բարեկամին ու նրան «միշտ լավ» վիճակում գտնել: Այնքան լավ, որ մահն իսկ պարտվում է, ու «երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակվեմ» (22.7):

**Աղոթք** - Ի՛նչ հովիվ, շնորհակալ եմ Քո կատարյալ հավատարմության ու իմ հանդեպ տածածդ բարության համար: Օգնի՛ր, որ այսօր Քեզ մոտ մնամ: Ամեն:

**Մեր հովիվ Հիսուսը մի՛ս մեզ հետ է, և արժի այդ հույսը ուրիշներին փոխանցել:**





Իրար հետ ու բոլորի հետ ամեն ժամանակ բարուն հետևեցեք: (Ա.Թես. 5.15)

## **ՄԻՄՅԱՆՑ ՕԳՆԵԼ**

**Է** մբրն ընկերուհու հետ բասկետբոլ էր խաղում, և մտածեց, որ իրենց համայնքը կարող է առանձին լիզայով հանդես գալ: Նա հիմնեց շահույթ չհետապնդող մի կազմակերպություն, որն օժանդակելու էր իրենց գործողություններին: Շատ կանայք կային, որոնք պայքարում էին վստահություն հասնելու և սեփական նկարագիրը կերտելու համար: Որոշեցին քաջալերել նրանց, որ դառնան հուսալի ներդրողներ իրենց համայնքներում: Խմբի առաջատար խաղացողներից մեկը, որն այժմ դաստիարակում է ուրիշ աղջիկների, ասաց. «Մեր միջև սերտ ընկերություն կա: Մի բան, որի կարիքն ունեի: Մենք տարբեր ձևերով աջակցում ու քաջալերում ենք միմյանց: Ես հիանում եմ՝ տեսնելով աղջիկների հաջողությունն ու վերելքը»:

Աստված ուզում էր, որ Իր ժողովուրդը միանար միմյանց օգնելու համար: Պողոս առաքյալը թախանձում էր թեսաղոնիկցիներին. «Իրար քաջալերեցե՛ք և իրար շինություն՝ ն տվեք» (Ա. Թես. 5.11): Աստված մեզ դրել է Իր ժողովրդի ընտանիքում, որպեսզի աջակցի մեր կյանքին: Քրիստոսի ճանապարհով անցնելու համար մենք միմյանց կարիքն ունենք: Երբեմն դա կարող է նշանակել լսել մեկին, որը պայքարում է ինչ-որ բանի համար, քաջալերական խոսքեր ասել: Մենք կարող ենք արձանագրված հաջողության համար ուրախանալ, դժվարության պահին աղոթել, հավատի մեջ աճելու համար միմյանց խրախուսել: Եվ այդ բոլոր դեպքերում «իրար հետ ու բոլորի հետ ամեն ժամանակ բարո՛ւն հետևենք» (Հմ.15):

**Աղոթք** - Հայր, ինձ դուր է գալիս Քո ընտանիքի անդամը լինել: Ցույց տու՛ր ինձ, թե ինչպես կարող եմ ուրիշների կյանքի մաս կազմել: Ամեն:

**Պատրաստ լինե՛մք ընդունելու և քաջալերելու ուրիշներին:**

Եթե մի բան ուրիշ կերպ մտածեք, այն էլ Աստված կհայտնի ձեզ: (Փիլ. 3.15)

## **ԸՆԹԱՅԻԿ ՊԱՏԵՐՈՋՄՆԵՐ**

Հացաթխման սարքը միացնելով էլեկտրական հոսանքին՝ վայելում ենք 19-րդ դարում ծավալված վեճի արդյունքը: Թոմաս Էդիսոնն ու Նիկոլա Տեսլան պայքարում էին, թե որն է ավելի լավ էլեկտրական հոսանքը՝ հաստատուն՝ մարտկոցից անմիջապես լուսարձակին հասնող, թե՞ փոփոխական, որն ստանում ենք պատին փակցված էլեկտրական ուժային կենտրոնից: Ի վերջո Տեսլայի փոփոխական հոսանքի գաղափարը հաղթեց և մինչև օրս գործածվում է: Որովհետև ապացուցված է, որ փոփոխական հոսանքը շատ ավելի արդյունավետ է հեռու տարածություններին մատակարարելու առումով:

Երբեմն մենք էլ ենք իմաստուլթյան կարիք ունենում՝ հանդիպելով Հիսուսին հավատացողների միջև եղած մտահոգիչ խնդիրներին (տե՛ս Հռոմ.14. 1-12): Նման պարագաներում ավելի հստակ միտք ունենալու համար Պողոս առաքյալը կոչ է անում դիմել Աստծո օգնությունը: Նա ասում է.«Եթե մի բան ուրիշ կերպ մտածեք, այն էլ Աստված կհայտնի ձեզ» (Փիլ. 3.15): Մի քանի համար այն կողմ տեսնում ենք, որ երկու մարդիկ իրենց տարածայնությունների պատճառով բաժանվում են իրարից: Այդ բախումը մեծապես վշտացնում է Պողոսին, և նա ասում է. «Եվդիբային աղաչում եմ, Սյունտիքին էլ եմ աղաչում, որ միևնույնը խորհեն Տիրոջով» (4.2):

Երբ որևէ անհամաձայնություն մեզ բաժանի իրարից, խնդրենք Աստծո շնորհն ու Իր Խոսքում եղած իմաստնությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, կյանքը բարդ է: Վիճակներ կան, որ չեմ կողմնորոշվում՝ ո՞ր ուղղությամբ գնալ: Խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ Գոգու օգնությամբ կարողանամ ճիշտ ընտրություն կատարել: Ամեն:

**Բախումներ ու անհամաձայնություններ միշտ էլ կարող ենք ունենալ: Բայց էականը Աստծո իմաստությունն ու օգնությունը խնդրելն է:**

Եվ սրանք բոլորը հավատով վկայությունն ստացան, բայց խոստումը չընդունեցին: (Եբ. 11.39)

## **ԶԿԱ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱՆ**

**Ա**նիտան իր իննսուներորդ տարեդարձի օրը լուռ ու աննկատ հեռացավ կյանքից: Նրա մահը շատ նման էր իր ապրած կյանքին: Այրին նվիրված էր իր զավակներին ու թոռներին և մտերիմ էր իր եկեղեցու երիտասարդ կանանց հետ:

Անիտան չուներ որևէ մասնավոր տաղանդ կամ նվաճում, սակայն Աստծո հանդեպ իր խոր հավատը տպավորել էր իրեն ճանաչողներին: Բարեկամներիցս մեկը նույնիսկ ասում էր. «Որևէ անելանելի դրուժյան մեջ հայտնվելիս մտածում եմ ոչ թե որևէ հայտնի քարոզչի կամ հեղինակի խոսքերի մասին, այլ թե ինչ կասեր Անիտան»:

Մեզանից շատերն են Անիտայի նման սովորական մարդիկ, որոնք սովորական կյանքով էլ ապրում են: Մեր անուսները երբևէ չեն նշվի լուրերում, և ի պատիվ մեզ կոթողներ չեն կառուցվի: Բայց Հիսուսի հանդեպ հավատքով կյանքը բնավ էլ սովորական բան չէ: Եբրայեցիներին ուղղված նամակի 11-ում նշված մարդկանցից ոմանք իրենց անուններով չեն նշված. (Հմ. 35-38), «սրանք բոլորը հավատով վկայությունն ստացան, բայց խոստումը չընդունեցին» (Հմ.39): Բայց քանի որ Աստծուն էին հնազանդվել, նրանց հավատը զուր չէր: «Որովհետև Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց, որպեսզի դրանք առանց մեզ չկատարվեն» (Հմ.40):

Եթե հուսահատված ես քո սովորական կյանքից, հիշի՛ր, որ Աստծո հանդեպ հավատքով ապրած կյանքը ազդեցություն ունի հավիտենություն ամբողջ ընթացքի վրա: Նույնիսկ եթե մենք սովորական մարդ ենք, կարող ենք անսովոր կյանք ունենալ:

**Աղոթք** - Հավատարիմ Աստված, Քո հանդեպ հավատքով ապրելը դյուրին բան չէ : Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ կարողանամ միշտ վստահել ու հնազանդվել Քեզ: Ամեն:

**Աստված կոչ է անում հավասալ Իրեն և օգնում է հնազանդ ու հավասարիմ լինել Իրեն:**

Մովսեսն անսաց իր աներոջ ասածին և արեց այն ամենը, ինչ նա ասաց իրեն: (Ել. 18.24)

### **ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ**

**Ա**նհայր մեծանալով՝ Ռոբբը զգուժ էր այն իմաստուն խորհուրդների կարիքը, որ առհասարակ հայրերն են տալիս որդիներին: Եվ չուզենալով, որ որևէ մեկն իր նման կյանքի կարևոր հմտությունների պակասն զգա, Ռոբբը պատրաստեց «Հայրի՛կ, ինչպե՞ս անեմ» խորագրով տեսաերիզների շարք, որոնք սովորեցնում էին ամեն ինչ՝ սկսած մեխ խփելուց, մինչև մեքենայի անիվը փոխելը: Իր ազնիվ սիրով ու ջերմ ոճով Ռոբբը դարձել է Յուժուբի հայտնի դեմքերից՝ ունենալով միլիոնավոր հետևորդներ:

Մեզանից շատերը կցանկանան ծնողներից ստանալ հարկ եղած խորհուրդներն ու փորձառությունը, կյանքի ծովում նավարկելու համար ունենալ բավականաչափ հմտություններ: Մովսեսն էլ որոշ իմաստնություն կարիք էր զգուժ, երբ ինքն ու իսրայելցիները Եգիպտոսի գերությունից ազատվեցին ու հաստատվեցին իբրև ազգ: Յոթորը՝ Մովսեսի աները, տեսնելով նրա լարված վիճակը, որ առաջացել էր մարդկանց վեճերը լուծելու ընթացքում, խորհուրդ տվեց, թե ինչպես կարելի է վարվել նման դեպքերում (Ել.18.17-23): «Մովսեսն անսաց իր աներոջ ասածին և արեց այն ամենը, ինչ նա ասաց իրեն» (Հմ.24):

Աստված գիտի, թե մենք ինչ իմաստնություն կարիք ունենք: Ոմանք կարող են օրհնված լինել աստվածավախ ծնողներով, որոնք իմաստուն խրատներ կտան իրենց զավակներին: Իսկ ծնող չունեցողները թող խնդրեն Աստծուց, որ Նա իմաստնություն շնորհի, «որ բոլորին առատությունամբ տալիս է» (Հակ. 1.5):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնիր ինձ, որ կարողանամ խնդրել ու լսել իմաստուն խորհուրդներ այն մարդկանցից, որոնց դրել ես իմ կյանքում: Ամեն:

**Մեր դիմագրաված Տազնադների, Գեղությունների ու դժվարությունների մեջ կարիք ունեն՞ալ իմաստուն խորհուրդներ լսելու:**

Ամեն բան մաքուր է, բայց չար է այն մարդու համար, ով գայթակղություն պատճառելով է ուտում: (Քոմ. 14.20)

## **ՈՒՐԻՇՆԵՐԻ ՕԳՏԻ ՀԱՄԱՐ**

**Թ**ագավարակի համաճարակի ժամանակ շատերը մնացին տանը, որպեսզի չվարակվեն: Բայց ես շարունակում էի հանրային լողավազան գնալ: Տիկինս, այնուամենայնիվ, վախենում էր, որ ես վարակը տուն կբերեմ ու կվտանգեմ իր տարեց մորը: Եվ խնդրեց հանուն իր սիրո՝ որոշ ժամանակ չգնալ լողալու:

Նախ փորձեցի հակաճառել, թե քիչ հավանականություն կա վարակվելու, բայց հետո հասկացա, որ իմ ասածն ավելի կարևոր է, քան իր զգացումները, և կնոջս չնեղացնելու համար այլևս չպնդեցի: Հոռոմեացիներին ուղղված նամակի 14-րդ գլխում Պողոսը խոսում է այն մասին, թե ինչպես պետք է Քրիստոսին հավատացողները ճաշեն կամ նշեն որոշ տոներ: Նա մտավախություն ուներ, որ ոմանք կարող են իրենց տեսակետները պարտադրել ուրիշներին:

Պողոսը հոռոմեացիներին հիշեցրեց, որ Հիսուսին հավատացողները տարբեր վիճակները կարող են տեսնել տարբեր տեսանկյուններից: Մենք էլ ունենք բազում միջավայրեր, որոնք ձևավորում են մեր վերաբերմունքն ու սովորությունները: Ուստի՝ «Այլևս իրար չդատենք, այլ ավելի այս դրեք ձեր մտքում, որ եղբոր գլորվելու կամ գայթակղության պատճառ չլինեք» (Հմ.13): Աստծո շնորհը մեզ տալիս է ազատություն, օգնում, որ մեր հավատակիցներին ցույց տանք իր հանդեպ մեր սերը: Մենք կարող ենք այդ ազատությունն օգտագործել, որպեսզի ուրիշների կարիքներն ավելի բարձր դասենք մեր սովորություններից ու համոզմունքներից, որոնք չեն հակասում Ավետարանի ճշմարտություններին (Հմ.20):

**Աղոթք** - Տե՛ր, տու՛ր ինձ շնորհք, որ առանց հակասելու ավետարանի ճշմարտություններին ու սիրոն՝ կարողանամ ուրիշների զգացումները ավելի բարձր դասել իմ զգացումներից: Ամեն:

**Ուսադիր լինեմ, որ մեր ընդունած օրենքներն ու սովորությունները ուրիշների սայթափելու դատաժյուրի չդառնան**

Եվ Մեմփիբոսթեն Դավթի սեղանից եր հաց ուտում, որպես թե արքայի որդիներից մեկը լիներ: (Բ.Թագ. 9.11)

## **ԹԱԳԱՎՈՐԻ ՍԵՂԱՆԻ ՄՈՏ**

**- Կապրի,-** *ասաց անասնաբույժը,- բայց ոտքը պետք է անդամահատենք:*

*Բարեկամիս բերած թափառական շանը մեքենա էր խփել:*

**- Դու՞ ես տերը,-** *հարցրեց բժիշկը և բացատրեց, որ վիրահատություն ծախսը մեծ է, բացի դրանից՝ ապաքինման ընթացքում կենդանին հոգածություն կարիք կունենա:*

**- Հիմա ես եմ,-** *ասաց բարեկամս: Նրա ցուցաբերած ազնվությունը շանը ապրելու հնարավորություն տվեց:*

Մեմփիբոսթեն իրեն համարում էր «մեռյալ շուն», որն արժանի էր չէր պատվի (Բ.Թագ. 9.8): Մանուկ հասակում ընկնելու պատճառով նա կաղ էր մնացել և միշտ ուրիշների օգնության կարիքն ուներ (4.4): Իր պապի՝ Սավուղի մահից հետո նա վախենում էր, որ Դավիթ թագավորը, այն ժամանակների սովորության համաձայն, կհրամայի սպանել գահին բոլոր վտանգ սպառնացողներին:

Սակայն Դավիթը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետև քո հայր Հովնաթանի սիրուն քեզ ողորմություն պիտի անեմ» (9.7): Մենք էլ, որ մի ժամանակ Աստծո թշնամիներն էինք ու դատապարտված էինք մահվան, Հիսուս Քրիստոսով փրկված ենք ու նա մեզ երկնքում տեղ է տվել, որ հավիտյան Իր հետ լինենք: Դա է Աստծո արքայության խնջույքին մասնակցելու իմաստը, որ նկարագրում է Ղուկասը (Ղուկ. 14.15): Մենք՝ թագավորի տղաներն ու աղջիկները, հիմա այստեղ ենք և շուրջ բարություն ենք ստացել: Ուստի Աստծուն մոտենանք երախտագիտությունը և ուրախությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ ինձ փրկելուդ և Քո սեղանի մոտ տեղ տալուդ համար: Դիչեցրու՛, որ ես Քո սիրելի գավակն եմ, և օգնիր, որ միշտ վստահեմ ու օրհնեմ Քեզ: Ամեն:  
**Հաճախ մոռանում եմ, որ Ասված մեզ լուսանում ու լուսաբանում է: Քաջալերվենք ու վստահենք, որ Տերն է մեր լուսաբանը ու լուսաբանը:**

Ո՞ւմ հետ խորհրդակցեց նա (Տերը), որ իրեն խելամիտ դարձնի: (Ես. 40.14)

## **ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ**

**Ա**ղջիկս, գրիչը սեղանին խփելով, ասաց. «Ձեմ հասկանում»: Տնային առաջադրանքը մաթեմատիկայից էր, ուստի ես էլ դժվարացա հիշել 35 տարի առաջ իմ սովորածը, որ պեսզի օգնեի նրան: Ստիպված դիմեցինք համացանցի ուսուցիչներին մեկին:

Մարդ արարածը հաճախ է իր իմացածի ու չիմացածի համար պայքարում: Այլ է Աստծո պարագան, որովհետև նա Ամենագետ է: Եսային գրում է. «Ո՞վ խորհրդատու դարձավ նրան՝ իբրև թե նրան խելամիտ դարձնելու համար: Կամ թե ո՞ւմ հետ խորհրդակցեց նա, որ իրեն խելամիտ դարձնի, և կամ ո՞վ նրան ցույց տվեց արդարադատությունն ու իմաստությունն ճանապարհը, կամ անցյալում ո՞վ փոխ տվեց իրեն, որ հատուցի նրան» (Ես. 40.13-14): Պատասխանը: Ոչ ոք:

Մարդիկ իմաստնություն ունեն, որովհետև ստեղծված են Աստծո պատկերով: Եվ մեր այդ իմաստնությունը Իր իմաստնությունից մի մասնիկն է: Մեր գիտելիքները սահմանափակ են, բայց Աստված գիտե ամեն բան, «մեծ է նրա զորությունը, նրա իմաստությունը սահման չունի» (Սաղմ. 146.5): Թեև մեր գիտելիքներն այսօր ավելանում են, բայց էլի սխալվում ենք: Հիսուսը, սակայն, ամեն բան գիտե, ինչպես մի աստվածաբան է նկատել՝ «անմիջապես, միաժամանակ, սպառիչ կերպով ու ճշմարտապես»:

Կարևոր չէ, թե մարդիկ որքան կարող են առաջանալ գիտությունից մեջ, միևնույն է՝ չեն կարող գերազանցել Քրիստոսին:

**Աղոթք** - Տե՛ր, փառաբանում եմ Քեզ, որպես Մեկին, որն ամեն բան գիտի: Սովորեցրու՛ ինձ Քո ուզածը և օգնի՛ր, որ Քեզ սիրեմ ամբողջ սրտով: Ամեն:

**Ամեն անգամ շնորհակալ լինենք Ասծուն, որովհետև Ինքն է ամենագետ Տերն ու մեծագույն ուսուցիչը:**

Տերը խոսեց ինձ հետ՝ ասելով: (Եր. 36.1)

## ՄՆԱՅՈՒՆ ԽՈՍՔԵՐ

**1** 9-րդ դարի սկզբին բրիտանացի պատմաբան Թոմաս Քարլայլը մի ձեռագիր տվեց փրիխոփա Ջոն Ստյուարտ Միլին, որպեսզի նա ուսումնասիրի: Բայց չգիտես՝ ինչպես, պատահականորեն, թե դիտմամբ ձեռագիրն այրվեց: Քանի որ դա ձեռագրի միակ օրինակն էր, Քարլայլը անտրտունջ որոշեց նորից գրել այրված գլուխները: Կրակը ոչնչացրել էր թղթի վրա գրածը, բայց անզոր էր նրա մտքում եղած պատմության հանդեպ: Եվ այդպիսի մեծ կորուստ ունենալուց հետո Քարլայլը ստեղծեց «Ֆրանսիական հեղափոխության պատմություն» կոթողային գործը:

Հուդայի թագավորության անկման օրերին Աստված Երեմիա մարգարեին ասաց. «Քեզ համար մատյա՛ն վերցրու և նրա մեջ գրի՛ր այն ամենը, ինչ ասել եմ քեզ» (Եր. 36.2): Փափուկ սրտով ասված այս պատգամով Աստված Իր ժողովրդին կոչ էր անում ապաշխարել, որպեսզի գերծ մնան թշնամական անխուսափելի գրավումից (Հմ.3): Երեմիան ասաց, ինչպես պատվիրվել էր իրեն: Մատյանը շուտով հասավ Հուդայի Հովակիմ թագավորին, որն այն պատռեց ու կրակը նետեց (Հմ. 23-25): Թագավորի այս քայլը վիճակն ավելի բարդացրեց: Աստված Երեմիային պատվիրեց նույն պատգամով ևս մի գրություն գրել.«Նրա սերնդից մարդ չի մնալու, որ նստի Դավթի աթոռին, և նրանց զիակաները ցերեկն ընկած պիտի մնան տոթի, իսկ գիշերը՝ ցրտի մեջ» (Հմ. 30):

Կարելի է գիրքը նետելով կրակի մեջ՝ այրել Աստծո Խոսքերը, բայց դա անօգուտ է, քանի որ դրանց հետևում եղած Խոսքը հավիտենական է:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ Քո խոսքերն ընդունեն իմ սրտում, և եթե նույնիսկ դժվար լինի, լսեմ դրանք: Խնդրում եմ՝ տու՛ր ինձ ապաշխարության սիրտ և ոչ արհամարհանքի: Ամեն:

**Որդես Ասծո զավակներ՝ կարևոր է ընդունել Ասծո Խոսքը և հնազանդվել:**



Որովհետև մեղքի վարձը մահ է, իսկ Աստուծո շնորհը՝ հավիտենական կյանք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: (Հռոմ.6. 23)

### **ԿՅԱՆՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՍԿԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Մ** որս անակնկալ մահից հետո ցանկությունն առաջացավ համացանցում գրություններ դնել՝ մարդկանց ներշնչելու, որ աշխարհում իրենց ունեցած ժամանակն օգտագործեն կյանքի կարևոր պահեր ստեղծելու համար: Հետևաբար դիմեցի այդպիսի գրառում կատարողների ուղեցույցի օգնությամբ: Սովորեցի՝ ինչ հարթակ օգտագործել, ինչպես ընտրել խորագիր և ինչպես էջը դարձնել գրավիչ: 2016-ին ծնվեց իմ առաջին էջը:

Պողոսը նույնպես գրել է «մի սկսնակի ուղեցույց», որը բացատրում է հավիտենական կյանք ստանալու ուղին: Հռոմեացիներին ուղղված նամակի 6.16-18-ում նա հաստատում է, որ մենք՝ բոլորս էլ մեղավոր ենք, քանի որ Աստծո դեմ ապստամբ ենք ծնվում, սակայն Հիսուսը կարող է օգնել մեզ, որ ազատվենք մեղքից (Հմ.18): Ապա նկարագրում է մեղքին և Աստծուն ու Նրան կյանք տվող միջոցներին գերի լինելու տարբերությունները (Հմ. 19-20): Նա շարունակում է՝ հաստատելով, որ «մեղքի վարձը մահ է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք» (Հմ.23): Մահ նշանակում է Աստծուց բաժանվել հավիտյան: Սա է Քրիստոսին մերժելու կործանարար արդյունքը: Բայց Աստված մեզ առաջարկել է Հիսուսով մի նոր կյանքի պարգև: Կյանքի այդ տեսակը սկսվում է երկրի վրա և շարունակվում հավիտյան՝ երկնքում՝ Իր հետ:

Պողոսի գրած սկսնակի ուղեցույցը կյանքի մասին երկու ընտրություն է առաջարկում. մեղքը, որը մահվան է տանում և Հիսուսի պարգևը, որ գեպի հավիտենական կյանք է առաջնորդում: Ստացի՛ր կյանքի Իր պարգևը և կիսի՛ր այն ուրիշների հետ:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ սիրում ու ներում ես ինձ: Վճարեցիր իմ պարտքը, որ ես չէի կարողանում վճարել և տվիր մի կյանք, որ չէի կարող գնել: Ամեն:

**Մեծ ու աննկարագրելի է արբերությունը մեղքին գերի լինելու և Աստծուն գերի լինելու միջև:**

Պաղատի՛ր Տիրոջը, և նա քեզ կտա սրտիդ ուզածները: (Մաղմ.36. 4)

## **ԱՍՏԾՈ ՏՐԱԳՐԵՐԸ ՔԵՉ ՀԱՄԱՐ**

**Վ**եց տարի շարունակ Ազնեսը փորձեց լինել «Հովվի կատարյալ կին»՝ հետևելով իր սկեսրոջ օրինակին: Նա կարծում էր, թե իր այդ դերում ինքը չէր կարող լինել նաև գրող ու գծագրող: Այդպես իր ստեղծագործական տաղանդը մեռցնելով՝ նա շատ ճնշվեց և նույնիսկ ուզում էր ինքնասպան լինել: Միայն դրացի Հովվի օգնությունը նրան դուրս բերեց խավարից, երբ աղոթեց իր հետ և առաջարկեց ամեն առավոտ երկու ժամ գրել: Դա Ազնեսին, հիրավի, արթնացրեց: «Ամբողջությամբ ինքնուրույն լինելու գիտակցումը իմ մեջ դրեց այն ստեղծագործական միտքը, որ Աստված տվել էր իր ընթացքը գտնելու համար», - գրեց նա:

Հետո նա մատնացույց արեց Դավթի երգերից մեկը, որն այն մասին էր, թե ինչպես է իր կոչումն ստացել: «Պաղատի՛ր Տիրոջը, և նա քեզ կտա սրտիդ ուզածները» (Մաղմ. 36. 4): Իր ճամփան հանձնեց Աստծուն՝ վստահելով, որ Նա կուղղի և կառաջնորդի իրեն (Հմ.5): Նա ոչ միայն գրելու ու գծագրելու ճանապարհ ցույց տվեց, այլև ուրիշներին օգնելու, որ ավելի լավ իր հետ հաղորդակցվեն:

Աստված մեզանից յուրաքանչյուրի համար ունի մի շարք «կնքված հրամաններ»: Դրանք միայն նրա համար չեն, որ իմանանք, թե իր սիրելի զավակներն ենք: Դրանք նաև այն հատուկ ձևերն են, որոնցով կարող ենք ծառայել իրեն: Երբ վստահենք իրեն և ուրախանանք իրենով, Նա կառաջնորդի մեզ:

**Աղոթք** - Ստեղծո՛ղ Աստված, ինձ ստեղծեցիր Քո պատկերով: Օգնի՛ր իմանալ և ընդունել ինձ տրված կոչումը, որ ավելի լավ սիրեմ ու ծառայեմ քեզ: Ամեն:

**Ասված մեզ էլ «կնքված հրամաններ» է սվել: Արժի հնազանդվել դրանց:**

Դա (մահն) է ամեն մարդու վախճանը, և դա կենդանի մարդու սրտին բարություն է տալիս: (Ժող.7.3)

## ԼԱՎ ԱՊՐԵԼ

Հարավային Կորեայում 2012-ից գործող ծառայությունը կարելի է անվանել «Զրի հուղարկավորություն ապրողների համար»: Ավելի քան 25 հազար մարդ է մասնակցել այդ բազմամարդ հուղարկավորություններին՝ հուսալով, որ դրանով կկարողանան բարելավել իրենց կյանքը: Կազմակերպիչներն ասում են. «Թաղման արարողությունների նպատակն է մասնակիցներին ներշնչել երախտագիտություն ոգի, օգնել հասկանալ իրենց կյանքի նպատակը, ընտանիքի ու բարեկամների միջև ձևավորել ներուժի ու հանդուրժողական հարաբերություններ:

Այս բառերը ասես ժողովողի գրքի հեղինակի իմաստությունների արձագանքը լինեն. «Մահն է ամեն մարդու վախճանը, և դա կենդանի մարդու սրտին բարություն է տալիս» (Ժող.7. 3): Մահը մեզ հիշեցնում է կյանքի կարճություն և այն մասին, որ մենք ընդամենը որոշ ժամանակ ունենք լավ ապրելու և սիրելու համար: Թուլացնում է կախվածությունը այնպիսի բաներից, ինչպիսիք են փողը, հաճույքն ու հարաբերությունները, սովորեցնում, որ «մեզ համար երկնքում գանձեր դիզենք, ուր ո՛չ ցեցը, ո՛չ ժանգը չեն ապականում, և ուր գողերը պատր չեն ծակում ու գողանում» (Մատթ. 6.20):

Հիշելով, որ մահը կարող է գալ ու մեր դուռը թակել, չհետաձգե՛նք մեր այցելությունը մեր ծնողներին, չուշացնե՛նք Աստծուն ծառայելու մեր որոշումը և մեր զավակների հետ ժամանակ անցկացնելը չփոխարինե՛նք մեր աշխատանքով: Աստծո օգնությամբ կկարողանանք սովորել ավելի իմաստուն կերպով ապրել:

**Աղոթք** -Սիրո՛ղ Աստված, օգնի՛ր ինձ, որ կարողանամ հիշել կյանքի կարճ լինելու մասին ու լավ կյանք ապրել այսօր: Ամեն:

**Կյանքի ամենօրյա դժվարությունների ու մարտահրավերների մեջ կարևոր է հիշել նաև մահվան մասին:**

Երբ նա՝ ճշմարտության Հոգին գա, նա ձեզ ամեն ճշմարտության մեջ կառաջնորդի: (Հովհ. 16. 13)

## **ՍԲ. ՀՈԳՈՒՅ ԵՎԱԾ ԽՈՐԱԹԱՓԱՆՑՈՒՄ**

**Ե**րբ Փրանսիացի զինվորը իր բանակի զիրքերի ամրապնդման համար փորում էր անապատի ավազը, գաղափար իսկ չուներ, որ կարևոր բացահայտում է անելու: Բահին հանդիպած քարը սովորական քար չէր, այլ այն Վարդագույն քարը, որի վրա երեք լեզվով արձանագրված էին Պտղոմեոս Թագավորի կառավարման օրենքները: 19-րդ դարի հնագիտական պեղումներից հայտնաբերված այդ արժեքավոր գտածոն, որը վկայում է Եգիպտոսի հնագարյան մշակույթի գոյություն մասին, այժմ պահվում է Բրիտանական թանգարանում:

Մեզանից շատերի համար Աստծո խոսքը քողարկված է Նրա խորհուրդների մեջ: Խաչելության նախորդ գիշերը Հիսուսն իր հետևորդներին խոստացավ, որ ուղարկելու է Սուրբ Հոգուն. «Երբ նա՝ ճշմարտության Հոգին գա, նա ձեզ ամեն ճշմարտության մեջ կառաջնորդի, որովհետև իր անձից չի խոսի, այլ կասի, ինչ որ լսի. և գալիք բաները կպատմի ձեզ» (Հովհ. 16. 13): Սուրբ Հոգին ասես այդ Վարդագույն քարը լինի, որ լույս է սփռում ճշմարտության վրա, որովհետև իրեն հայտնի են Աստվածաշնչի խորհուրդներից անդին եղող ճշմարտությունները:

Մեզ խոստում չի տրված, որ Աստվածաշնչում եղած ամեն բան լիովին կհասկանանք: Ուստի վստահենք, որ Հիսուսին հետևելու համար Սբ. Հոգու օգնությամբ կարող ենք հասկանալ ամեն բան:

**Աղոթք** - Ճշմարտության Աստված, օգնիր՝ կարողանամ վստահել ճշմարտության Հոգուն, որպեսզի ավելի լավ հասկանամ Քո տված իմաստությունը: Ամեն:

**Բնականաբար, Աստվածաճշունքը կլինեն հասկանալի, որոնք դժվար կլինի լիովին հասկանալ: Նման դեպքերում կարելի է դիմել Սբ. Հոգու օգնությանը:**

Ամեն բանի ժամանակը կա, ...լռելու ժամանակը և խոսելու ժամանակը: (ժող. 3.1.7)

### **ԽՈՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ**

**Ա**ֆրոամերիկացի կինը երեսուն տարի հավատարմորեն աշխատում էր համաշխարհային մեծ միսիոներական կազմակերպությունում, բայց երբ իր գործընկերների հետ խոսում էր ռասայական անարդարության մասին, լռության էր հանդիպում: Վերջապես 2020-ի գարնանը այդ թեմայով մի բաց քննարկում եղավ, և իր բարեկամները սկսեցին բացահայտ խոսել: Նա ուրախ էր, որ վերջապես սկսվեցին իրեն տանջող թեմայով քննարկումները, բայց և չէր կարողանում հասկանալ, թե ինչու էին մինչ այդ լռում: Որոշ իրավիճակներում, անշուշտ, լռությունը առաքինություն է: Ինչպես Սողոմոն թագավորն է գրել ժողովողի գրքում. «Ամեն բանի ժամանակը կա, և աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը,... լռելու ժամանակը և խոսելու ժամանակը» (ժող. 3.1.7):

Սակայն սնապաշտություն ու անարդարություն տեսնելիս լռելը միայն ցավ ու վնաս կտա: Գերմանացի աստվածաբան, լյութերական եկեղեցու հովիվ Մարտին Նիմյոլերը, որ բանտարկվեց նացիստական ռեժիմի դեմ ազատ խոսելու համար, պատերազմից հետո գրեց. «Նախ նրանք եկան սոցիալիստների համար, բայց ես չխոսեցի, որովհետև սոցիալիստ չէի: Հետո եկան հրեաների, կաթոլիկների և ուրիշների համար, ես էլի չխոսեցի, որովհետև հրեա չէի: Վերջապես եկան ինձ համար, բայց այդ ժամանակ արդեն մեկը չկար, որի հետ խոսեի»: Անարդարության դեմ խոսելու համար քաջություն է անհրաժեշտ և սեր: Սակայն Աստծո օգնությունը խնդրելով՝ մենք կարող ենք անդրադառնալ, որ հիմա է խոսելու ժամանակը:

**Աղոթք** - Սիրող Հայր, լեզուս ու սիրտս ազատի՛ր թշնամու ճանկերից: Ձի՛նի՛ր ի՛նձ, որ զգամ ու տեսնեմ ազգային անարդարությունը և կարողանամ խոսել նրանց օգտին, ովքեր տառապում են այդ մեղքից: Ամեն:

**Ազգային ու ռասայական անարդարությունը տեսնելիս հարկավոր է բարձրաձայնել այդ մասին:**

Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն: (Գաղ. 5. 22-23)

## **ՉՈՐԱԲԵՐԵԼՈՒ ԺԱՍԱՆԱԿԸ**

**2** 020-ի փետրվարին, երբ նոր սկսվում էր թագավարակի համաճարակը, ուշադրությունս գրավեց օրաթերթի հոդվածագրի հարց-մտահոգությունը: Նա հարցնում էր, թե մենք ուզում ենք արդյոք մեկուսանալ, փոխել աշխատելու, ճամփորդելու, գնումներ կատարելու մեր սովորությունները, որպեսզի ուրիշները չհիվանդանան: «Սա ոչ թե առողջապահական միջոցառումների, այլ մեր կամեցողության՝ ուրիշների ապահովությունը մեր անձից գերադասելու քննություն է», - գրեց նա: Եվ առաքինության անհրաժեշտությունը դարձավ առաջին էջի լուրը: Ուրիշների կարիքներին նախապատվություն տալը դժվար բան է: Բայց բարեբախտաբար մենք մենակ չենք այդ գործում: Կարող ենք խնդրել Սուրբ Հոգուն, որ մեզ անտարբերության փոխարեն սեր տա, տխրության փոխարեն՝ ուրախություն, մտահոգության փոխարեն՝ խաղաղություն, կոպտության փոխարեն՝ հեզություն: Մեզ տա համբերատարություն, որ մի կողմ դնենք դյուրագրգիռ վիճակները, քաղցրություն՝ այլոց հանդեպ հոգատար լինելու համար, բարություն՝ նրանց կարիքները տեսնելու, հավատարմություն՝ մեր խոստումները հարգելու և ժուժկալություն՝ եսակենտրոնությունից մեզ դուրս բերելու համար (Գաղ. 5.22-23): Քանի որ մենք ինքներս կատարելապես չենք կարողանա անել այդ բոլորը, ուստի միշտ պիտի խնդրենք Հոգու առաքինության պտուղները (Եփ. 5.18): Հեղինակ Ռիչարդ Ֆոսթերը սրբությունը նկարագրել է որպես անհրաժեշտ բան անելու կարողություն: Եվ նման սրբության կարիքն ամեն օր կա, և ոչ միայն համաճարակի ժամանակ: Ունեն՞ք հանուն ուրիշների զոհողություն անելու կարողություն:

**Աղոթք** - Սուրբ Հոգի, լցրու՛ ինձ Քո զորությամբ և դարձրու՛ ինձ առաքինի մի անձ: Ամեն:

**Երբ ուրիշների համար զոհողություն անելու լինե՛ք, խնդրե՛ք Հոգու զորությունը:**



Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և դու թողությոյն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտութեանը: (Սաղմ. 31. 5)

## **ՆԵՐՍԻՑ ՔԱՆԴՎԱԾ**

**Ե**րբ ես պատանի էի, մայրս մեր հյուրասենյակի պատին մի որմնանկար փակցրեց, որը պատկերում էր ավերված հունական տաճար՝ գետնին ընկած սյուներ, ջարդված շատրվան և կոտրված մի արձան: Երբ նայում էի հելլենական ճարտարապետութեան երբեմնի գեղեցիկ այդ նմուշին, ուզում էի հասկանալ, թե ինչն էր եղել դրա կործանման պատճառը: Ու երբ ուսումնասիրեցի պատմությունը, իմացա, որ ժամանակին մեծ ու ծաղկուն քաղաքակրթությունը վերացել է, որովհետև ներսից է փտած ու քանդված եղել:

Մեր շրջապատում եղող մեղավոր այլասերումն ու կործանումը կարող են մեզ նեղացնել և մենք այդ ամենը բացատրում ենք ազգերի ու մարդկանց աստվածամերժությունը: Բայց պետք է նաև մի ներքին հայացք ձգել: Աստվածաշունչը մեզ զգուշացնում է չլինել կեղծավոր, երբ ուրիշներին կոչ ենք անում ետ դառնալ մեղավոր ճամփաներից, ինքներս մեր անցած ուղին նայենք, մեր սիրտը քննենք, ուրիշի աչքի շյուղը նկատելով՝ մեր աչքի գերանը չմոռանանք (Մատթ. 7.1-5):

31-րդ սաղմոսը ևս մեր մեղքերը տեսնելու և խոստովանելու մարտահրավեր է: Միայն մեր անձնական մեղքերը գիտակցելով ու ընդունելով կարող ենք ազատ լինել մեղքի զգացումից և վայելել փրկության ուրախությունը (Հմ. 1-5): Եվ իմանալով, որ Աստված այդ դեպքում մեզ ամբողջական ներում է առաջարկում, մենք կարող ենք այդ հույսի մասին հայտնել ուրիշներին, որոնք նույնպես պայքարում են մեղքի դեմ:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո ներման պարգևի համար, որը ջնջում է իմ մեղքը: Օգնիր, որ նախքան ուրիշներին մեղադրելը կարողանամ քննել իմ սիրտը: Ամեն:

**Կարևոր ու շատ էական է անդրադառնալ մեր մեղքերին ու խոստովանել դրանք:**

Նրանք են, որ վկայում են իմ մասին: (Յովհ. 5.39)

## ՍՈՎՈՐԵԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

**Ջ**. Փաքերը (1926-2020) իր դասական «Ճանաչել Աստծուն» գրքում խոսում է չորս հայտնի հավատացյալների մասին, որոնցից յուրաքանչյուրը հատուկ ջանք է գործադրել Աստվածաճանաչության մեջ՝ անելով Սուրբ Խոսքի իմացության մեջ: Փաքերը շեշտում է, որ գիտնականներին հատուկ Խոսքը սովորելը և ուսումնասիրելը դեռևս չի նշանակում Աստծուն ճանաչել: «Սովորական Աստվածաշունչ կարդացողն ու քարոզ լսողը, որը լցված է Սուրբ Հոգով, ավելի խորը կարող է իմանալ իր Աստծուն ու Փրկչին, քան ավելի շատ կարդացած գիտնականը, որը աստվածաբանության ասպարեզում կարող է և ճիշտ լինել»,- ասում է նա:

Դժբախտաբար, Աստծո Խոսքը ուսումնասիրողներից ոչ բոլորն են դա անում խոնարհ սրտով ու նպատակ ունենալով ավելի լավ ճանաչել ու նմանվել Փրկչին: Հիսուսի օրոք կային մարդիկ, որ կարդացել էին Հին Կտակարանը, սակայն չէին տեսել Նրան, ում մասին գրված էր Խոսքը: «Քննեցե՛ք գրքերը, որոնցով դուք ուզում եք հավիտենական կյանք ունենալ, և նրանք են, որ վկայում են իմ մասին» (Հովհ. 5. 39):

Պատահե՞լ է, որ Աստվածաշունչը կարդալիս երկփեղկված զգաս, կամ բոլորովին մի կողմ դնես Սբ. Գիրքը կարդալու բարի սովորությունը: Աստվածաշունչը «կրծելով» ուսումնասիրողները շատ ավելի լավ են հասկանում, քան այն ուղղակի կարդացողները:

Նրանք աղոթքով ու ուշադրությամբ փորում են Աստվածաշունչը, մինչև որ իրենց աչքերն ու սրտերը բացվեն՝ տեսնելու և սիրելու Խոսքի մեջ հայտնվող Հիսուսին:

**Աղոթք** - Զայր, բաց աչքերս, որպեսզի Աստվածաշունչում կարողանամ տեսնել Տիրոջը, սիրել ու ծառայել Նրան: Ամեն:

**Պարզադեպ խոսքը կարդալը բավարար չէ, դեպք է լավ առակերս լինել ու Նրա խորքը թափանցել:**





Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք, որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ: (Ա. Պետ. 4.10)

### **ԱՊՐԻՐ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**Տ**աւր տարեկան Չելսին, ստանալով արվեստի մի ընտիր հա-վաքածու, մտածեց, որ Աստված արվեստը գործածել է իրեն օգնելու համար, որպեսզի իր տխրութիւնը փարատվի: Ու երբ իմացավ, որ կան շատ մանուկներ, որոնք չունեն արվեստի հա-մար անհրաժեշտ բաները, որոշեց օգնել նրանց: Եվ իր տարե-դարձի հավաքույթին ընկերներին խնդրեց, որ իրեն նվիրեն այդ-պիսի պարագաներ, որոնք ինքը տալու է կարիքավոր երեխանե-րին: Հետո Չելսիի ընտանիքի օգնութեամբ այդ նախաձեռնու-թիւնը վերածվեց բարեգործական գործունեութեան: Նա ավելի շատ մարդկանց էր առաջարկում իրեն օգնել, որպեսզի կարողա-նա ավելի շատ մանուկների կարիքները հոգալ: Նույնիսկ բարե-գործական տուփերն ստացող խմբերի համար դասընթացներ էր կազմակերպում: Տեղական մամուլը հարցազրույց կազմակեր-պեց նրա հետ, և նրան օգտակար եղողները շատացան: Չելսիի բարեգործական ընկերութիւնը արվեստի համար անհրաժեշտ պարագաներ էր առաքում աշխարհի տարբեր երկրների երեխա-ներին: Այս երիտասարդ աղջկա օրինակը ցույց է տալիս, թե Աստված ինչպես կարող է մեզ օգտագործել, երբ մենք պատ-րաստ լինենք ուրիշներին ծառայել: Չելսիի կարեկից սիրտն ու բարի կամեցողութիւնը արտացոլում է հավատարիմ տնտեսի սիրտը: Պետրոս առաքյալը քաջալերում է բոլոր հավատացյալ-ներին. «Ամենից առաջ իրար նկատմամբ ջերմ սե՛ր ունե-ցեք, ... Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակա-րարեցեք՝ որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ» (Ա. Պետ. 4.8-11): Մեր սիրո փոքր արտահայտութիւնը նույնիսկ կարող է ներշնչել ուրիշներին, որ միանան մեզ:

**Աղոթք** - Հավատարիմ Հայր, խնդրում եմ՝ տու՛ր ինձ այն, ինչ պետք է Քեզ ծառայելու համար՝ խոսքով ու գործերով սիրել յուրիշներին: Ամեն:

**Ասծո կոչն է՝ ուրիշներին ծառայելով՝ Պատրաստ լինենք Իրեն ծառայելու:**

Այս աշխարհի որդիներն իրենց ցեղի մեջ լույսի որդիներից իմաստուն են: (Պուկ. 16. 8)

### **ԻՄԱՍՏՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ**

**Թ**ագավարակի համաճարակը պատճառ դարձավ, որ աշխարհի շատ դպրոցներ փակվեն: Չինաստանում ուսուցիչներն սկսեցին օգտվել «Դինգ թոք» անունով թվային ծրագրից, որը հնարավորություն էր տալիս առցանց դասեր անցկացնել: Շուտով աշակերտները հասկացան, որ այդ ծրագրի արդյունավետությունն այնքան էլ բարձր չէ, ցածր գնահատական դրեցին, և մեկ օրում ծրագրի վարկանիշն ընկավ:

Հիսուսը չէր տպավորվի պատասխանատվությունից խուսափող աշակերտներով, բայց կարող էր հիանալ նրանց հնարամտությամբ: Նա մի պատմություն է պատմում գործից ազատված մի տնտեսի մասին, որն իր վերջին աշխատանքային օրը գեղչեր է անում իր գործատիրոջ պարտապաններին՝ փոխելով նրանց մուրհակները: Տերը գովում է այդ մարդու ուշիմությունը և ասում. «Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որ երբ պակասություն ունենաք, հավիտենական բնակարանների մեջ ձեզ ընդունեն» (Պուկ.16.9): Երբ հարցը վերաբերում է փողին, շատերը կարող են մտածել, թե որքան կկորցնեն: Իսկ իմաստուն մարդիկ նայում են, թե ինչ կարող են անել: Հիսուսն ասում է, որ ուրիշներին տալով՝ «բարեկամներ են շահում»: Ո՞վ է որևէ խմբի առաջնորդը: Նա, ով վճարում է հաշիվը: Տալով նույնպես կարելի է վաստակել «հավիտենական բնակարաններ», որովհետև մեր ունեցածն ուրիշների հետ կիսելու կամեցողությունը ցույց է տալիս Հիսուսի հանդեպ մեր վստահությունը: Նույնիսկ եթե փող չունենք, մենք ունենք ժամանակ, հատություններ և լսողություն: Խնդրենք Աստծուց, որ մեզ ցույց տա, թե ինչպես կարելի է ուրիշներին ծառայել:

**Աղոթք** - Տե՛ր Յիսուս, հանուն Քեզ ուզում եմ տալ ուրիշներին: Ամեն:

*Ասված մեզ սվել է իմաստություն՝ մեր ժամանակը, փողն ու հնարավորությունները գործածելով ուրիշներին օգնելու համար:*

Որովհետև դուք ծառայության հոգին չընդունեցիք, որ դարձյալ վախեցնաք: (Ռոմ. 8.15)

### **ԽՈՍԻՐ, ՎՍՏԱՅԻՐ, ԶԳԱ՛**

**Տ**րեզերիկ Բյուխներն իր հայտնի «Գաղտնիքներ պատմել» հիշատակարանում գրում է. «Մի՛ խոսիր, մի՛ վստահիր, մի՛ զգա»-ն այն օրենքն էր, որով մենք ապրում էինք: Եվ վայ նրան, ով այն կխախտեր»: Ամերիկացի քարոզիչ-աստվածաբանը նկարագրում է իր փորձառությունը, որը կոչում է «չգրված ընտանիքների օրենք»: Իր ընտանիքի պարագայում այդ «օրենքի» համաձայն՝ նա իրավունք չուներ խոսելու իր հոր ինքնասպանության մասին կամ սգալու՝ չուներնալով մեկը, որին կվստահեր իր ցավը:

Մեզանից շատերն են մի տեսակ վարժվել ապրելու սիրո այն տարբերակով, որը պահանջում է անկեղծ չլինել կամ մեզ տանջող բաների մասին չխոսել: Այդպիսի «սերը» ապավինում է վախի հսկողությունը և յուրատեսակ գերություն է, ըստ էության:

Իսկ որքա՛ն տարբեր է սիրո՝ Հիսուսի հրավերը, որին մենք հաճախ ենք հանդիպում: Վախի մի տեսակ կա, որ միշտ վախենում ենք կորցնել: Ինչպես Պողոսն է բացատրում, Քրիստոսի սիրո միջոցով մենք կարող ենք վերջապես հասկանալ, թե ինչ է նշանակում վախի մեջ ապրել (Հռոմ.8.15) և սկսել հասկանալ «փառավոր ազատություն» տեսակը (Հմ.21), ինչը հնարավոր է լինում, երբ իմանում ենք, որ մենք սիրված ենք խորապես, իրապես ու առանց նախապայման: Երբ ազատ ենք խոսել, վստահել և կրկին զգալ, թե ինչ է նշանակում ապրել առանց վախի:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, լինում եմ պահեր, երբ ես վախեցնում եմ անկեղծ լինել՝ մտածելով, որ այդպիսով չեմ սիրվի: Բուժի՞ր սիրոս և օգնի՞ր հավատալ ու ապրել Քո սիրո ազատության մեջ: Ամեն:

**Զգրված ու չհայտարարված «օրենքներ» կան, բայց Քրիստոսով կարելի է հեռու մնալ դրանց ճնշումից:**

Այս դեպքերից հետո Աստված փորձեց Աբրահամին: (ԾՆՈ. 22.1)

## **ՓՈՐՁԱՐԿՈՒՄ**

**Ե**րբ առաջին անգամ զավակներին տարա բարձրանալու Կոլորադոյի 14-րդ լեռնագագաթը, որը 4270 մետր բարձրություն ունի, նրանք շատ նյարդային էին: Կկարողանայի՞ն հասնել լեռան գագաթը: Պատրաստ էին արդյոք այդ մարտահրավերին: Կրտսեր որդիս ճանապարհին մի քանի անգամ կանգ առավ և ասաց.«Հայրիկ, էլ չեմ կարող գնալ»: Բայց ես հավատում էի, որ այս փորձարկումը լավ է լինելու նրանց համար և ուզում էի, որ ինձ վստահեն: Այդպես էլ եղավ, կրտսեր որդիս մեզանից շուտ հասավ գագաթ: Ես շատ ուրախ էի, որ նա, վախենալով հանդերձ, վստահեց ինձ: Հիանում եմ նաև Իսահակի՝ հոր հանդեպ վստահությունը, երբ նրանք էլ իրենց լեռն էին բարձրանում: Իսկ Աբրահամի մասին խոսելիս նույնիսկ համեմատություն եզրեր չկան այն վստահության հետ, որ նա ուներ Աստծո հանդեպ, երբ դանակ էր բարձրացնում իր սեփական որդու վրա (Ծնն. 22. 10): Նույնիսկ շփոթված ու ցավով, սակայն նա հնազանդվեց: Եվ Աստծո ողորմածությունը հրեշտակը ձայն տվեց. «Զեռք մի՛ տուր պատանուն» (Հմ.12), որովհետև Աստված Իսահակի մահը չէր նախատեսել: Զգուշորեն զուգահեռներ անցկացնենք այս եզակի պատմության հետ՝ նկատի առնելով դրա առաջին տողը. «Աստված փորձեց Աբրահամին» (Հմ.1): Այդ փորձելու միջոցով Աբրահամն ինքն էլ հասկացավ, թե որքան է վստահում Աստծուն: Նա գտավ Աստծո սիրող սիրտն ու խոր նախատեսությունը: Շփոթությունների, խավարի ու փորձությունների մեջ մենք սովորում ենք ճշմարտություններ մեր և Աստծո մասին: Նաև տեսնում ենք, որ այդ փորձությունները մեզ մղում են ավելի վստահելու իրեն:

**Աղոթք** - Հայր, չգիտեմ՝ զգացածս Քո փորձարկումն է, թե ոչ, բայց ինչ էլ լինի, ուզում եմ վստահել Քեզ ու ապագան Քեզ հանձնել: Ամեն:

**Ասված արքեր փորձություններ է ցալիս մեզ, կարևորը իրեն վստահելն է:**

Պողոս... Աստուծու Ավետարանի համար ընտրված: (Հռոմ.1.1)

## **ԸՆՏՐՎԱԾ ԼԻՆԵԼ**

**Շ**րի Լանկայի եռանիվ տաքսիները, որ հայտնի են տուկ-տուկս անունով, հարմար ու հաճելի փոխադրամիջոց են շատերի համար: Կոլումբո քաղաքի բնակիչ Լորենյի համար այդ մեքենաները նաև միսիոներություն լավ դաշտ էին: Մի օր վարորդներից մեկը հաճույքով խոսել էր կրոնից, և նա որոշեց հաջորդ հանդիպմանը նրա հետ խոսել բարի լուրի մասին:

Հռոմեացիներին ուղղված նամակը Պողոսն սկսում է հայտարարությունում, որում ինքն իր մասին ասում է որպես «Աստուծու Ավետարանի համար ընտրված» (Հռոմ.1.1): Ավետարանը հունարեն evangelion բառն է, որը նշանակում է «բարի լուր»: Պողոսն ըստ էության ասում է, որ իր հիմնական նպատակը Աստուծո բարի լուրը պատմելն է:

Իսկ ո՞րն է այդ բարի լուրը: Հռոմ.1.3-ն ասում է, թե Աստուծու Ավետարանը «Իր Որդու մասին է»: Բարի լուրը Հիսուսն է: Աստված ուզում է ասել աշխարհին, որ Հիսուսն եկավ մեզ փրկելու մեղքից ու մահից, և մեզ է ընտրել որպես իր հաղորդակցության միջոց: Խոնարհության ի՛նչ փաստ:

Բարի լուրը ուրիշներին հայտնելը առանձնաշնորհ է Հիսուսի բոլոր հավատացյալների համար: Մենք «առաքյալ լինելու պաշտոնը ստացանք, որ բոլոր ազգերին հավատքի հնազանդեցնենք իր անվան համար» (Հմ.5): Աստված մեզ ընտրել է, որ Ավետարանի ուրախ լուրը հաղորդենք մեր շուրջը եղողներին, կլինի դա տաքսիում, թե այլուր: Լորենյի նման մենք էլ մեր առօրյայում առիթներ փնտրենք պատմելու բարի լուրի մասին, որ Հիսուսն է:

**Աղոթք** - Հիսու՛ս, շնորհակալ եմ, որ ինձ ընտրել ես որպես Քրիստոսի լուրի խոսնակ: Թող Քրիստոսի ինձ քաջություն ու սեր տա, որ այսօր վկայեմ Քրիստոսին: Ամեն:

**Ասված մեզ ընտրել է ու սվել որոշ շնորհներ՝ Իր բարի լուրը  
սարածելու համար:**

Մեղք գործեցիր դու, նաև քո երկու բարեկամները, քանի որ իմ առաջ ճշմարիտ բան չասացիր, ինչպես իմ ծառա Յորը: (Յոր. 42.7)

## **ՆՊԱՏԱԿ՝ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԵՉ**

**Ե**ս ու կրնս դասախոսելու էինք հրավիրվել մի եկեղեցում: Քննարկման ժամանակ կրնս դիմեց ինձ.«Ուզում ես ասել, որ իմ սխալը չէ՞»: Հիվանդություն ունեի: Աղոթեցի, ծոմ պահեցի, մեղքերս խոստովանեցի, արեցի այն ամենը, ինչ ասել ես, բայց դեռ հիվանդ եմ ու մտածում եմ, որ ես եմ մեղավորը»: Զարմացա, նաև տխրեցի կնոջս խոսքերից: Թեև նա իր հարցի լուծման հոգևոր «բանաձևն» ուներ, բայց իրեն էր մեղադրում անհաջողության համար: Ամենավատն էլ այն էր, որ տառապանքի այդ բանաձևային մոտեցումը վաղուց հերքված էր:

Այդ բանաձևի համաձայն՝ եթե տառապում ես, ուրեմն անպայման մեղք ես գործել: Երբ Հորը կորցրեց իր զավակներին, առողջությունն ու ունեցվածքը, նրա ընկերները նույն բանաձևով մտածեցին նրա մասին: Կասկածելով Հորի մեղավոր լինելուն՝ Եղիփազն ասաց. «Այն ո՞ր անմեղն է կորել-գնացել, կամ երբևէ արդարները եղե՞լ են արմատախիլ» (Հոր. 4.7) : Բաղդատ Սոբեցին նույնիսկ համարձակվեց ասել.«Քո զավակները մեղանչեցին նրա առաջ, ինքն էլ պատիժներ ուղարկեց անօրենությունների համար» (Հմ. 8.4): Անտեղյակ լինելով Հորի աղետների իրական պատճառներին (1.6-2.10)՝ նրանք մեղադրեցին իր ցավերի համար, հետագայում ստանալով Աստծո նախատիքը (Հմ. 42.7):

Տառապանքն ու ցավը կյանքի մի մասն են: Հորի նման մեզ հետ էլ կարող են պատահել բաներ, որոնց պատճառները մենք չենք իմանա: Սակայն Աստված քեզ համար մի նպատակ ունի, որ քո ցավերից անդին է: Մի՛ հուսահատվիր պարզեցված բանաձևերով:

**Աղոթք** - Ո՛վ մեծ բժիշկ, տու՛ր ինձ Քո խոսքը՝ բուժելու ինձ, և ոչ թե ցավի պահին նեղելու:

**Մեղքի համար առադրելու բանաձևը շարունակում է գործել, բայց Աստված նեղություններն ու ցավերը այլ դասձաններով է փոխում մեզ:**



Թե ինչ որ ըստ նրա կամքի խնդրում ենք, լսում է մեզ: (Ա.Յովհ. 5.1)

## ԱՍՏՎԱԾ ԼՍՈՒ՞Մ Է

**Ե**րբ ծառայում էի իմ հաճախած եկեղեցու հոգատարության խմբակում, պարտականություններիցս մեկն էր աղոթել պաշտամունքի ժամանակ նստարանի քարտերին զբված խնդրանքների կատարման համար: Դրանք կարող էին ամենատարբեր թեմաներով լինել. մեկը հորաքրոջ առողջության համար էր աղոթում, մեկ ուրիշը նյութական կարիքի մեջ էր, տատիկը ուզում էր, որ իր թոռնիկը դառնա Աստծուն և այլն: Իմ աղոթքների արդյունքի մասին հազվադեպ եմ լսել, որովհետև խնդրանքները հիմնականում անանուն էին, և ես հնարավորություն չունեի իմանալ, թե Աստված ինչ պատասխան է տվել դրանց: Պետք է խոստովանեմ, որ երբեմն նույնիսկ մտածել եմ, թե արդյո՞ք Նա իրապես լսում է այդ բոլորը, և իմ աղոթքները որևէ արդյունք տալի՞ս են: Մեզանից շատերն են այդ հարցը տալիս: Հիշում եմ նաև իմ խնդրանքները, որոնք անպատասխան են մնացել: Տարիներ շարունակ աղերսում էի երեխա ունենալ, ուզում էի, որ հայրս հավատա Աստծուն, բայց նա այդպես էլ մահացավ առանց որևէ խոստովանություն:

Բայց պատմություն մեջ կան նաև անհամար օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես Աստված լսեց Իսրայելի ժողովրդի հեծությունը (Ել. 2.23), Մովսեսին՝ Սինա լեռան վրա (Բ. Օր. 9.19), Հեսուին՝ Գաղգաղայում (Հեսու 10.14), Աննայի աղերսը զավակ ունենալու մասին (Ա. Թագ.1. 10-17), Դավթի աղաչանքը՝ Սավուղից ազատվելու համար (Բ.Թագ. 212.7): Ա.Հովհ. 5. 14-ը ասում է. «Թե ինչ որ ըստ նրա կամքի խնդրում ենք, լսում է մեզ»: Այստեղ օգտագործված լսել բառը նշանակում է ուշադրություն դարձնել և որպես լսելու արդյունք՝ պատասխանել: Աստված լսում է մեր խնդրանքները:

**Աղոթք** - Հայր, գալիս եմ խնդրելու և վստահ եմ, որ Դու ինձ լսում ես, որովհետև այդպես ես ասում: Ամեն:

**Ամեն բան աղոթքով հասցրու Ասծուն՝ վստահ լինելով, որ Նա ուշադրություն դարձնում ու լսում է մեզ:**

Տեր Աստված քո մեջ է և ուրախություն կրերի քեզ: (Սոփ. 3.17)

## **ԱՍՏՎԱԾ ԵՐԳՈՒՄ Է ՔԵԶ ՀԱՄԱՐ**

**Մ**եր որդու ծնվելուց 17 ամիս անց Աստված մեզ դուստր պարգևեց: Ուրախությունս կրկնապատկվեց, բայց անհանգիստ էի: Եթե տղա երեխայի մասին որոշ բաներ արդեն գիտեի, աղջկա պարագան բոլորովին նորություն էր: Սառա դրեցինք փոքրիկի անունը, և իմ պարտականություններից մեկն էր օրորել նրան, որ քնի, մինչև կինս մի փոքր հանգստանա: Չգիտեմ՝ ինչու փոքրիկիս օրորելիս սկսեցի երգել «Դու իմ արևի լույսն ես» երգը: Այնքան սիրեցի այդ երգը, որ միշտ երգում էի և հիմա էլ արդեն քսանամյա դստերս անվանում եմ Արևի լույս:

Մենք ընդհանրապես պատկերացնում ենք, որ հրեշտակներն են երգում: Իսկ երբևէ մտածե՞լ ենք, որ Աստված էլ կարող է երգել: Այո՛, Աստված երգում է: Ավելին, երգում է հենց քե՛զ համար: Սոփոնիան վստահ է Երուսաղեմին տված իր պատգամում.«Տեր Աստված քո մեջ է և ուրախություն կրերի քեզ» (Սոփ. 3.17): Թեև այս պատգամը անմիջականորեն Երուսաղեմին է վերաբերում, սակայն պարզ է, որ Աստված մեզ՝ Իր զավակների համար նույնպես երգում է և ուրախություն բերում: Իսկ ի՞նչ երգ է նա երգում: Աստվածաշունչը այդ մասին հստակ չի ասում: Բայց պարզ է, որ այդ երգը ծնված է Իր սիրուց: Հետևաբար, կարող ենք վստահ լինել, որ այն ճշմարիտ է, բարի, պարկեշտ, արդար, սուրբ, սիրալիք, գովելի ու հիանալի (Փիլ. 4.8):

**Աղոթք** -Բարի՛ Հայր, խորհուրդը, որ ինձ համար երգում ես, ինձ հանգստացնող վստահության երաշխիքն է: Ամեն:

**Ասված այնքան է սիրում մեզ, որ մեզ համար հասուկ երգ է երգում:**



Մեզ փրկեց և սուրբ կոչումով կանչեց: (Ք. Տիմ.1.9)

## ՆՈՐ ԿՈՉՈՒՄ

**Բ**անդայի առաջնորդ Գեյսին ու ընկերները մտնում էին տներ, թալանում, խանութներ կողոպտում, մեքենաներ առևանգում, կռիվներ հրահրում, մինչև որ Գեյսին ձերբակալվեց ու բանտարկվեց: Բանտում նա դարձյալ առաջնորդ մնաց, մեկը, ով խռովությունների ու կռիվների ժամանակ դանակ է փոխանցում:

Որոշ ժամանակ անց նրան տեղափոխեցին մենախուց: Մի օր, երբ մտածում էր իր անցած ճանապարհի մասին, կինոնկարի նման աչքի առաջ եկան իր կյանքի կարևոր դեպքերն ու իրադարձությունները և տեսավ Հիսուսին, որին տանում էին խաչելու, և Նա, ասաց. «Այս ամենը անում եմ քեզ համար»: Գեյսին ընկավ գետնին ու լալով խոստովանեց մեղքերը: Հետո այս տեսիլքի մասին պատմեց բանտի հոգևոր տեսուչին, որը մի քիչ ավելին բացատրեց Հիսուսի մասին և նրան տվեց մի Սուրբ Գիրք: Գեյսին դա ընդունեց որպես իր հավատքի ճամփորդության սկիզբ: Երբ նա դուրս եկավ իր խցից՝ միանալու մյուսներին, բանտարկյալները վատ ընդունեցին նրան, սակայն նա խաղաղություն զգաց իր մեջ, որովհետև նոր կոչում էր ստացել՝ Հիսուսի մասին պատմել մյուս բանտարկյալներին:

Պողոսը խոսում է Քրիստոսի զորություն մասին, որ կյանքեր է փոխում, և մեզ կանչում է հետևելու Հիսուսին ու ծառայելու (Ք.Տիմ. 1.19): Երբ ընդունենք Նրան, մենք էլ կուզենանք Քրիստոսի սիրո կենդանի վկան դառնալ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Որդուդ միջոցով մի նոր կոչում ես տալիս: Շնորհակալ եմ նաև, որ հնարավորություն ես տալիս Սբ. Հոգուն՝ մեր մեջ բնակվելու և մեզ զորացնելու, որպեսզի ծառայենք Քեզ: Ամեն:

**Եթե վերսին ծնվելու փորձառություն ունես, ուրեմն դու էլ բարի լուրը տարածելու և Հիսուսի վկան լինելու նոր կոչում ունես:**

Դու հաստատեցիր լուսինը ժամանակը չափելու համար: (Մաղմ.103.19)

## ՓՈՒՏԵԼ ԵՂԱՆԱԿԸ

Հաստատակամորեն որոշելով թեկուզ փոքր ձևերով պայքարել խավարի դեմ՝ Լիյսան սկսեց մի դժուար վրա գրել այն բաների անունները, որոնց համար ինքը շնորհակալ էր: «Արևի լույսը» առաջինն էր: Շուտով ցանկում սկսեցին նոր անուններ ավելացնել նաև այցելուները: Երբեմն անհեթեթ գրություններ լինում էին, իհարկե, բայց ընդհանուր առմամբ հայտնվում էին դրական ու ցանկալի բաներ. օրինակ՝ «տաքուկ տուն», «աշխատող ավտոմեքենա» և այլն: Այսպիսով դժուարը պատվեց այսպես կոչված «երախտագիտության շղթայով»:

103-րդ սաղմոսը ներկայացնում է Աստծուն փառաբանող աղոթքների մի շարք այն բաների մասին, որոնք մենք կարող ենք նաև չնկատել: «Աղբյուրները դեպի ձորերն ուղղեցիր»(Հմ.10), «Մարդկանց կարիքների համար լեռներում խոտ աճեցրիր ու բանջար, և հողից հաց հանեցիր»(Հմ.14),-փառաբանում է սաղմեսերգուն: -Նույնիսկ գիշերն է դիտվում որպես բարի ու հարմար բան.«Դու խավարն ստեղծեցիր, ու գիշեր եղավ, որի մեջ շրջում են բոլոր գազաններն անտառի» (Հմ.20): Բայց հետո, «Արևածագին նրանք հավաքվում են և հանգչում իրենց որջերում: Մարդ մինչև երեկո գնում է իր գործին ու վաստակին իր ձեռքերի»(Հմ.22-23): Այս բոլոր բաների համար «պիտի օրհնեմ Տիրոջն իմ կյանքում, սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն՝ քանի դեռ կամ»(Հմ.33):

Աշխարհում, որը չգիտե ինչպես վարվել մահվան իրականության հետ, նույնիսկ ամենափոքր փառաբանության կանչը կարող է դառնալ հույսի փայլուն պատկեր:

**Աղոթք** - Չայր, շնորհակալ եմ այս աշխարհում քո ստեղծած բազմաթիվ բարիքների համար: Դարձրու՛ իմ կյանքը շնորհակալական նվիրում Քեզ: Ամեն:

**Մահն ու սիրելիի կորուստը անխուսափելի են, բայց Տիրոջ հանդեպ հույսի համար կարելի է մեկ առ մեկ թվել Աստծո սված օրհնությունները:**

Ցնծության աղաղակով դիմեցե՛ք Աստծուն: (Սաղմ. 46.1)

## **ՅՆՉԵՑՐՈՒ՛ ԶԱՆԳԸ**

**Ե**րեսուն կուրս ճառագայթային բուժում ընդունելուց հետո ի վերջո հաստատվեց, որ Դարլան ձերբազատվել է քաղցկեղից: Նա անհամբեր սպասում էր, թե երբ է հիվանդանոցում ընդունված կարգի համաձայն՝ հնչելու իր բուժման ավարտն ազդարարող զանգը, և հուզմունքից այնքան եռանդուն հնչեցրեց, որ այն պոկվեց տեղից:

Դարլայի այս պատմությունն ինձ համար պարզ է դարձնում Սաղմոսերգուհի նախատեսությունը, երբ Իսրայելի ժողովրդին հրավիրում էր տոնել Աստծո արածն իրենց կյանքում: Հեղինակը քաջալերում էր, որ նրանք «ծափ զարկեն», որովհետև նա «ժողովուրդներին մեզ հնազանդեցրեց, և հեթանոսներին մեր ոտքերի տակ դրեց: Ընտրեց մեզ համար որպես ժառանգություն իրեն՝ Հակոբի վայելչությունը, որին նա սիրեց» (Սաղմ. 46.1, 4, 5):

Միշտ չէ, որ Աստված մեր դիմագրաված դժվարություններում հաղթանակ է տալիս: Լինեն դրանք առողջական, նյութական, թե այլ կարգի հարցեր: Բայց բոլոր պարագաներում նա արժանի է մեր փառաբանությանն ու պաշտամունքին, որովհետև մենք պետք է վստահ լինենք, որ «Աստված բազմած է իր սրբության գահին» (Հմ.9): Երբ նա բուժում է մեզ մեր երկրային կյանքում, դա մեծ ցնծության առիթ է: Հնարավոր է, որ մենք բառացիորեն զանգ չհնչեցնենք, սակայն կարող ենք Դարլայի պես ուրախությամբ հռչակել մեր հանդեպ իր բարության մասին:

**Աղոթք** - Աստված իմ, շնորհակալ եմ տվածդ բազմաթիվ պարգևների համար: Փառաբանության աղոթք եմ բարձրացնում ու ծափ զարկում՝ տոնելով Քո կատարած գործն իմ կյանքում: Ամեն:

**Ֆիժի՛ր այն մեծ գործը, որ վերջերս Տերը կատարել է Քո կյանքում և ցու՛յց տուր քո երախտագիտությունը:**

*Գնացե՛ք, բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք: (Մատթ. 28.19)*

## **ՀԻՍՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՄՈՏԵՆԱԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ**

**Տ**աւր տարի առաջ Ֆիլիպիների Մինտանաո լեռներում ապաստանած բանվառն ցեղախումբը գրեթե կապ չունէր արտաքին աշխարհի հետ: Իրենց անհրաժեշտ ուտելիքը նրանք հայթայթում էին լեռնային դժվարին ճանապարհները հաղթահարելով: Իսկ աշխարհը չէր նկատում նրանց:

Օգնութեան ձեռք մեկնեց միսիոներական մի խումբ: Ուղղաթիւներով մարդկանց հասցրին ոչ միայն պետք եղած ուտելիքի պաշար, այլև բժշկական պարագաներ և մեծ աշխարհի մասին տեղեկութիւններ: Միսիոներական խումբը, բնականաբար, ներկայացրեց նաև Հիսուսին: Եվ հիմա այդ մարդիկ իրենց ավանդական երգերը երգում են նոր բառերով, որոնք փառաբանում են միակ ճշմարիտ Աստծուն:

Երբ Հիսուսը պետք է վերադառնար Երկնավոր Հոր մոտ, այսպիսի ցուցումներ տվեց. «Գնացե՛ք, բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.19): Այդ հորդորը հիմա էլ ի գորու է:

Բանվառն ցեղախմբին հասնելու համար ստեղծագործ միտք ու հմտութիւն էր պետք: Եվ այս օրինակը ոգեշնչում է մեզ, որ կարողանանք միջոցներ գտնել, հաղթահարել արգելքները և ուրիշներին հասցնել Տեր Հիսուսի մասին լուրը:

**Աղոթք** - Հայր, այսօր աղոթում եմ Քո սիրոն ու ճշմարտությանը անհասանելի թվացողների համար: Խնդրում եմ ինձ օգտագործիր, որպեսզի նրանք դեպի Քեզ դառնան: Ամեն:

**Դժվար է մարդկանց մոտենալ Քրիստոսի բարի լուրը հայտնելու, բայց դա անելու համար Աստուծո՞ւմեզ գորույուն ու իմասնութիւն է սալիս:**



Որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, այն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստուծոց: (Բ.Կորնթ.1.4)

## ԿԻՍՎԵԼ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱԲ

**Ե**րբ դուևտրս՝ Հեյլին, եկավ մեր տուն, տեսա, որ նրա երեք տարեկան մանչուկը տարօրինակ հագուստ էր հագել: Վերնաշապիկի թևքերին կցված էին ձեռնոցներ, իսկ վրան գրված էր «Ինձ մի՛ ճանկիր»: Բանն այն է, որ թոռնիկս մաշկային այնպիսի հիվանդություն ուներ, որը քոր էր առաջացնում, և երեխան քորում ու ցավ էր պատճառում իրեն: Դա կանխելու համար էին հագցրել այդպիսի վերնաշապիկ:

Յոթ ամիս անց աղջկաս մոտ նույնպես նույն հիվանդությունն էր հայտ եկավ: «Հիմա եմ հասկանում, թե որքան դժվար է եղել որդուս վիճակը,- ասում էր Հեյլին:- Թերևս ես էլ հագնեմ նման հագուստ»:

Հեյլիի դեպքն ինձ հիշեցրեց կորնթացիներին ուղղված նամակի 1.3-5-ը, որտեղ Պողոսն ասում է, թե մեր Աստվածն է «ամեն մխիթարության Աստված, որ մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց: Որովհետև ինչպես որ Քրիստոսի չարչարանքները մեր մեջ ավելանում են, այնպես էլ Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունը շատանում է»: Երբեմն Աստված արտոնում է, որ մենք անցնենք փորձությունների միջով: Նա սովորեցնում է մեր կրած տառապանքների միջոցով գնահատել մեծագույն տառապանքը, որ Քրիստոսը խաչի վրա կրեց մեր փոխարեն: Վստահելով իրեն՝ մենք էլ կկարողանանք մխիթարել ու քաջալերել ուրիշներին:

**Աղոթք** - Զայր, օգնի՛ր, որ կարողանամ վայելել Քո մխիթարությունը իմ տառապանքների մեջ և դառնալ մխիթարության աղբյուր ուրիշների համար: Ամեն:

**Եթե դու Քրիստոսով գտել ես մխիթարություն, ջանա՛ այդ մխիթարությունը կիսել ուրիշների հետ:**

Բարերար անձը կպարարտանա, և նա, ով ոռոգում է, ինքն էլ կոռոգվի: (Առ. 11. 25)

## **ԱՆՁՐԵՎՈՏ ՕՐԵՐ**

**Ե**րբ թագավարակի պատճառով Թենեսիի փոքր խանութները փակվեցին, դրանց տերերը մտահոգվեցին, թե ինչպես են կարիքները հոգալու իրենց աշխատակիցները: Ի պատասխան՝ Նեշվիլի մոտ գտնվող եկեղեցու հովիվը ձեռնարկեց այդ խանութների տերերին նյութական օգնություն բաշխելու մի ծրագիր: Շրջակա եկեղեցիներին ևս իրենց ներդրած ջանքերում ընդգրկելու նպատակով հովիվը բացատրեց. «Չենք կարող չօգտագործել «անձրևոտ օրվա» հիմնադրամը, երբ մեկ ուրիշը անձրևոտ օրվա մեջ է»:

«Անձրևոտ օրվա» հիմնադրամը մի կողմ դրված միջոցներ են, որ օգտագործվում են , երբ պակասում են մարդկանց եկամուտները և ավելանում կարիքները: Թեև բնական է, որ մարդը նախ իր մասին մտածի, սակայն Աստծո խոսքը մեզ քաջալերում է, որ մեր կարիքներից այնկողմ էլ նայենք, առատաձեռն լինենք և ծառայենք ուրիշներին: Առակների 11-ը հիշեցնում է. «Կան մարդիկ, որոնք ցրում են իրենց ունեցածը և ստանում բազմապատիկը, կան էլ, որ չափից ավելի են խնայում, բայց մնում են կարոտյալ» և «նա, ով ոռոգում է, ինքն էլ կոռոգվի» (Հմ. 24-25):

Եթե այսօր քո կյանքի արևը շատ պայծառ է փայլում, նայի՛ր շուրջդ, որ տեսնես ուրիշների կյանքի տեղատարափ անձրևը: Աստծո՝ քեզ տված օրհնությունները կբազմապատկվեն, երբ դու քո ունեցածով ազատորեն կիսվես ուրիշների հետ:

**Աղոթք** - Շնորհքի Աստված, օգնի՛ր ինձ, որ կարողանամ ուշադիր լինել ուրիշների կարիքների համդեպ, և ցույց տուր, թե ինչպես կարող եմ քո սերն ու առատաձեռնությունը կիսել ուրիշների հետ: Ամեն:

**Ասված սիրում է նրան, ով դասրաս է իր ունեցածը կիսել ուրիշների հետ:**

Ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր գործերին և դրանք անելու համար իմ քաշած չարչարանքներին, և, ահա՛ ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք, և ոչ մի օգուտ չկա արեգակի ներքո: (Ժող. 2.11)

## **ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼ ԱՆԻՄԱՍԻ ՄԵՋ**

**2** 010-ին *Ջեյմս Ուարտը*, որ ստեղծել էր *Համացանցային բլոգ*, նախաձեռնեց «*Ձանձրալի Համագումար*» տարօրինակ անունով մի միջոցառում: Մեկօրյա հավաքի նպատակն էր ուշադրություն դարձնել սովորական առօրյա, երբեմն նաև անտեսված հարցերին: Անցյալում շատ են խոսել այնպիսի անիմաստ բաների մասին, ինչպիսին է ասենք փոշտալը, մեքենաների ձայնը կամ անցյալ դարավերջի տպագրական գործիքները և այլն: Ուարտը գիտեր, որ նույնիսկ ամենաձանձրալի թեման այն ներկայացնողները կարող են դարձնել շատ հետաքրքիր, իմաստալից և նույնիսկ զվարճալի:

Հազարավոր տարիներ առաջ Սողոմոն իմաստունն թագավորը սովորական ու անիմաստ բաների մեջ սկսել էր ուրախություն փնտրել: Նա շատ գործեր ձեռնարկեց, հոտեր ու արջառներ գնեց, շենքեր կառուցեց, երգիչներ ճարեց, իրեն չզրկեց ոչ մի բանից (Ժող. 2.4-9): Բայց այդ ամենի մեջ ձանձրույթից ու ունայնությունից բացի ոչինչ չգտավ (Հմ.11): Եվ հասկացավ, որ ուրախություն գտել է միայն այն ժամանակ, երբ հիշել ու պաշտել է ճշմարիտ Աստծուն (12.1-7):

Երբ մենք էլ սկսենք ձանձրանալ, եկե՛ք սկսենք մեր ամենօրյա փոքր «Համագումարը»՝ մինչև որ հիշենք մեր Արարչին (Հմ.1), այն Աստծուն, որն իմաստ է տալիս մեր սովորական կյանքին:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, միայն Դու կարող ես իմաստ տալ սովորական բաներին: Վերցրու՛ իմ կյանքի աննկատ պահերը և դրանց հաղորդիր իմաստ, ուրախություն ու զարմանք: Ամեն:

**Ասծուն դիմելով՝ մենք իմաստ կկարողանանք գտնել նույնիսկ դասարկ թվացող բաների մեջ:**

Հիսուսը բարձրաձայն կանչեց ու ասաց. «Հայր, հոգիս քո ձեռքն եմ ավանդում»։ (Պուկ. 23. 46)

### **ՎՇՏԻ ԲԱՌԱՐԱՆ**

**Ե**րբ Հիսուսն ու Դիզիին երկինք ուղարկեցին իրենց միակ զավակին, երկար մտածում էին, թե ինչպես են կոչվելու իրենք այսուհետև։ Որովհետև չկա մի այնպիսի բառ, որը կբնորոշեր որդեկորույս ծնողներին։ Ամուսին կորցրած կնոջն այրի են անվանում, կնոջը կորցրած ամուսնուն՝ ամուրի, ծնող կորցրած երեխան որբ է։ Իսկ ահա որդեկորույս ծնողին բաժին հասած ցավն ու վիշտը չեն սահմանվել։

Ամենատարբեր կարող են լինել երեխաների մահվան պատճառները. վիժում, նորածնի հանկարծակի մահ, ինքնասպանություն, վթար և այլն։ Այս աշխարհից տանելով մանուկներին՝ մահը կողոպտում է նրանց ծնողներին, զրկում նույնիսկ իրենց ինքնությունից։

Աստված շատ լավ է հասկանում այդ վշտի մեծությունը, որովհետև Իր միածին Որդին՝ Հիսուսը, մինչև մեռնելը կանչեց և ասաց. «Հայր, հոգիս քո ձեռքն եմ ավանդում» (Պուկ. 23. 46)։ Աստված Հայր էր Հիսուսի աշխարհ գալուց առաջ և մնաց Հայր, երբ Որդին ավանդեց հոգին։ Աստված շարունակեց մնալ Հայր, երբ Իր Որդու անկենդան մարմինը դրվեց գերեզմանում, և կմնա հարություն առած Որդու Հայր, որը հույս է տալիս, թե զավակը կարող է նորից ապրել։

Ի՞նչ անվանել երկնային Հորը, որն Իր Որդուն է գոհում աշխարհի համար, քեզ և ինձ համար։ Դարձյալ Հայր։ Երբ բառարանում չկան բառեր նրա վիշտն ու կորուստը նկարագրելու ու բնորոշելու համար, Աստված մեր Հայրն է ու մեզ կոչում է Իր որդիները (Ա.Հովհ. 3.1)։

**Աղոթք** - Սիրելի՛ Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ իմ Հայրն ես և ինձ Քո որդին ես համարում։ Ամեն։

**Ասված մեզ ծանաչում է որդես Իր որդիները։ Սա մխիթարող խորհուրդ է։**



Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք: (Կող. 3.17)

### **ՀԻՍՈՒՄԻ ՊԻՏԱԿԸ**

«Որդի՛ս, շատ բան չունեմ քեզ տալու, բայց ունեմ բարի անուն, ուստի չաղավաղե՛ս այն», - Ջոնի Բեթիսն այս իմաստուն խորհուրդը տվեց որդուն՝ Ջերոմին, երբ վերջինը պատրաստվում էր գնալ քոլեջ: Այդ խոսքերը Ջերոմն արտասանեց Ամերիկայի Ֆուլտոնի մասնագետների հայտնի խմբին անդամակցելիս: Այդ ազդեցիկ խոսքերը նրան ուղեկցեցին ամբողջ կյանքում և տարիներ անց դարձան արդեն իր որդուն ուղղված ճառի ամփոփում. «Որդի՛ս ավելի կարևոր բան չունեմ քեզ տալու, քան մեր բարի անունն է»:

Բարի անուն ունենալը Հիսուսին հավատացողների համար կենսական անհրաժեշտություն է: Կողոսացիներին ուղղված նամակի 3.12-17-ում Պողոսը հիշեցնում է. «Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք»: Բարի անունը հագուստի է նմանեցնում, որի վրա պետք է լինի Հիսուսի պիտակը, իսկ բաղկացուցիչները պետք է լինեն «ողորմասիրտ գթածությունը, քաղցրությունը, խոնարհությունը, հեզությունը, համբերատարությունը... Իրար համբերելով ու իրար ներելով, ինչպես որ Քրիստոսը ձեզ նեղեց, այնպես էլ դուք: Եվ այս ամենի վրա սե՛րը հագեք, որ կատարելության կապն է» (Հմ. 12-14): Սրանք միայն «տոնական օրվա» հագուստներ չեն լինելու: Այլ կրելու ենք ամեն օր ու ամեն տեղ, քանի դեռ Աստված գործում է մեր մեջ, որ արտացոլենք Իրեն: Մեր կյանքը նկարագրելով այս հատկանիշներով՝ ցույց ենք տալիս, որ մենք կրում ենք Իր անունը:

Թող որ ազդեցով և ուշադիր ներկայացնենք Իրեն, որ հոգում է մեր բոլոր կարիքները:

**Աղոթք** - Հայր, ների՛ր ինձ, եթե լավ ձևով չեմ ներկայացնում Հիսուսին: Տու՛ր ինձ ուժ և քաջություն՝ Քո փառքի ու Քրիստոսի անվան համար ավելի լավ հագնվելու: Ամեն:

**Իմաստություն ունենանք կրելու «լավ հագուստներ», որոնք ունեն Քրիստոսի նկարագիր**

Գոհու՞թյուն մատուցեցե՞ք Տիրոջը և հնչեցրե՞ք նրա անունը, պատմեցե՞ք ժողովուրդներին նրա գործերը: (Ա.Մնաց. 16.8)

### **ՓՈՒՎԱԼՆԵՑԵՔ ԱՍԾՈՒՆ**

**Ա**ՄՆ Միջին արևմտյան շրջանի ամառային տապն ու խոնավությունը անտանելի էր համագումարի ամբողջ շաբաթվա ընթացքում: Սակայն վերջին օրը եղանակը մեղմացավ: Շնորհահակություն հայտնելով այդ փոփոխության համար՝ հարյուրավոր մասնակիցներ իրենց ձայնը միացրին Աստծու փառաբանությանը: Այնքան սրտաբուխ էր այդ փառաբանությունը, որ մարդիկ իրենց սիրտն ու հոգին, միտքն ու մարմինն էին նվիրում իրեն: Տասնամյակներ անց էլ ուրախությունը եմ հիշում Աստվածապաշտության այդ հիանալի օրը: Դավիթ թագավորը գիտեր, թե ինչպես կարելի է ամբողջ սրտով պաշտել Աստծուն: Նա ուրախացել էր, երգում ու պարում էր, երբ ուխտի տապանակը, որ Աստծո ներկայություն էր նշանակում, բերեցին Երուսաղեմ (Ա.Մնաց. 15.29): Թեև նրա կինը՝ Սավուղի աղջիկ Մեղքողը, տեսավ ու «իր հոգում արհամարհեց նրան»(Հմ.29), բայց Դավիթը թույլ չտվեց, որ նրա քննադատությունը իրեն հետ պահի միակ ճշմարիտ Աստծուն պաշտելուց: Նույնիսկ երբ իր այդ արարքը անպատվաբեր դիտվեց, նա ուզում էր շնորհակալություն հայտնել, որ ինքն է ընտրվել ազգն առաջնորդելու համար (տե՛ս Բ. Թագ. 6. 21-22): Դավիթը Ասափին ու նրա եղբայրներին Տիրոջն օրհնաբանելու հանձնարարություն տվեց՝ ասելով. «Գոհություն մատուցե՛ք Տիրոջը և հնչեցրե՛ք նրա անունը, պատմեցե՛ք ժողովուրդներին նրա գործերը, երգեցե՛ք նրա համար ու օրհնաբանեցե՛ք նրան, պատմեցե՛ք բոլորին Տիրոջ սքանչելագործությունները» (Ա.Մնաց. 16.7-9): Թող որ մենք էլ մեր անձերը ամբողջովին նվիրենք Աստվածապաշտությանը՝ մեր փառաբանությունն ու երկրպագությունը տանելով Նրան ընդառաջ:

**Աղոթք** -Արարի՛չ Աստված, Քո անունը բոլոր անուններից վեր ենք դասում: Դու արժանի ես փառաբանության: Պաշտում ենք քեզ: Ամեն:

**Բազմաթիվ դասձառներ ունեն՞ մեր Ասծուն փառաբանելու և օրհներգելու համար:**

Ես որթատունկն եմ, դու՛ք՝ ճյուղերը: (Հովհ. 15.5)

### **ՀԻՍՈՒՍԻ ԾՇՄԱՐԻՏ ԱՇՎԿԵՐՏԸ**

**Ե**րբ Քրիստիան Մոլստազը Վան Գոգի բնապատկերներից մեկը ցույց տվեց արվեստի գործեր հավաքող Ավգուստ Փելերինին, նա մի հայացք գցեց ու ասաց, որ այն բնօրինակ չէ: Մոլստազի մահից տասնամյակներ անց արդեն համակարգչային վերլուծություն միջոցով պարզվեց, որ այդ գործը իրականում Վան Գոգի վրձնին էր պատկանում:

Քեզ հե՛տ էլ է պատահում, երբ վախենում ես, որ եթե քննեն, կարող է տեսնեն, որ քիչ ես աղոթում, տալիս կամ ծառայում: Երբ փորձում ես թաքնվել մարդկանցից:

Ավելի խորը նայիր կյանքիդ գույներին ու ուրվագծերին: Եթե քո ճամփից դարձել ու հավատդ Հիսուսի վրա ես դրել, ապա դու և Ինքը նույն կտավից եք: Հիսուսի տված պատկերը գործածելով, «Ես որթատունկն եմ, դու՛ք՝ ճյուղերը» (Հովհ. 15.5) Հիսուսն ու դու մեկ անքակտելի ամբողջություն եք:

Հիսուսի մեջ հաստատ մնալով՝ դու կդառնաս Իր իրական աշակերտը: Դա նաև քո պատկերը կատարելագործելու միակ միջոցն է: Նա ասել է. «Նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց ինձ ոչինչ չեք կարող անել» (Հմ.5):

**Աղոթք** - Տե՛ր, Քո մեջ եմ հաստատվում, ինչպես ճյուղն է կառչում իր որթատունկին: Ամեն:

**Եթե իրադես հավասում եմք Հիսուսին, կլինեմք Իր վրա հաստատված մի ճյուղ և ծճմարիտ առակեր:**

Ես Իսրայելում թողել եմ յոթ հազար տղամարդ՝ այնպիսի մարդիկ, որ չեն ծնրադրել Բահադին: (Գ. Թագ. 19.18)

## ՄԵՆԱԿ ՉԵՍ

**Կ**ալիֆոռնիայի հոգևոր ծառայության երեկոյան առցանց ծրագրի սկսվելուց առաջ մասնակիցները ջերմորեն ողջունում էին միմյանց, հաճոյախոսում. «Ուրախ եմ քեզ տեսնել», «Քեզ էլ» բառերով: Կոլորադոյից միանալով նրանց՝ ես սկզբում մի տեսակ օտար զգացի, չէի ճանաչում ոչ մեկին: Բայց հանկարծ նկատեցի իմ հովվին, քիչ անց այլ ծանոթ եկեղեցականների ևս և զգացի, որ մենակ չեմ: Նույնիսկ ինձ թվաց, որ Աստված էր ինձ օգնություն ուղարկել:

Եղիան էլ մենակ չէր, թեև իրեն թվում էր, որ միայն ինքն է մնացել, որ փախուստ է տվել Աքաաբի ու Հեզաբելի բարկությունից (Գ.Թագ. 19.10): Քառասուն օր ու գիշեր ճամփորդելով ամայի անապատում՝ Եղիան թաքնվեց Քորբե լեռան մի քարայրում: Սակայն Աստված նրան կանչեց ծառայության՝ ասելով. «Վերադարձի՛ր քո ճանապարհով, գնա՛ Դամասկոսի անապատով, և երբ հասնես, Ազայելին ասորիների թագավոր կօծես, Ամեսսի որդի Յեուին՝ Իսրայելի թագավոր, իսկ աբելմաուլացի Սափատի որդի Եղիսեեին կօծես մարգարե քո փոխարեն» (Հմ.15-16):

Աստված նրան վստահեցրեց. «Ես Իսրայելում թողել եմ յոթ հազար տղամարդ՝ այնպիսի մարդիկ, որ չեն ծնրադրել Բահադին և չըթունքներով նրան չեն համբուրել» (Հմ.19.18): Երբ Աստված օգնություն է պարգևում, մենք պիտի ծառայենք:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, երբ քեզ ծառայելիս մեմակ եմ զգում, շնորհակալ եմ, որ ինձ հիշեցնում ես, որ ուրիշներն ինձ հետ են, և մենք ուրախությամբ ծառայում ենք: Ամեն:

**Ասծուն ծառայելու ժամանակ հիշենք, որ մենակ չենք, և Ինքը՝ Հայրն է մեր օգնականն ու առաջնորդը:**

Մենք ձեզ ավետարանում ենք այն խոստումը, որ հայրերին տրվել էր: Աստված այն կատարեց մեր մեջ: (Գործք 13. 32-33)

## **ԲԱՐԻ ԼՈՒՐ**

**1** 941-ին, երբ Հիտլերի իշխանությունը տարածվում էր Եվրոպայում, ժամանակի ամերիկյան հայտնի վիպասան Ջոն Սթայնբեքին առաջարկվեց օգնել հակապատերազմական ջանքերին՝ գրելով պատմություն: Եվ ծնվեց «Լուսինն ընկած է» վեպը՝ խաղաղ մի տարածքի մասին, որը գրավվել է չար ուժերից: Գաղտնի տպագրվելով ու բաժանվելով գրավված երկրներում, վեպը բարի լուր էր հասցնում նրանց, որ դաշնակիցները շուտով գալու են, և նացիստներից ազատագրումը մոտ է:

Սթայնբեքի պատմության հերոսների նման առաջին դարում հրեաները գտնվում էին Հռոմի ծանր լծի տակ: Սակայն դարեր առաջ Աստված խոստացել էր ուղարկել մի բարեկամի, որը կազատագրեր իրենց և խաղաղություն կհաստատեր աշխարհում (Յս. 11): Խոստացված դաշնակիցը ուրախություն բերեց: Պողոսն ասում է. «Մենք ձեզ ավետարանում ենք այն խոստումը, որ հայրերին տրվել էր: Աստված այն կատարեց մեր մեջ՝ Հիսուսին հարություն տալով» (Գործք 13. 32-33): Հիսուսի հարությունը և ներումի խոստմամբ սկսված էր աշխարհի վերանորոգումը (Հմ. 38-39, Հռոմ. 8.21):

Հիսուսը մեռելներից հարություն է առել և սկսել մեր ազատումը մեղքերից ու հարությունից: Մենք ազատ ենք իրենո՛վ:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, իմ գերագույն դաշնակից, հանձնվում եմ քո իրավասու իշխանությանը: Ամեն:

**Հիսուսն է աշխարհին խաղաղություն բերողը: Միանանք իրեն ու իր գործին:**

Որտե՞ղ էիր դու, երբ ես երկրի հիմքերն էի գցում: (Յոթ. 38. 4)

## **ԱՍԾՈՒ ՅԻԱՆԱԼԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Ե**ս ու տիկինս զբոսանում էինք գետափին, երբ ջրի վրա օրոր-վող կոճղի վրա տեսանք 5-6 կրիայի: Տեսարանը զվարճալի էր:

Աստված Հոբին տարել էր բնության գրկում զբոսանքի (Հոբ. 38): Նա անհանգիստ էր և կարիք ուներ Արարչից ստանալու իր հարցերի պատասխանները (Հմ.1): Եվ իր տեսածից նա քաջալերվեց:

Պատկերացրու Հոբի զարմանքը, երբ Աստված նրան հիշեցրեց աշխարհին տված իր մեծ պատկերը: Հոբը ամբողջական բացատրություն ստացավ աշխարհի, բնության մասին.«Ո՞վ է դրել անկյունաքարը դրա: Երբ աստղերը ցիրուցան եղան, աստղերի բոլոր հրեշտակները մեծաձայն օրհնեցին ինձ, իմ բուլոր հրեշտակներն էլ գովեցին» (Հմ. 6-7): Ծովերի վրա Աստծո դրած սահմանափակումների միջոցով աշխարհագրության դաս առավ (Հմ.11): Ստեղծիչը շարունակեց Հոբին տեղեկացնել բույսերի աճն ապահովելու համար իր ստեղծած լույսի, ձյունի ու անձրևի մասին (Հմ. 19-28): Լսեց նաև համաստեղությունների մասին, որ Նա դրել է տիեզերքում (Հմ. 31-32): Վերջապես Հոբը պատասխանեց. «Գիտեմ, պատում է ուժդ ամեն ինչի» (42.2): Բնությունը վայելելիս հիացմունքով ու գոհունակ սրտով կանգնեք մեր իմաստուն ու սքանչելի Արարչի առջև:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ ստեղծեցիր նման հոյակապ, բազմազան ու հետաքրքիր աշխարհ: Օգնի՛ր, որ կարողանամ գնահատել Քո ձեռքի գործը և իմանամ, որ Դու վերահսկում ես այն: Ամեն:

**Նայի՛ր ու տես՛ր քո արարածի գեղեցիկ աշխարհը և հավասա՛ր, որ այն Ասծո հիանալի ստեղծագործությունն է:**

Արդ Քրիստոսի սիրուց մեզ ո՞վ կբաժանի. տառապա՞նքը, նեղություն՞ընը, հալածա՞նքը, սո՞վը, մերկություն՞ընը, վտա՞նգը, սո՞ւրը: (Չոմ. 8.35)

## **ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԱԺԱՆԵԼ**

**Փ**րիսի հայրն ընդունեց Աստծո տված կոչը և ստանձնեց Ինդոնեզիայի փոքր կղզիներից մեկում միսիոներուլթյան գործը: Նրա ընտանիքը հարկադրված էր ապրել մի հին տնակում, որտեղ նախկինում կենդանիներ են պահել: Փրիսը հիշում է, որ իրենք Սբ. Մնունդը նշել են գետնին նստած, երգում էին, իսկ տնակի երգիկից կաթում էր: Բայց հայրն իրենց ասում էր. «Մեր աղքատ լինելը դեռ չի նշանակում, թե Աստված մեզ չի սիրում»:

Ոմանք ապրում են այնպիսի կյանքով, որ ունեն առողջություն, հարստություն, երկար կյանք: Ուստի դժվարության պահին նրանք սկսում են կասկածել, որ Աստված այլևս չի սիրում իրենց: Սակայն հռոմեացիներին ուղղված նամակի ծում Պողոսը հիշեցնում է, որ ոչինչ չի կարող մեզ բաժանել Հիսուսի սիրուց. ո՛չ նեղությունները, ո՛չ հալածանքը, ո՛չ էլ սովը (Հմ.35): Իսկական ճշմարիտ ու օրհնված կյանքի հիմքն այն է, որ Աստված «Իր Որդուն էլ չխնայեց, այլ մեզ բոլորիս համար նրան մահվան մատնեց» (Հմ.32): «Քրիստոսը, որ մեռավ, ավելին՝ որ հարություն էլ առավ և Աստծու աջ կողմին է, որ մեզ համար բարեխոս էլ է» (Հմ.34):

Տառապանքի ժամանակ կարող ենք կառչել մեզ մխիթարող ճշմարտությանը, թե կյանքի իմաստը Քրիստոսի՝ մեզ համար արածի մեջ է: Ոչինչ՝ ո՛չ մահը, ո՛չ կյանքը և ո՛չ այլ բան (38-39) չեն կարող մեզ բաժանել Իր սիրուց: Ինչ էլ լինեն մեր նեղություններն ու խանգարող հանգամանքները, հիշենք, որ Աստված մեզ հետ է, ու ոչինչ չի կարող մեզ Իրենից բաժանել:

**Աղոթք** - Երկնավոր Չայր, բա՛ց աչքերս ու սիրտս, որ կարողանամ ավելի լավ հասկանալ Քո սերը և օգնի՛ր գիտակցել, թե Քո սերը բավական է ինձ համար: Ամեն:

**Գիտակցելով, որ ոչինչ չի կարող մեզ բաժանել Իր սիրուց, մենք կկարողանանք արիաբար դիմագրավել բոլոր մարտահրավերները:**

Դուք մոտենալով կանգնեցիք լերան ստորոտին: Լեռն այրվում էր, և կրակը բարձրանում էր մինչև երկինք: Խավար, մեզ ու մառախուղ էր... (Բ. Օր. 4.11)

### **ՀՋՈՐ ԵՎ ՍԻՐՈՂ**

**2020** թվականին էկվադորի Սանքա հրաբուխը ժայթքեց: Բրիտանական ԲԻ ԲԻ ՍԻ ռադիոկայանն այն ներկայացրեց որպես «12 հազար մետր բարձրությամբ մոխրի մթին մի սյուն»: «Ցրված մառախուղն ու ծուխը պատեց շուրջ 800 քմ զբաղեցնող չորս գավառ: Երկինքը խավարեց ու մռայլվեց, շնչելը դժվարացավ»: Ֆելիցիանո Ինկա անունով ոմն ազարակապան օրաթերթերից մեկի թղթակցին այսպես նկարագրեց. «Չիմացանք՝ թե այդ փոշին որտեղից եկավ: Տեսանք, որ երկինքը խավարեց ու շատ վախեցանք»:

Իսրայելցիները այդպես վախեցան, երբ Մինա լեռան ստորոտում էին: «Լեռն այրվում էր, և կրակը բարձրանում էր մինչև երկինք: Խավար, մեզ ու մառախուղ էր...» (Բ. Օր. 4.11): Որոտաց Աստծո ձայնը, և ժողովուրդը դողաց: Կենդանի Աստծո ներկայութունը սարսափելի էր: «Տերը կրակի միջից խոսեց ձեզ հետ: Դուք լսեցիք պատգամախոսի ձայնը» (Հմ.12): Սակայն մինչև ոսկորները թափանցող ու դողացնող այդ ձայնը կյանք ու հույս տվեց նրանց: Աստված Իսրայելին տվեց Իր տասը պատվիրանները և նորացրեց Իր ուխտը նրանց հետ: Մուժամպերից եկող ձայնը ցնցեց նրանց, բայց միաժամանակ հավաստեց Իր կարեկից ու հաստատուն սիրո մասին (Ել. 34.6-7):

Աստված հզոր է, երբեմն նույնիսկ սարսափազդու: Միաժամանակ Նա լի է սիրով: Հենց այդ հզոր ու սիրող Աստծո կարիքն ունենք:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, հաճախ չեմ մոտեցել Քեզ, բայց միշտ սպասել եմ: Շնորհակալ եմ Քո համբերության ու մեծ սիրո համար: Ամեն:

**Թե՛ն Ասծո ներկայությունը կարող է մեզ վախեցնել, բայց Նրա մեծ սերը հանգստացնում ու ազատում է շարից ու նեղությունից:**



Սի բան եմ խնդրել Տիրոջից, ... որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ տանը: (Սաղմ. 26.4)

## **ԹՈՒՅԼ ՏՈՒՐ՝ ՄԱԱՍ**

**Ը**նտանիքը մոտենում էր մեքենային, երբ հանկարծ նրանց չորս տարեկան երեխան, թողնելով մոր ձեռքը, հետ վազեց դեպի եկեղեցի: Չէր ուզում տուն գնալ: Մայրը փորձեց սիրով համոզել նրան: Երբ վերջապես հանդարտված բալիկին գրկեց, նա շարունակում էր հեկեկալ: Հնարավոր է, որ երեխայի համար հաճելի էր եկեղեցու իր ընկերների հետ խաղալը: Բայց նրա պատկերը շատ նման էր Դավթի՝ Տիրոջը պաշտելու ցանկությանը: Թեև նա խնդրել էր Աստծուն, որ ապահովություն համար խանգարի իր թշնամիներին, Դավիթն ուզում էր, որ խաղաղություն լինի, որպեսզի Ինքը կարողանա «տեսնել Տիրոջ վայելչությունը և վերահսկել Նրա տաճարում» (Սաղմ. 26. 4): Նրա սրտի փափագն էր միշտ և ամենուր լինել Աստծո հետ և հրճվել Նրա ներկայությունը: Իսրայելի մեծագույն թագավորն ու ռազմական հերոսը նպատակադրվել էր իր խաղաղության ժամանակն օգտագործել «Տիրոջը օրհնեղբելու և սաղմոս երգելու» համար (Հմ.6):

Մենք կարող ենք ազատորեն ցանկացած տեղում պաշտել Աստծոն, որովհետև Նա մեր մեջ է բնակվում մեր ունեցած հավատքով ու Սուրբ Հոգու անձով (Ա.Կորնթ. 3.16, Եփ. 3.17): Թող որ մեր օրերը իր ներկայությունը անցկացնելու և ուրիշ հավատացյալների հետ Իրեն պաշտելու ցանկություն ունենանք: Աստծո մեջ կգտնենք մեր ապահովությունն ու մեծագույն ուրախությունը, և ոչ թե շենքի պատերի մեջ:

**Աղոթք** - Հայր, Դու ես իմ հրճվանքն ու ցնծությունը: Ուզում եմ Քեզ պաշտել՝ առանց որևէ խանգարման ու շեղման: Ամեն:

**Մեր առօրյա զբաղմունքների մեջ չմոռանանք դասերը Տիրոջն ու բարձրացնել Նրա անունը:**

Հիսուսը Սիմոնի ասաց. «Մի՛ վախեցիր. այսուհետև մարդկանց որսացող կլինես»: (Ղուկ. 5.10)

## **ՄԵՐ ԻՍԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Մ**ի մարդ խանութից ընտրեց ձկնորսության համար անհրաժեշտ տարբեր պարագաներ՝ կարթեր, խայծեր, թելեր, ուռկան և այլն: «Սրանից առաջ երբևէ զնացե՞լ եք ձուկ բռնելու»,<sup>-</sup> հարցրեց խանութպանը: Բացասական պատասխան ստանալով՝ գործակատարը խորհուրդ տվեց շտապ օգնության պայուսակն էլ ավելացնել: Մարդը համաձայնեց, վճարեց ու գնաց: Այդ օրը նա ոչինչ չկարողացավ որսալ, բացի մատները վիրավորելուց:

Սիմոն Պետրոսի հարցն այլ էր: Որպես փորձառու ձկնորս՝ նա զարմացավ, երբ Հիսուսն ասաց. «Նավը դեպի խո՛րքը տար, ու ձեր ուռկանները գցեցե՛ք որսալու» (Ղուկ. 5.4): Չնայած այն բանին, որ ամբողջ գիշերն աշխատել էին ու ոչինչ չէին որսացել, Սիմոնն ու իր ընկերները գցեցին ուռկանները և «ձկների մի մեծ բազմություն ներս գցեցին, ու նրանց ուռկանը պատուվում էր» (Հմ.6): Իրականում բեռի ծանրությունից նավերն ընկղմվում էին (Հմ.7):

Տեսնելով այդ՝ Սիմոն Պետրոսն ընկավ Հիսուսի ծնկների առաջ ու աղերսեց. «Տե՛ր ինձանից դո՛ւրս գնա, քանի որ ես մեղավոր մարդ եմ» (Հմ.8): Բայց Հիսուսը գիտեր Սիմոնի իսկական ինքնությունը: Նա ասաց իր աշակերտին. «Այսուհետև մարդկա՛նց որսացող կլինես» (Հմ.5.10): Այս խոսքը լսելով՝ Սիմոնը թողեց ամեն բան ու հետևեց Քրիստոսին (Հմ.11): Երբ մենք հետևենք Իրեն, Նա կօգնի հասկանալ, թե ով ենք մենք և ինչ կոչում ունենք՝ որպես Իր աշակերտները:

**Աղոթք** - Հայր, երբ պայքարում եմ իմ ինքնությունն իմանալու համար, հիշեցրու՛ ինձ, որ Քեզ հետևեմ, որպեսզի կարողանամ Քո մեջ գտնել իմ իսկական ինքնությունը: Ամեն:

**Հիսուսից դուրս չե՛ք կարող ունենալ իսկական ինքնություն ու Իր դաճում խաղալու որևէ դե՛ր:**

Թանկ եղար ինձ համար, իմ առաջ փառավորվեցիր: (Ես. 43.4)

## ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՒ ՀԱՍՏԱՏՎԱԾ

**Թ** հենին մանուկ հասակից թերարժեքության զգացում ունենր: Նրան թվում էր, թե իր արած ոչ մի բանը, լինի տանը թե դպրոցում, բավարար չի: Չափահաս տարիքում էլ այդ զգացումը մնաց նրա հետ, և նա շարունակ հարցնում էր ինքն իրեն. «Արդյո՞ք ես բավականաչափ լավն եմ»:

Միայն Հիսուսին իբրև Փրկիչ ընդունելուց հետո Թհենին գտավ լիարժեքության ու ապահովության այն զգացումը, որի մասին երազում էր: Նա իմացավ, որ Աստված իրեն սիրում էր որպես Իր Որդի: Վերջապես նա կարող էր վստահ լինել, որ ինքն իրոք գնահատված է:

Եսայի 43.1-4-ում Աստված Իր ընտրյալ ժողովրդին ասաց, որ գործածելու է իր գործությունն ու սերը, որպեսզի փրկի նրանց և հայտարարեց. «Թանկ եղար ինձ համար, իմ առաջ փառավորվեցիր»: Նա նրանց համար էր գործելու, որովհետև սիրում էր (Հմ.4):

Այն արժեքը, որ Աստված տալիս է Իր սիրածներին, կախված է ոչ թե մեր արածներից, այլ այն պարզ ու հզոր ճշմարտությունից, որ Ինքը մեզ ընտրել է Իր սեփական ժողովուրդը լինելու: Եսայու 43-ի այս բառերը Թհենին բացի ինքնավստահությունից՝ նաև Աստծո համար ամենալավն անելու ցանկություն տվեցին: Այսինքն՝ այն, ինչի կոչումը ստացել էր: Այժմ նա հոգևոր հովիվ է և ուրիշներին քաջալերում է այն կենսատու ճշմարտությամբ, որ մեզ ընդունել ու հաստատել է Հիսուսը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, գիտեմ, որ սիրում ու ընդունում ես ինձ: Շնորհակալ եմ ինձ որդեգրելուդ և որպես Քո որդին՝ առանց նախապայմանների, սիրելուդ համար: Ամեն:

**Ասված Իր սիրո աչեքով նայում է մեզ: Ուսի վստահ լինեմք, որ Նա մեզ սիրում ու ընդունում է այնպիսին, ինչպիսին կանք:**

Շնորհով եք փրկված հավատի միջոցով: (Եփ. 2.8)

## **ԱՍՏՎԱԾ ԲՈՒԺՈՒՄ Է ՄԵՐ ԿՈՏՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Ա**մուսիները շրջում էին արվեստի գործերի խանութում՝ փնտրելով իրենց տանը հարմար մի գործ: Ամուսինը հավանել էր մի աշխատանք և կանչեց կնոջը, որ տեսնի: Խեցեգործական այդ աշխատանքի աջ կողմում գրված էր «Հնորհք» բառը, բայց ձախ կողմում երկու ճաք էր նկատվում: Կինն ասաց. «Լավն է, բայց կտրված է» ու սկսեց մեկ ուրիշը որոնել: Բայց ամուսինն ասաց. «Ո՛չ, հենց դա է իմաստը: Մենք էլ ենք կտրված, բայց շնորհք է գալիս»: Եվ նրանք որոշեցին գնել այդ կտրված աշխատանքը:

Ի՞նչ է նշանակում «կտրված մարդ» արտահայտությունը: Մեկը այսպես է նկարագրել. դա այն է, երբ մեր կարողություններով փորձում ենք կյանքը ավելի լավ ու դյուրին դարձնել, բայց այն ավելի վատն է լինում: Նաև Աստծո կարիքն ունենալու, մեր կյանքում Նրա միջամտության անհրաժեշտությունն զգալու վիճակն է:

Պողոս առաքյալը մեր կտրվածությունը այսպես է ներկայացրել. «մեռած էիք հանցանքների ու մեղքերի մեջ» (Եփ. 2.1): Իսկ 4 և 5 համարներում արդեն տեսնում ենք մեր ներքին հայցելու և փոփոխությունների կարիք ունենալու պատասխանը. «Բայց Աստված, որ հարուստ է ողորմությամբ, իր առատ սիրո համար, որով մեզ սիրեց: Երբ մեռած էինք հանցանքներում, մեզ Քրիստոսի հետ կենդանացրեց: Շնորհով եք դուք փրկված»:

Աստված Իր շնորհքով կբուժի մեր կտրվածությունը, եթե ընդունենք և ասենք. «Ես կտրված եմ»:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ մեծ է իմ հանդեպ Քո ունեցած ողորմությունը: Թող որ պարծենամ Քեզանով ու Քո տված փրկության պարգևով: Ամեն:

**Կոտրվածության զգացում մի՛ժ էլ կունենանք: Սակայն վստահե՛նք սիրոյը, որ կարող է մեզ բուժել:**

Անսպառ են Տիրոջ ողորմությունները...: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը: Մեծ է Քո հավատարմությունը: (Եր. ողբը 3.22-23)

## **ԵՐԲ ՉԵՍ ԿԱՐՈՂ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**

**2**006-ին հորս մոտ ախտորոշվեց նյարդային հիվանդություն, շորի հետևանքով նա կորցրեց հիշողությունը, խոսելու, շարժումները վերահսկելու կարողությունը: 2011-ին նա դամվեց անկողնուն և մինչև այժմ այդ վիճակում է: Սկզբնական շրջանում ես սարսափած էի, քանի որ ընդհանրապես հիվանդին խնամելու մասին պատկերացում չուների, նաև մորս առողջության համար էի անհանգստանում:

Երեմիայի ողբի 3.22-ի բառերն օգնեցին ինձ, որ կարողանամ առավոտներն արթնանալ՝ հիշելով դրանք.«Անսպառ են Տիրոջ ողորմությունները»:

Աստծո մեծ սերն օգնում է, որ առաջ գնանք և դիմավորենք ամեն բացվող օրը: Մեր ունեցած փորձությունները կարող են մտահոգել մեզ, բայց մենք չպետք է կործանվենք, որովհետև Աստծո սերը շատ ավելի մեծ է:

Շատ օրինակներ կարող եմ բերել, երբ Աստված ցույց է տվել իր հավատարմությունն ու սերը իմ ընտանիքի հանդեպ: Ես դատեսել եմ ազգականներիս ու բարեկամներիս ազնվության, նյութական աջակցության, բժիշկների իմաստուն խորհուրդների և այն հիշեցման տեսքով, որ հայրս մի օր դարձյալ առողջ կլինի երկնքում:

Եթե անցնում ես մթություն միջով, հույսդ մի՛ կորցրու: Մի՛ անհանգստացի՛ր քեզ հանդիպած մարտահրավերներով: Շարունակի՛ր վստահել Աստծո հավատարիմ սիրուն ու քեզ համար Նրա նախատեսածին:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր ինձ, որ շարունակեմ վստահել Քեզ: Բաց աչքերս, որ կարողանամ տեսնել Քո սերն ու հավատարմությունը: Ամեն:

**Դժվարությունների ու նեղությունների մեջ վստահի՛ր Աստծո մեծ սիրուն:**

Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և կորցնելու. ես եկա, որ կյանք ունենան և էլ ավելին ունենան: (Յովհ. 10.10)

### **ԼՅՆՈՒՄ Է ՊԱՐԱՊԸ**

Նոգեբան Մեյդլայն Լեինը հատուկ ուշադրություն դարձրեց Նոտանհինգամյա աղջկա երկարաթև վերնաշապիկին. այդպիսի հագուստ կրում են հիմնականում ինքնավնասման փորձ կատարած մարդիկ: Երբ աղջիկը քշտեց շապիկի թևը, Լեինը զարմացավ՝ տեսնելով, որ նրա նախաբազկի վրա շեղբով գրված էր «պարապ» բառը: Մասնագետը մտահոգվեց, բայց միաժամանակ ուրախ էր, որ աղջնակը պատրաստ էր ստանալու իրեն անհրաժեշտ օգնությունը: Այս դեռահասի օրինակը ներկայացնում է մեզանից շատերին, որոնք իրենց սրտերին են փորագրել «պարապ» բառը: Հովհաննեսը գրել է, որ Հիսուսը եկավ լցնելու պարապը և առաջարկեց «ճոխություն» լի կյանք (Հովհ. 10.10): Աստված յուրաքանչյուր մարդ արարածի մեջ դրեց կյանքի փափագը և ուզում է, որ մարդիկ Իր հետ սիրով հարաբերվեն: Բայց Նա զգուշացնում է նաև, որ «գողը» կարող է ի չարը գործածել մարդկանց, և հատուկ վիճակներ ստեղծելով՝ ավերել նրանց կյանքը (Հմ.1.10): Կյանք տալու մասին այդպիսի յուրաքանչյուր պնդում կեղծ կարող է լինել: Որպես դրա հակադրություն՝ Հիսուսն առաջարկում է այն, ինչը ճշմարիտ է՝ «հավիտենական կյանք» և այն խոստումը, թե «ոչ ոք նրանց իմ ձեռքից չի հափշտակի»( Հմ.28):

Միայն Հիսուսը կարող է կյանքով լցնել մեր սրտում եղած դատարկությունը: Եթե դու քեզ դատարկված ես զգում, հենց այսօր դիմիր Իրեն: Ու եթե լուրջ դժվարություն ես դիմադրավում, աստվածային խորհուրդ խնդրիր: Միայն Քրիստոսը կարող է տալ ճոխ ու լեցուն, Իրենով իմաստալից դարձած կյանք:

**Աղոթք** - Տե՛ր, խնդրում եմ՝ օգնիր ճոխ ու լի կյանքի փնտրողներուն Քեզմից չհեռանալ: Ամեն:

**Շաս բաներ կարող են մեզ հուսահատեցնել, բայց Տերը կարող է ճոխացնել ու լցնել մեր կյանքը:**

Առավոտյան քո ողորմությունն ինձ լսելի՛ դարձրու: (Սաղմ. 142.8)

### **ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ**

**2019-ին Քեպ Դաշվուզն ու իր գյուղական հավատարիմ շուներ, որին հրեշտակ էր անվանում, ամեն օր բարձրանում էին լեռան գագաթը:**

Դաշվուզը հուզիչ պատմություն ունի: 16 տարեկանում նա հեռացել էր տնից «վատ ընտանեկան հարաբերությունների» պատճառով: Անցյալի վերքերը նրան առաջնորդում էին ուրիշ տեղ բուժում գտնելու: Նա այսպես էր բացատրում իր դեգերումները. «Երբեմն մարդկանցից հուսախաբ ես լինում և ուրիշ բանի ես դիմում»: Դաշվուզի համար լեռ բարձրանալն ու իր շան անսակարկ ընկերակցությունը դարձել էին այդ «ուրիշ բանը»:

Մեզանից ոմանց համար, ովքեր շատ են սիրում իրենց կենդանիներին, դրա բացատրությունը հենց այդ քաղցր ու անսակարկ սերն է: Բայց ես սիրում եմ մտածել այն սիրո մասին, որն արժեք է տալիս ավելի մեծ ու խոր մի իրականություն, քան ուրիշների ձախողումն է: Դա Աստծո անխախտ ու անսահման սերն է:

142-րդ սաղմոսում Դավթի հավատքը անխախտելի «ողորմություն» մեջ է (Հմ.12), որ իրեն հույս է տալիս: Սակայն Աստծո հետ ընթացած կյանքը նրան տալիս է հարկ եղած զորությունը, որը բավարար հույս է դառնում և ցույց տալիս իր անցնելիք ճանապարհը (Հմ.8):

**Աղոթք** - Սիրո ու ողորմության Հայր, շնորհակալ եմ, որ հակառակ վերքերիս ու ցավերիս՝ հնարավոր է բուժվել: Շնորհակալ եմ, որ ցույց ես տալիս, թե ինչպես կարող եմ կրկին հավատալ սիրուն և ուրախությանը: Օգնի՛ր, որ դառնամ այդ հավատքը ուրիշներին փոխանցելու միջոց: Ամեն:

**Շափարհար կարող եմ մեզ հուսախաբ անել, սակայն Տերը կարող է մեր կյանքը ձոխացնել ու լցնել:**

ճշմարիտ երկրպագողները հոգով ու ճշմարտությամբ կերկրպագեն Յուզի: (Յուզի. 4. 23)

### **ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՂՆԵՐԸ**

**Վ**երջապես նա առիթ ունեցավ եկեղեցի այցելելու: Ներսուսում՝ ներքնահարկի ամենախոր մասում նա հասավ մի փոքր քարայր: Նեղ տեղը մոմերով էր լցված, իսկ կախված լամպերը լուսավորում էին անկյունը: Տասնչորս անկյուն ունեցող արծաթե աստղը դրված էր մարմարե հատակի բարձր մասում: Դա Բեթղեհեմի Ծնունդի վայրն է, այն տեղը, որտեղ, ըստ ավանդության, ծնվել է Քրիստոսը: Բայց հեղինակ Անի Դիլարդը այնքան էլ չտպալորովեց դրանով, նկատելով, որ Աստված շատ ավելի մեծ է, քան այդ կետը:

Մեր հավատքի պատմության մեջ այդպիսի վայրերը դեռ մեծ տեղ ունեն: Նման մի վայր էլ հիշվում է Հիսուսի ու Ջրհորի մոտի կնոջ խոսակցության առիթով. այն լեռը, որտեղ իր նախահայրերը երկրպագում էին Աստծուն (Հովհ. 4.20)՝ ակնարկելով Գարիգին լեռը (Բ. Օր. 11.29): Այդ տեղը սուրբ վայր է սամարացիների համար ի հակադրություն հրեաների պնդման, թե Երուսաղեմը միակ տեղն է, որտեղ կարելի է երկրպագություն կատարել (Հմ.20): Սակայն Հիսուսը հայտարարեց, որ ժամանակն եկել է, որ պաշտամունքը կապված է լինելու ոչ թե որևէ վայրի, այլ Անճի հետ.«երբ ճշմարիտ երկրպագողները հոգով ու ճշմարտությամբ կերկրպագեն Հորը» (Հմ. 23): Կինը հայտարարեց Մեսիայի հանդեպ իր ունեցած հավատքը, ասելով. «Երբ նա գա, մեզ ամեն բան կպատմի»: Հիսուսը նրան ասաց. «Ես եմ, որ քեզ հետ խոսում եմ» (Հմ.26): Աստված սահմանված չէ որևէ լեռան կամ ֆիզիկական այլ վայրի վրա: Նա ներկա է մեզ հետ ամեն տեղ: Ծշմարիտ ուխտագնացությունը, որ անում ենք ամեն օր, իր գահին մոտենալն է և միաժամանակ «Հայր մեր» ասելը և Ինքը այդտեղ է:

**Աղոթք** -Յա՛յր, շնորհակալ եմ Քո մշտական ներկայության համար, անկախ նրանից, թե ես որտեղ եմ: Ամեն:

**Ասված հոգի է, ուսի կարելի է ամեն ժամանակ ու ամեն տեղ ճշմարիտ հոգով Իրեն դառնել:**



Քո խոսքերը սրտունս թաքցրի, որ չմեղանչեմ քո դեմ: (Սաղմ. 118.11)

### **ՀՈՒՅՍ ԲԱԺԱՆԵԼ**

**Ե**րբ էմման պատմում էր, թե ինչպես է Աստված օգնել իրեն՝ դառնալու Աստծո սիրելի զավակ, Աստծո Խոսքը մեջբերեց: Ես զարմացած լսում էի և դժվարանում հասկանալ, թե միջնակարգ դպրոցի աշակերտը երբ սկսեց իր խոսքերի փոխարեն Աստվածաշնչից մեջբերումներ անել: Երբ նրան գովեցի ու անվանեցի քայլող Աստվածաշունչ, նա հոնքերը կիտեց: Նա նպատակադրված չէր սուրբգրային հատվածներ արտասանել: Ամեն օր Աստվածաշունչ կարդալով՝ դրա իմաստնությունները դարձել էին էմմայի ամենօրյա բառապաշարը: Նա ուրախանում էր Աստծո մնայուն ներկայություն և Նրա ճշմարտությունը ուրիշներին հայտնելու առիթների համար:

Երբ Պողոս առաքյալը Տիմոթեոսին քաջալերում էր առաջնորդի դեր ստանձնել, նա իր վստահությունը ցույց տվեց այդ երիտասարդի հանդեպ (Ա.Տիմ. 4.11-16), ընդունեց, որ Աստծո Խոսքը նրա մեջ արմատավորված է մանկուց (Բ.Տիմ. 3.15): Հակառակ այն բանի, որ Պողոսի նման Տիմոթեոսն էլ դիմագրավում էր կասկածամիտ մարդկանց, երկուսն էլ ապրում էին հավատալով, որ «Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է ու օգտակար՝ սովորեցնելու և հանդիմանություն, ուղղելու և արդարություն մեջ խրատելու համար: Որպեսզի Աստծու մարդը կատարյալ լինի, ամեն բարի գործի համար պատրաստված» (Բ.Տիմ. 3.16-17):

Աստծո իմաստնությունը պահելով մեր սրտերում՝ մենք էլ կարող ենք լինել «քայլող Աստվածաշունչ» և ուր էլ որ լինենք, կկարողանանք բաժանել Աստծո հավիտենական հույսը:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, հագեցրո՛ւ մեր սրտերը կյանք փոխող Քո իմաստնությամբ, որպեսզի հավատարմորեն ու արիաբար կարողանանք ուրիշներին հայտնել Քո խոսքը: Ամեն:

**Լցվե՛նք Ասծո Սուրբ Խոսքով և սովորե՛նք, որդեսզի կարողանանք այն բաժանել ուրիշներին:**

Աստճուց է զորությունն ու փառքն իմ, Աստված է օգնականն իմ և Աստճու վրա է հույսն իմ: (Մաղմ. 61. 8)

## ԱՍՏՃՈՆ ԿԱՄՔԸ

**Ա**ստճոն կամքին հետևելը դժվար է: Այն մեզանից պահանջում է ճիշտ քայլեր կատարել, կարողանալ առանց դանդատվելու դիմադրավել դժվարություններին, սիրել չսիրվելիք մարդկանց, լսել մեր ներքին ձայնը, որը կհուշի ճիշտն ու սխալը: Փաստորեն ամբողջ օրը մեր հոգիներին ասելու ենք. «Ո՛վ հոգի, լսի՛ր, լսի՛ր: Արա՛ այն, ինչ որ Հիսուսն է ասում, որ անես»:

«Միայն Աստճո՛ւն հնազանդ եղիր, հոգի՛ իմ, քանզի նրանից է փրկությունս» (Մաղմ. 61.2): «Աստճուց է զորությունն ու փառքն իմ, Աստված է օգնականն իմ և Աստճու վրա է հույսն իմ» (Հմ. 61. 8) այս երկու համարները նման են և միաժամանակ՝ տարբեր: Մի դեպքում Դավիթը դիմում է իր հոգուն, մյուսում՝ նկարագրում է իր հոգին: Աստվածաշնչի մեկ այլ թարգմանություն էլ ասում է. «Լուռ սպասի՛ր», որն արդեն որոշում ընդունելու և մտքի վիճակի մասին է: «Լուռ սպասի՛ր» ասելով՝ Դավիթն իր հոգուն մղում է հիշել այդ որոշումը: Դավիթը որոշում է ապրել լուռության մեջ և լուռ հանձնվել Աստճոն կամքին: Սա է նաև մեր կոչումը, այն, ինչի համար մենք ստեղծված ենք: Մենք խաղաղություն կունենանք, երբ համաձայնենք. «ոչ թե իմ, այլ քո կամքը թող լինի» (Ղուկ. 22.42): Սա է մեր առաջին ու գերագույն կոչումը, երբ Իրեն դարձնում ենք մեր Տերն ու ցանկությունների աղբյուրը: Մաղմոսերգուն ասում է. «Ուզեցի կամքդ կատարել, Աստվա՛ձ իմ, և օրենքդ, որ իմ ներսում է» (Մաղմ. 39. 9): Անշուշտ, մենք միշտ խնդրելու ենք Աստճոն օգնությունը, որովհետև «Աստճո վրա է մեր հույսը» (61.8): Երբ խնդրենք Իր օգնությունը, Նա կտա մեզ: Աստված երբեք մեզ չի ասում անել մի բան, որ Ինքը չի ուզում կամ չի անում:

**Աղոթք** - Հայր, միշտ չեմ կարողանում Քո կամքը հասկանալ, բայց խնդրում եմ՝ օգնի՛ր, որ նրան հանձնվեմ: Տու՛ր ինձ հանձնվել կամեցող մի սիրտ: Ամեն:

**Ասճոն կամփն հանձնվելը կարող է մեզ համար դժվար թվալ, սակայն դասրաս լինենք լուռ վստահել Իր կամփն:**

Մշտապես աղոթեցե՛ք ու գոհունակությամբ արթուն կացեք նրա մեջ: (Կող. 4.2)

## **ՇՆՈՐՀԱԿԱԼ ՍԻՐՏ**

Հոռմեացի մեծ փիլիսոփա Սենեկային Մեսսալինա իշխանուհին մեղադրեց շնության մեջ, և Ծերակույտը նրան մահվան դատապարտեց: Հավանաբար կասկածելով, որ դատավճիռն անարդար է ու սխալ, Կլավդիոս կայսրը Սենեկային աքսորեց Կորսիկա կղզի: Շատ հնարավոր է, որ այս փոփոխությունն էլ ձևավորեց փիլիսոփայի տեսակետը շնորհակալության մասին: Նա գրել է. «Մարդասպաններ, բռնակալներ, գողեր, ավազակներ, շնացողներ, սրբապիղծ մարդիկ միշտ էլ կլինեն, սակայն ամենափատը անշնորհակալն է»:

Սենեկայի ժամանակակից Պողոս առաքյալը կհամաձայնի այս մտքին: Հոռմեացիներին ուղղված նամակում նա գրում է, որ մարդկության անկման պատճառներից մեկն այն է, որ նրանք հրաժարվեցին շնորհակալություն հայտնել Աստծուն: Իսկ կողոսացիներին ուղղված նամակում նա երեք անգամ իր հավատակիցներին հորդորում է շնորհակալ լինել: «Ինչպես որ սովորել եք, նրա մեջ գոհությունը աճելով» (Կող. 2.7), «Աստծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և կանչվեցիք մեկ մարմնով, ու գոհացո՛ղ եղեք» (3.15): «Մշտապես աղոթեցե՛ք ու գոհունակությամբ արթուն կացեք նրա մեջ» (4.2):

Աստծո արած բարությունները մեզ հիշեցնում են կյանքի մեծագույն իրականությունը: Նա ոչ միայն արժանի է մեր սիրոն ու պաշտամունքին, այլև մեր շնորհակալ վերաբերմունքին ու երախտապարտ սրտերին: Որովհետև «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում, լույսի Հորից» (Հակ. 1.17):

**Աղոթք** - Հայր, ների՛ր ինձ, երբ Քո տված օրհնությունները սովորական են նկատում: Իմ ներսում ստեղծի՛ր շնորհակալ մի սիրտ, որպեսզի պատվեմ ու պաշտեմ Քեզ՝ Քո բոլոր արածների համար: Ամեն:

**Վայելում ենք բազում օրհնություններ, չմոռանանք շնորհակալ լինել նրան, ով այդ բոլորը տարգելում է մեզ:**

Տերը քեզ հետ է, ո՛վ գորավոր կտրիճ: (Դատ. 6.12)

## **ԳՋՈՐ ՌԱԶՄԻԿԸ**

**Դ**ի ի թ էմանը մի սովորական, երիտասարդ հոլանդացի կին էր, որ ընտանիքի ու բարեկամների հետ ուրախ ժամանակ էր անցկացնում, երբ 1940-ին գերմանացիները գրավեցին երկիրը: Հետագայում նա գրեց.«Երբ վտանգը դուռնդ շեմին է, ուզում ես ջայլամի կեցվածք ընդունելով՝ գլուխդ թաղել հողի մեջ»: Բայց ինքը այդպես չվարվեց: Նա զգաց թշնամուն դիմադրելու Աստծո կոչը, որը պահանջում էր նույնիսկ կյանքը վտանգելով՝ հրեաներին ու մյուս հալածյալներին ապաստան գտնել: Եվ այդ անվստահ ու վարանոտ կինը դարձավ Աստծո ռազմիկ:

Աստվածաշնչում Դի ի թի պատմության նման բազում պատմություններ կան, որոնցում Աստված Իրեն ծառայելու համար օգտագործում է այդպիսի անհավանական թվացող մարդկանց: Օրինակ, երբ Աստծո հրեշտակը մոտեցավ Գեդեոնին, հայտարարեց. «Տերը քեզ հետ է, ո՛վ գորավոր կտրիճ» (Դատ. 6.12): Բայց Գեդեոնը գորավոր լինելուց շատ էր հեռու: Նա կալում ցորեն էր կալում՝ փախուստ տալով մադիամացիներից (Հմ. 1-6,11): Նա Իսրայելի ամենաթույլ տոհմի՝ Մանասեի ցեղից էր և իր ընտանիքի կրտսերը (Հմ.15): Նա պատրաստ չէր հնազանդվելու Աստծո կոչին և նույնիսկ նշաններ խնդրեց, բայց Աստված օգտագործեց նրան՝ հաղթելու մադիամացիներին (տես Գլ.7):

Աստված Գեդեոնի հետ էր ու գինեց նրան Իր «սիրելի զավակների հետ» (Եփ.5.1)՝ տալով բոլոր անհրաժեշտ բաները ապրելու և Իրեն ծառայելու համար:

**Աղոթք** - Հա՛յր, այնքան երախտապարտ եմ, որ ինձ իմ իմացածից տարբեր ես տեսնում: Օգնի՛ր, որ կարողանամ ինքս ինձ տեսնել որպես Քո սիրելի զավակը, որը կարող է Քեզ ծառայելու համար անել մեծ ու փոքր բաներ: Ամեն:

**Թե՛ն ինձնեսս մեզ թույլ ու անզոր եմ գգում, բայց Աստված մեզ կարող է ընճրել Իր փառքի համար մեծ բաներ անելու:**

Ուրիշ ոչ մեկով փրկութիւն չկա: (Գործք 4.12)

### **ՀԱՄԱՐՁԱԿ ՀԱՎԱՏՔ**

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Պրեմ Պրադհանի ինքնաթիռը խփվեց, իսկ ինքը պարաշյուտով իջնելիս վիրավորվեց, ինչի հետևանքով հետագա ամբողջ կյանքում կաղում էր: Մի անգամ նա գրել է.«Կաղ եմ: Տարօրինակ չէ՞, որ Աստված ինձ կանչեց Հիմալայներում Ավետարանը քարոզելու»: Նեպալում էր քարոզում, բայց հարթ չէր նրա անցած ուղին: Տասնհինգ տարուց տասը Պրեմն անցկացրեց 14 տարբեր բանտերում: Եվ շարունակում էր իր համարձակ վկայութիւններ, որը կյանքեր փոխեց, պտուղներ տվեց Քրիստոսի համար: Շատ բանտապահներ ու բանտարկյալներ Հիսուսի պատգամը վերցրին ու տարան իրենց ժողովրդին:

Պետրոս առաքյալին նույնպես հակառակվում էին նրա հավատի համար, բայց Աստված նրան օգտագործեց «մի կաղ մարդու» բուժելու համար (Գործք 4.9), և նա, օգտագործելով առիթը, համարձակ խոսեց Քրիստոսի մասին (Հմ.8-13):

Պետրոսի նման մենք էլ կարող ենք հակառակվողներ ունենալ (Հմ.10-11), բայց մենք ունենք ընտանիքի անդամներ, գործընկերներ, դասընկերներ, որոնք կարիք ունեն լսելու Նրա մասին, որի միջոցով միայն կա փրկութիւն (Հմ.12): Նրա, ով մեռավ մեր մեղքերի համար և որպես Աստծո փրկարար ուժի ապացույց՝ հարութիւն առավ մեռելներից (Հմ.10): Թող նրանք բոլորը լսեն, որ մենք մեր աղոթքով համարձակ հայտարարում ենք Հիսուսի այդ բարի լուրը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո բոլոր արածների համար: Օգնիր Հիսուսի անունով, որ համարձակորեն հայտնեմ իմ հավատի մասին ուրիշներին: Ամեն:

**Եթե հավատում եմք Տեր Հիսուսին, համարձակութիւն ունենանք Նրան դավանելու նաև ուրիշների առաջ:**

Մարդը տանջանքով է ծնվում. արժիվների ծագերը բարձունքներում են ճախրում: (Յոթ. 5.7)

### **ՎԻՐԱՎՈՐԱՆՔ՝ ՎԻՐԱՎՈՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**Ռ**ազիոյի ոսկեգարջան շրջանում ամերիկացի գրող, կատակաբան Ֆրեդ Ալենը սկսեց կատակերգական մի շուտ ծրագիր՝ նպատակ ունենալով ժպիտ պարզեցնել պատերազմներով ու տնտեսական ճգնաժամերով լի աշխարհում ապրող սերնդին: Իսկ նրա զվարճախոսությունները ծնվել էին իր անձնական ցավից: Շատ վաղ զրկվել էր մորից, ապա օտարացել հորից: Փոքրիկ տղան մի օր Նյու Յորքի խառնիճազանջ երթևեկությունամբ փողոցից փրկվել էր՝ լսելով.«Ի՞նչ ես անում: Չե՞ս ուզում մեծանալ ու դժվարություններ ունենալ»:

Հորի կյանքը նման նեղություններով լի իրականություն է: Հավատի մասին նրա առաջին արտահայտություններից մեկը նրան հասցրեց հուսահատության, բարեկամները բազմապատկեցին նրա ցավերը, ավելացրին վերքերը: Նրանք պնդում էին, համոզում, որ Հոբն ընդունի իր սխալները (4.7-8) և սովորի Աստծո սրբագրումից: Այդժամ կկարողանա իր խնդիրների վրա ծիծաղելու ուժ գտնել (5.22):

Հորին հակառակվողները, շատ սխալներով հանդերձ, լավ մտադրություն ունեին (1.6-12): Նրանք չէին կարող պատկերացնել, որ երբևէ այս արտահայտության հերոսներն են դառնալու.«Այսպիսի ընկերների հետ ո՞վ կարիք ունի թշնամիներին»: Նրանք չէին հավատում, որ Հոբը կամոքվեր և կազոթեր իրենց համար (42.7-9), կնշեր նրանց, ովքեր մեղադրեցին Հիսուսին, որը տառապեց, որ դառնա մեծագույն ուրախության աղբյուրը:

**Աղոթք** - Հայր, Հորի բարեկամների նման ես էլ եմ երբեմն մտածում, որ ուրիշների դժվարությունները անտեղի չեն: Խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ կարողանամ Որդուդ Հոգով ապրել և ոչ թե մեղադրողի խոսքերով ու խորհուրդներով: Ամեն:

**Քննադատելու ու նախատելու ցանկություն ունենալիս իմասնություն խնդրեմք Հորից, որդեսգի ծիսքը ասեմք ու անեմք**

Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արծառնին: (Դան. 3.18)

## ԱՍՏԾՈՒՆ ՎԱՍԱՅԵԼ ՆՈՒՅՆԻՍԿ ԶԱԿԱՌԱԿՈՒԹՅԱՆ

### ԴԻՄԱՑ

**Ե**սթերը, մեծացած լինելով ֆիլիպինյան մի ցեղախմբում, որը հակառակ էր քրիստոնեական հավատին, կյանքին սպառնացող հիվանդություն դեմ պայքարում փրկություն ստացավ իր հորաքրոջ՝ Հիսուսին ուղղված աղոթքների շնորհիվ: Եվ այժմ, հակառակ գոյություն ունեցող սպառնալիքների, ղեկավարում է իր բնակավայրի Աստվածաշնչյան ուսումնասիրությունների խմբակը: Նա այդ անում է մեծ ուրախությունամբ՝ ասելով.«Ձեմ կարող դադարել մարդկանց պատմել Հիսուսի մասին, որովհետև իմ կյանքում եմ զգացել Աստծո գործության, սիրո, բարության ու հավատարմության ուժը»:

Աստծոն ծառայելը այսօր էլ հակառակություն է հանդիպում, ինչպես որ իսրայելցի երեք երիտասարդների՝ Սեդրակի, Միսակի ու Աբեղնագովի ժամանակ էր, որոնք որպես աքսորյալ բնակվում էին Բաբելոնում: Դանիելի դրքում կարդում ենք, որ նրանք նույնիսկ մահվան սպառնալիքի ներքո մերժեցին երկրպագել Նաբուգոդոնոսոր թագավորի պատկերով պատրաստված ոսկե արձանի առջև: Նրանք վկայեցին, որ Աստված կարող է իրենց պաշտպանել և նախընտրեցին ծառայել նրան՝ «նույնիսկ եթե իրենց չփրկի» (Դան. 3.18): Երբ նրանք նետվեցին կրակի հնոցի մեջ, Աստված միացավ նրանց տառապանքներին (Հմ. 49), և ի զարմանս բոլորի՝ նրանք փրկվեցին՝ «առանց մազ իսկ խանձվելու» (Հմ.94): Հին ու նոր շատ օրինակներ են մեզ հիշեցնում, որ հավատքի համար տառապանքի ու հալածանքի դիմաց Աստծո Հոգին մեզ հետ է լինում, զորացնում ու պահում է մեզ, երբ մենք հնազանդվում ենք իրեն ամեն պարագայում:

**Աղոթք** - Զայր, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ: Օգնի՛ր, որ անկախ հակառակություններից՝ ես ուրախությամբ Քեզ հետևեմ: Ամեն:

**Ինչ էլ դասահի մեզ, ուխտեմք վստահել Աստծուն, նույնիսկ եթե մեր ակնկալածից քարքար լինեն այդ դասազանքը:**

Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս: (Ես. 9.2)

## **ՄԵԾ ԼՈՒՅԱԸ**

**2** 018-ին տայլանդցի տասներկու տղաներ և ֆուտբոլի իրենց մարզիչը մտան քարայրը՝ որոշելով մի փոքր զվարճանալ: Բայց ջրի հանկարծակի բարձրանալու հետևանքով նրանք ստիպված եղան խորանալ քարայրում և ավելի հեռու գնալ: Փրկարարները նրանց կարողացան ազատել միայն 18 օր անց: Զրասուզակների խմբերը, մաքառելով ջրի ալիքների դեմ, փորձում էին հասնել տղաներին, որոնք բարձրացել էին ապառաժե մի բարձր դարակի վրա՝ ձեռքներին ունենալով միայն վեց լուսարձակներ: Նրանք մթուժյան մեջ օրեր ու ժամեր անցկացրին՝ հուսալով, որ ինչ-որ ձևով օգնություն պիտի հասնի իրենց:

Եսայի մարգարեն նկարագրել է խավարով, բռնությունամբ, ազահուժյամբ ու տազնապով լցված մի աշխարհ (Ես. 8.22): Բացի փլատակներից և առկայծող հուլիսի մոմերից՝ ոչինչ չկար: Եվ այնուամենայնիվ, Եսային պնդում էր, որ այս հուսահատությունը վերջը չէ, որ Աստծո ողորմությունամբ շուտով «այդ նեղությունները տանելու և թոթափելու են» (9.1): Մարգարեն իր ժողովրդին հույս տվեց և մատնացույց արեց այն ժամանակը, երբ Հիսուսը պիտի գա ու ցրի մեղքի առաջացրած խավարը:

Հիսուսը եկավ: Եվ այժմ մենք Եսայի մարգարեի խոսքերը նորովի ենք լսում.«Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում և մահվան ստվերների մեջ, լույս պիտի ծագի» (Հմ.2): Հոգ չէ, թե որքան խավար է գիշերը և հուսահատեցնող են հանգամանքները, մենք չպետք է սուզվենք խավարի մեջ, որովհետև մեծ լույս է բացվելու:

**Աղոթք** - Աստված իմ, երբեմն մտածում եմ, որ համատարած խավարը խեղդելու է ինձ: Դու՛ եղի՛ր իմ լույսը և սիրո փայլուն ճառագայթներով շողա՛ ինձ վրա: Ամեն:

**Երբ մեր շուրջը նայենք, անկասկած կսեսնենք խավարով դառնված մի աշխարհ, սակայն Տերն է մեր մեծ լույսը, հույսն ու փրկությունը:**



իրար հետ հավաքվելը չթողնենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ իրար հորդորենք: (Եբր. 10.25)

### **ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆՔ**

**Մ**եծացել եմ Հարավային մկրտական եկեղեցու հովվի ընտանիքում: Հորս ավագ որդին էի, և իմ պարտականությունն էր ամեն կիրակի ներկա լինել եկեղեցու պաշտամունքին: Միակ բացառությունը հիվանդ լինելն ու բարձր ջերմություն ունենալն էր: Իրականում, սակայն, ես սիրում էի այդ պաշտամունքները և մի քանի անգամ նույնիսկ հիվանդ վիճակում եմ մասնակցել: Հիմա շատ բան է փոխվել, և եկեղեցական արարողություններին կանոնավոր հաճախողների թիվն էլ նախկինի նման չէ: Բացատրությունները տարբեր են ու բազմաթիվ: Հեղինակ Կետլին Նորիսը դրանց հակադարձում է հովիվներից մեկի տված պատասխանն այն հարցին, թե մենք ինչն<sup>՞</sup> ենք գնում եկեղեցի: Նա ասել է.«Եկեղեցի գնում ենք ուրիշների համար: Որովհետև մեկը կարող է ունենալ մեր կարիքը»: Այժմ, իհարկե, սա չէ եկեղեցի գնալու միակ պատճառը, բայց այդ մարդու տված պատասխանը ասես եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի ցանկությունն արձագանքը լինի: Նա խնդրում էր հավատացյալներին հարատևել հավատքի մեջ ու հասնել իրենց նպատակին՝ «Իրար հետ հավաքվելը չթողնել, ինչպես ոմանց սովորությունն է, այլ իրար հորդորել» (Եբր. 10.25): Ինչու<sup>՞</sup>: Որովհետև մեր բացակայությամբ մի շատ էական բան կպակասի՝ «Իրար հորդորելը» (Հմ.25): Մենք կարիք ունենք այդ փոխադարձ քաջալերանքի «իրար նկատմամբ զգուշ լինենք՝ իրար սիրո ու բարի գործերի մղելով» (Հմ.24): Շարունակենք միասին հավաքվել, որովհետև հնարավոր է՝ մեկը ունենա մեր, կամ մենք ունենանք որևէ մեկի կարիքը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, երբ Քեզ պաշտելու և Քո անունը բարձրացնելու համար հանդիպում եմ ուրիշներին, օգնի՛ր, որ կարողանամ նրանց հորդորել: Ների՛ր, որ երբեմն մոռանում եմ այդ բանն անել: Ամեն:

**Ամեն անգամ, երբ դժվարանաս եկեղեցի գնալ, հի՛շի՛ր, որ ինչ-որ մեկը կարող է քո կարիքն ունենալ:**

Որքա՞ն բարի, որքա՞ն վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին: (Մաղմ. 132.1)

### **ՀՈՉԱԿԵԼ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Մ**իջնակարգ դպրոցի 2019 թվականի ավարտական հանդեսին 608 շրջանավարտներ պատրաստվում էին ստանալ իրենց վկայականները: Դպրոցի տնօրենը խնդրեց, որ նրանցից յուրաքանչյուրը ոտքի կանգնի, երբ ինքը կկարդա նրանց ծննդավայրի անունը. Աֆղանստան, Բուլիվիա, Բոսնիա...

Մինչ տնօրենը հնչեցնում էր վաթսուն երկրի անունները, աշակերտները կանգնած ուրախություն ճիչեր էին արձակում: Շատ տպավորիչ ու գեղեցիկ պատկեր էր այդ բազմազանություն միաբանությունը: Մարդկանց միաբանությունը նաև Աստծոն է հաճելի ու սրտամոտ: 132-րդ սաղմոսում, երբ Աստծո ժողովուրդը մտնում էր Երուսաղեմ՝ տարեկան տոնակատարությունը մասնակցելու, հնչում է միաբանության քաջալերանք, հիշեցում, որ հակառակ գոյություն ունեցած տարբերություններին, որոնք կարող են բաժանման պատճառ դառնալ, կենտրոնանան միաբան ապրելու օգուտների վրա (Հմ.1): Միաբանությունը նկարագրված է «ինչպես ցող, որ Հերմոնից ցողվում է Սիոն լեռան վրա» (Հմ.3), «ազնիվ յուղ, որ իջնում է Ահարոնի գլխին ու մորուքին, և մորուքից սահում դեպի նրա զգեստի քղանցքները» (Հմ.2), բուրավետ յուղ, որ օգտագործվում է քահանաներին օծելիս (Ել. 29.7): Այս պատկերները միասին ցույց են տալիս այն ճշմարտությունը, որ միաբանության մեջ Աստծո օրհնությունները այնքան առատորեն են հոսում, որ հնարավոր չէ պարփակել: Երբ Տեր Հիսուսի առաջնորդությամբ միասին հոչակենք մեզ միացնող ընդհանուր կապը, կկարողանանք ընդունել աստվածատուր տարբերությունները և հոչակել ճշմարիտ միաբանության աղբյուրը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնի՛ր ինձ՝ կարողանամ Աստծո բոլոր ժողովուրդների հետ միաբան ապրելու իմ բաժինը կատարել: Ամեն:

**Երբ Աստծո ժողովուրդը միաբանվի, երկնից առաս օրհնություններ կթափվեն:**

Տեսեք, թե Յայրն ինչպիսի՜ սեր շնորհեց մեզ, որ Աստծու որդիներ կոչվենք: (Ա.Յովհ. 3.1)

## **ՃՇՄԱՐԻՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ**

**Ը**նկերուհիս, զննելով իմ նկարած պատկերները, սկսեց նշել իր ֆիզիկական թերուժյունները: Ես խնդրեցի ավելի ուշադիր նայել նկարներին և ասացի. «Իսկ ես տեսնում եմ ամենակարող Արքայից Արքայի գեղեցիկ ու սիրելի աղջկան: Տեսնում եմ Աստծո և այն մարդկանց կարեկից սերը, որոնց սերը, բարությունը, առատաձեռնությունն ու հավատարմությունը փոխել է շատերի կյանքը»: Նկատելով, որ ընկերուհիս արտասովում է, ես առաջարկեցի. «Կարծում եմ՝ դու պսակի կարիք ունես»: Կեսօրից հետո նրա համար ընտրեցինք կատարյալ պսակը, որպեսզի նա երբեք չմոռանա իր ճշմարիտ ինքնությունը:

Անձնապես ճանաչելով Հիսուսին՝ որպես մեր Տեր, կտեսնենք, թե «Հայրն ինչպիսի՜ սեր շնորհեց մեզ, որ Աստծու որդիներ կոչվենք» (Ա.Հովհ. 3.1): Դա մեզ տալիս է հավատքով հարատևելու զորություն, որ «երբ Նա հայտնվի, համարձակություն ունենանք և Նրա դալստյան ժամանակ իրենից չամաչենք» (2.28): Թեև Նա մեզ ընդունում է այնպես, ինչպես կանք, Նրա սերը սրբացնում ու դարձնում է մեզ իր նման (Հմ.7-9): Մենք կկարողանանք ապրել հավատարիմ հնազանդության ու սիրո մեջ (Հմ.10), Նրա ճշմարտությունը մեր սրտերում պահելով և Նրա Հոգին մեր կյանքում մշտապես ունենալով:

Իրականում այդ օրը ընկերուհիս կարիք չուներ պսակի կամ այլ զարդեղենի: Մենք երկուսս էլ կարիք ունեինք հիշելու մեր ինքնությունը՝ այն, որ Աստծո զավակներն ենք:

**Աղոթք** - Սիրո՞ղ Յայր, շնորհակալ եմ այն հիշեցման համար, որ իմ ով լինելը պայմանավորված է իմ պատկանելությամբ: Ես Քոնն եմ, պարզապես Քոնը: Ամեն

**Չակառակ մեր անցյալի թերություններին ու սխալներին՝ մենք սիրված, ընտրված ու ղսակված ենք որդես Աստծո զավակներ:**

Եզեկիան երեսը պատի կողմը դարձրեց և աղոթեց Տիրոջը: (Դ.Թագ. 20.2)

## ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՄԲ

**Ե**րիտասարդ բնապահպան Ջեք Վայնդբերգը 1964-ին ասել է. «Մի՛ վստահիր 30 տարեկանից բարձր որևէ մեկին»: Այդ ակնարկը մի ամբողջ սերնդի ստերեոտիպ դարձավ, ինչի համար Վայնդբերգը հետագայում զղջաց՝ խոստովանելով. «Առանց մտածելու եմ ասել...ամբողջութամբ աղավաղվեց ու սխալ հասկացվեց ասածս»: Երբևէ լսե՞լ ես արհամարհական արտահայտություններ տարբեր սերունդների միջև: Այդպիսի ակնարկների պատճառով կարող են նույնիսկ հարաբերություններ խզվել: Դրանից խուսափելու լավ միջոց կա: Եզեկիան լավ թագավոր էր, բայց հետաքրքրություն չէր ցուցաբերում ուրիշ սերունդների հանդեպ: Երբ նա երիտասարդ տարիքում մահացու հիվանդացավ (Դ.Թագ. 21.1), Աստծուն խնդրեց օգնել իրեն (Հմ.2-3): Աստված նրան ևս տասնհինգ տարի տվեց ապրելու (Հմ.6): Բայց երբ Եզեկիան լուր ստացավ, որ մի օր իր գավակները գերի են տարվելու, արցունք չթափեց ու ասաց. «Բարի է Տիրոջ ասած խոսքը»: Ապա ավելացրեց. «Միայն թե խաղաղություն ու ապահովություն լինի իմ օրերում» (Հմ.19): Հնարավոր է նաև, որ Եզեկիան հաջորդ սերնդի նկատմամբ իր սերը ցույց չի տվել իր առողջության համար: Աստված կոչում է մի սիրո, որը համարձակվում է անցնել բոլոր բաժանարար գծերը: Հին սերունդը նոր ու թարմ տեսլականի և երիտասարդության ստեղծագործական մտքի կարիքն ունի: Երիտասարդներն էլ իրենց հերթին պետք է օգտվեն ավագ սերնդի իմաստնությունից ու փորձից: Հիմա ժամանակը չէ վատաբարո ակնարկների ու կարգախոսների: Այլ հարկավոր է խոհեմաբար փոխանակել գաղափարները: Մենք բոլորս միասին ենք:

**Աղոթք** - Հայր, ներիր ինձ, որ չեմ գնահատել տարբեր սերունդների պատկանող այլ մարդկանց: Ամեն:

**Փոխանակ մեզ հե՛ս գաղափարակից չեղողներին արհամարհելու՝ արժե Աստծո սլած դարգևներով նրանց ծառայել:**

Մենք ոչինչ չթաքցրինք նրանց որդիներից, մյուս սերնդին պատմեցինք օրհնությունն ու զորությունը Տիրոջ և այն սքանչելագործությունները, որ նա արեց: (Սաղմ. 77.4)

## **ՊԱՏԿԵՐԵԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ**

Նուանդական բնակարանները զարդարող կապույտ ու սպիտակ խեցե սալիկները ի սկզբանե պատրաստվում էին Դելֆոս քաղաքում: Դրանք պատկերում էին հուանդական գեղեցիկ բնապատկերներ, ամենուր գտնվող հողմաղացներ կամ աշխատող ու խաղացող մարդկանց:

19-րդ դարում Չարլզ Դիքքենսն իր «Սուրբ Ծննդյան երգը» գրքում գրել է, թե այդ սալիկները գործածված են Սուրբ Իրբը պատկերելու համար: Նա նկարագրել է մի հուանդացու պատրաստած Հին կտակարանը, որը պատված էր Դելֆոս քաղաքի սալիկներով. «Այնտեղ պատկերված էին աբելներ ու կայեններ, փարավոնի աղջիկներ, թագուհիներ... և ծովի ափին՝ առաքյալներ»: Շատ մարդիկ այդ սալիկներն օգտագործում էին որպես դասավանդման գործիք՝ երբ ընտանիքը հավաքվում էր Աստվածաշնչյան պատմություններ լսելու: Այդպիսով նրանք իմանում էին ոչ միայն Աստծո նկարագիրը, այլև արդարության, կարեկցանքի ու ողորմության մասին:

Աստվածաշնչյան ճշմարտությունները այսօր էլ են կիրառելի: 77-րդ սաղմոսը քաջալերում է «Առակով բացել բերանը, սկզբից ևեթ առակներով խոսել, ինչպես լսեցինք ու իմացանք դրանք, և ինչպես մեր հայրերը պատմեցին մեզ» (Հմ.2-3): Ապա շարունակելով՝ խորհուրդ է տալիս մեզ. «Ոչինչ չթաքցնել նրանց որդիներից, մյուս սերնդին պատմել օրհնությունն ու զորությունը Տիրոջ և այն սքանչելագործությունները, որ նա արեց»: Որպեսզի «Որդիները, որ ծնվելու են, ելնեն և պատմեն դա իրենց զավակներին» (Հմ. 4.6):

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, ցույց տու՛ր ինձ ձևեր՝ պատկերացնելու համար այն, ինչ սովորել եմ Քո Խոսքից, որպեսզի ուրիշներն իմանան Քո սքանչելիքները: Ամեն:

**Տերն սղասում է, որ ջանք թափենք Աստվածաճնչից առած մեր դասերը հաջորդ սերնդին փոխանցելու համար՝ դասկերելով Նրա ծանախությունները մեր կյանքում:**

Ամեն մեկը, ինչպես որ սրտում հոժարությամբ կա, և ոչ թե տրտմությամբ կամ հարկադրանքով, որովհետև Աստված սիրում է հոժարությամբ տվողին: (Բ. Կորնթ. 9.7)

## ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ ՏՎՈՂԸ

**Ն** իքոլսը, որ ծնվել էր երրորդ դարում, գաղափար չունենր, որ իր մահից դարեր անց պիտի մարմնավորվեր ու հայտնի դառնար որպես Սանտա Կլաուս: Նա մի սովորական մարդ էր, որ սիրում էր Աստծուն, հոգատար էր մարդկանց հանդեպ և հայտնի էր իր ունեցածը ուրախությամբ նվիրելով ու այլ բարի գործերով: Իմանալով, որ մի ընտանիք խիստ կարիքի մեջ է, նա մի գիշեր եկավ նրանց տան մոտ և ոսկով լի տոպրակը նետեց բաց պատուհանից: Այն ընկավ կոշիկի կամ գուլպայի մեջ, որ վառարանի մոտ դրված էր տաքանալու:

Նիքոլսից շատ առաջ Պողոս առաքյալն էր Կորնթոսի հավատացյալներին հորդորում լինել ուրախությամբ տվողներ: Նա գրում էր Երուսաղեմի քույրերի ու եղբայրների նյութական մեծ կարիքի մասին և քաջալերում, որ առատաձեռն նվիրատվություն անեն. «Որովհետև խնայելով սերմանողը, խնայելով էլ կհնձի, իսկ առատությամբ սերմանողը, առատությամբ էլ կհնձի» (Բ.Կորնթ. 9.6): Որպես արդյունք առատաձեռն տալու՝ «Ամեն բանում ամեն լիությամբ հարստացած կլինեք, որ մեզանով Աստծուն գոհություն է բերում» (Հմ.11):

Հա՛յր, կօգնե՞ս, որ ցնծությամբ կարողանամ տալ ոչ միայն Ծննդյան տոներին, այլև ամբողջ տարվա ընթացքում: Շնորհակալ եմ Քո աննկարագրելի առատաձեռնություն համար, երբ նվիրեցիր Քո «անպատմելի պարգևը»՝ Քո Որդի Հիսուս Քրիստոսին:

**Աղոթք** - Տվո՛ղ Աստված, շնորհակալ եմ, որ ինձ քաջալերում ես դառնալ առատաձեռն տվող, որովհետև Քո տնտեսության մեջ առատաձեռնությունը թե՛ տվողին, և թե՛ ստացողին խոստանում է անսահման օրհնություններ: Ամեն:

**Նկատի ունենալով Քո շուրջը եղած բազում կարիքները՝ առատաձեռնորեն նվիրի՛ր ժամանակդ ու միջոցներդ:**

Դրա համար էլ Տերն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, նրա անունը պիտի լինի Էմմանուել: (Ես. 7.14)

## **ԿԱՏԱՐՅԱԼ ԱՆՈՒՆԸ**

**Օ**գոստոսյան մի շոգ օր ծնվեց մեր երկրորդ որդին: Բայց մենք չէինք կարողանում անվանակոչել նրան, համաձայնության չէինք գալիս որևէ անվան շուրջ: Մեր փոքրիկը երեք օր շարունակ «Մանուկ Ուիլյամն էր», որից հետո վերջապես նրան կոչեցինք Միքիա:

Ճիշտ անուն գտնելը իրականում կարող է մի քիչ դժվար լինել: Բայց ո՛չ Աստծո համար, որը կարողացավ կատարյալ անուն գտնել Նրա համար, ով շատ բան էր փոխելու: Եսայի մարգարեի միջոցով Տերը Աքազ թագավորին ասաց, որ նա «մի նշան» խնդրի իր հավատը զորացնելու համար (Ես. 7.10-11): Թեև թագավորը մերժեց փորձել Տիրոջը, սակայն Նա տվեց մի նշան. «Դրա համար էլ Տերն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, նրա անունը պիտի լինի Էմմանուել»: (Հմ.14): Աստված տվեց մանկան անունը, և Նա հույսի նշան էր լինելու հուսահատ ժողովրդի համար: Անունը տրվեց, ու Մատթեոսը մի նոր իմաստ գտավ դրա մեջ, երբ գրում էր Հիսուսի ծննդյան պատմությունը (Մատթ.1.23): Հիսուսը պիտի լինի «Էմմանուելը»: Նա լինելու է ոչ թե պարզապես Աստծո ներկայացուցիչը, այլ մարմնացած Աստվածը, որ գալիս է մեզքի հուսահատությունից փրկելու Իր ժողովրդին:

Աստված որպես նշան՝ մեզ տվեց Իր Որդուն, որի անունը Էմմանուել է, այսինքն՝ Աստված մեզ հետ է: Այսօր Նա մեզ հրավիրում է ողջագուրելու Էմմանուելին և իմանալու, որ Ինքը մեզ հետ է:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Էմմանուելի՝ Քո Որդի Հիսուսի համար: Թող ուրախանամ ու ցնծամ Իր ներկայությամբ ու սիրով: Ամեն:

**Մեր մութ ու խավար ժամանակներում, հուսահատ վիճակներում Աստված Էմմանուելի միջոցով նոր կյանք է ներճնում:**

Ձանալով Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահել: (Եփ. 4.3)

## ՄԻԱԲԱՆ ՄԱՍԸ

**Դ**յուրերիի Մկրտական եկեղեցին 1800-ական թվականներին բաժանվեց... Հավի ոտքի պատճառով: Պատմության զանազան տարբերակներ կան: Եկեղեցու մի անդամի պատմածի համաձայն՝ երկու մարդ կռվել են ընդհանուր ճաշի ամանում եղած հավի վերջին կտորի համար: Նրանցից մեկն ասել է, թե Աստված պատվիրել է, որ ինքը վերցնի այդ կտորը: Մյուսը հակառակն է պնդել: Նրանք այնքան են զայրացել, վեճն այնքան է թեժացել, որ նրանցից մեկը մի քանի կիլոմետր հեռու հիմնել է Դյուրերիի Մկրտական երկրորդ եկեղեցին: Բարեբախտաբար, տարածայնությունները շուտով կարգավորվել են, և եկեղեցականները խոստովանում էին, որ իրենց բաժանման պատճառը նույնիսկ ծիծաղելի է: Հիսուսը համաձայն է: Իր մահվան նախօրյակին Նա աղոթեց Իրեն հետևողների համար՝ ասելով.«Որպեսզի բոլորը մեկ լինեն, ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ, և ես՝ քո մեջ. որպեսզի նրանք էլ մեր մեջ մեկ լինեն... որպեսզի կատարյալ լինեն միություն մեջ, և աշխարհն իմանա, որ դու ինձ ուղարկեցիր ու սիրեցիր նրանց, ինչպես ինձ սիրեցիր» (Հովհ.17.21-23):

Պողոսն էլ է համաձայն և մեզ հորդորում է. «Ձանալով Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահել: Մեկ մարմին և մեկ հոգի» (Եփ. 4. 3-4), և դրանք չի կարելի բաժանել:

Մենք, որ լալիս ենք մեր մեղքերի պատճառով Հիսուսի կոտրված մարմնի համար, պետք է, որ մեր բարկությունք, բամբասանքներով ու խմբակներով ավելի ծվատենք Իր մարմինը: Ավելի լավ է թույլ տալ, որ մեզ արդարացնեն, քան թե մեղավոր լինենք եկեղեցու բաժանման խայտառակությամբ: Այնպես որ սեղանակցի՛ր տուր հավի ոտքը, հետո էլ՝ մի քանի կարկանդակ:

**Աղոթք** - Երկնավոր հայր, օգնի՛ր, որ կարողանամ լավագույնն անել ուրիշների հետ խաղաղ լինելու համար: Թող որ ես երբեք չբաժանեմ այն, ինչը Դու ես միավորել: Ամեն:

**Ի՞նչ ես արել և ի՞նչ ես անելու եկեղեցու միաբանության համար:**



Արանից հետո տեսա. ասի շատ ժողովուրդ, որին ոչ ոք չէր կարող հաշվել, ամեն ազգից ու ցեղերից և բոլոր ժողովուրդներից ու լեզուներից: (Քայտն.7. 9)

## **ՄԵԾ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ**

**Կ**իրակի առավոտյան մեծ ուրախությամբ հավաքվեցինք պաշտամունքի: Թեև թագավարակի պատճառով միմյանցից հեռու էինք մնալու, սակայն ողջունեցինք Քեյվինի ու Թիջանայի ամուսնութիւնը: Մեր իրանցի ընկերները պաշտամունքի արարողութիւնը սփռեցին համացանցով, և մեր ընկերները Իսպանիայից, Լեհաստանից ու Սերբիայից նույնպես մասնակցեցին: Այս ստեղծագործական մոտեցումը մեզ օգնեց հաղթահարել սահմանափակումները և իրապես ուրախանալ նորապսակների արտասանած երդման խոսքով:

Այդ կիրակի առավոտյան մեր բազմազգ համայնքի հետ միասին լինելը գալիք փառքի փոքր տարբերակն էր ասես, երբ մարդիկ «ամեն ազգից ու ցեղերից և բոլոր ժողովուրդներից ու լեզուներից» կանգնելու են Աստծո առաջ (Հայտն. 7.9): Սիրելի աշակերտը՝ Հովհաննեսը, Հայտնության գրքում նկարագրում է, որ տեսիլքի մեջ ինքը հայացք է նետում այդ մեծ բազմությանը: Բոլոր հավաքվածները՝ հրեշտակների ու երեցների հետ երկրպագում էին Աստծուն՝ ասելով. «Ամեն. օրհնութիւնը, փառքը, իմաստութիւնը, գոհութիւնը, պատիվը, կարողութիւնը և զորութիւնը մեր Տեր Աստծուն լինեն հավիտյանս հավիտենից» (Հմ.12): Տարբեր ազգերի մարդկանց հետ անցկացվող կիրակնօրյա եկեղեցական պաշտամունքը մատնանշում է այս իրադարձութիւնը, որ մի օր վայելելու ենք բոլորս:

Հուշտով սպասելով այդ ուրախ իրադարձությանը՝ մենք կարող ենք ընդունել Աստծո ժողովրդի մեջ եղած հյուրասիրության և ուրախության բարի սովորութիւնը:

**Աղոթք** - Աստծո՛ Գառնուկ, դու վերցնում ես աշխարհի ու իմ մեղքը: Շնորհակալ եմ երկնային հարսանիքի ամենահիանալի հրավերն ինձ տալուդ համար: Ամեն:

**Քո ամենօրյա կյանքն աղոթի՛ր այնպես, ասես հրավեր ես սացել երկնային տոնակատարության մասնակցելու:**

Նա ինձ կորզեց իմ ուժեղ թշնամիների ու ինձ ատողների բռնությունից: (Բ. Թագ.22.18)

### **ԶՁՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՑ ՓՐԿՎԱԾԸ**

**2010** թվականին 94-ամյա Ջորջ Վուլյնովիչը Նյու Յորք Թայմս հանդեսի կողմից պարգևատրվեց բրոնզե աստղով՝ երկրորդ համաշխարհային պատերազմում ցուցաբերած փրկարարական ջանքերի համար: Վուլյնովիչը Միացյալ Նահանգներ ներգաղթած սերբի զավակ էր և միացել էր ամերիկյան բանակին: Երբ հայտնի դարձավ, որ գերմանական օդուժի կողմից խորտակված ինքնաթիռների օդաչուները պատսպարվել են Հարավսլավիայի անտառներում, Ջորջը վերադարձավ իր հայրենիք և անտառներում պարաշյուտով սկսեց որոնել օդաչուներին: Զինվորներին բաժանելով խմբերի՝ նրանց սովորեցրեց, որ սերբական հագուստ հագնելով ու նրանց ուտելիքներն ուտելով՝ կարելի է խառնվել սերբերին և օգնել գերյալներին: Հետո ամիսներ շարունակ C-47 ինքնաթիռներով անտառային բացատներ էր ուղարկում խմբեր, որոնք կարողանում էին բերել գերվածներին: Վուլյնովիչն այդպիսով ազատեց 512 զինվորի: Դավիթն էլ է նկարագրում թշնամուց փրկվածների ցնձությունը: Նրանք շրջափակված էին, ու չկար փախուստի որևէ հնարավորություն: Սակայն Աստված «երկնքի բարձունքներից ինձ ձեռք երկարեց և ինձ դուրս բերեց հորդառատ ջրերից», - ասում է նա (Բ.Թագ. 22.17): Սավուղ թագավորը, նախանձից կատաղած ու արյան ծարավի, հետապնդում էր Դավիթին: Բայց Աստված այլ ծրագրեր ուներ: Դավիթը պատմում է. «Նա ինձ կորզեց իմ ուժեղ թշնամիների ու ինձ ատողների բռնությունից» (Հմ.18): Աստված Դավիթին ազատեց Սավուղի վրեժխնդրությունից: Փրկեց Իսրայելը եգիպտացիներից: Եվ Հիսուսով եկավ փրկելու մեզ՝ բոլորիս: Հիսուսը փրկում է մեզ մեղքից, չարից ու մահից:

**Աղոթք** - Ամենազոր Աստված, փրկության կարիք ունեմ: Եթե ինձ չօգնես, ես կկորչեմ: Փախուստի միջոց չունեմ, ուստի դիմում եմ քեզ՝ խնդրելով, որ օգնես ինձ: Ամեն:

**Երբ քեզ զգաս Եղսափակված ու հուսահատ, հավատա՛, որ Զիսուսը կգա քեզ փրկելու:**

Քանի որ կարիքավորներն անպակաս են լինելու երկրի վրա, դրա համար էլ այս բանը պատվիրելով՝ ասում եմ.«Քո աղքատ եղբոր և քո երկրում տառապյալ մարդկանց նկատմամբ առատաձեռն եղիր»:(Բ.Օր.15.11)

### **ՀՈԳԱՏԱՐ ԼԻՆԵԼ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ**

**Է**լվիս Սամբրզը, իր տան դուռը բանալով, տեսավ Սմոքի անուկնով կնոջը, որը թիթեղյա դատարկ տուփեր էր հավաքում ու դրանով հոգում իր ապրուստը: Էլվիսը հարցրեց, թե որտեղ է նա քնում: Կինը ցույց տվեց մոտակա տան կողքին մի փոքրիկ հողաշերտ, որի վրա էլ անցկացնում էր գիշերները: Գլխարկով թյուկնից մղված՝ Սամբրզը մի փոքրիկ տնակ կառուցեց, որտեղ նա գոնե ապահով կարող էր քնել: Այս բարեսիրական արարքից հետո նա միտք հղացավ համացանցում բացել «GoFundMe» հարթակը և համագործակցելով տեղական եկեղեցիների հետ՝ միջոցներ հայթայթել անօթևան մարդկանց համար ապաստարաններ կառուցելու նպատակով:

Աստվածաշունչը հիշեցնում է Աստծո ժողովրդին, որ հոգատար լինեն կարիքավորների հանդեպ: Երբ Աստված Մովսեսի միջոցով խոսեց Իսրայելի ժողովրդի հետ և նրանց պատրաստում էր մտնելու խոստացված երկիրը, ասաց. «Առատաձեռն եղիր նրա նկատմամբ, նրան պարտք տո՛ւր այնքան, որքան կխնդրի նա իր կարոտով յանձնել» (Բ.Օր. 15:8): Այս հատվածը ցույց է տալիս նաև, որ երկրի վրա միշտ էլ լինելու են աղքատներ (Հմ.11): Դա ստուգելու համար պետք չէ շատ հեռու գնալ: Ինչպես Աստված կոչ արեց իսրայելցիներին, որ ձեռքերը լայն բացեն իրենց ազգակիցների համար, այնպես էլ մենք միջոցներ պետք է գտնենք աղքատ ու կարիքավոր մարդկանց օգնելու համար:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ կարողանամ միջոցներ գտնել՝ օգնելու իմ շրջապատին: Խնդրում եմ՝ տու՛ր ինձ առատաձեռնություն ու գթասրտություն: Ամեն:

**Սեր շուրջը մի՞տ էլ կլինեն աղփասներ: Կարևորն այն է, թե մենք ինչ ենք անելու նրանց հանդեպ հոգասար լինելու համար:**

Որովհետև միտքս չէի դրել ձեր մեջ մի ուրիշ բան իմանալ, բայց միայն Յիսուս Քրիստոսին, այն էլ՝ խաչվածին: (Ա.Կորնթ. 2. 2)

## **ՅԵՐՈՍՆԵՐԸ, ԲՈՆԱՊԵՏՆԵՐՆ ՈՒ ՅԻՍՈՒՍԸ**

**Բ**եթՏովները զայրացած էր: Սկզբում նա մտադիր էր իր երրորդ սիմֆոնիան անվանել «Բոնապարտ»: Կրոնական ու քաղաքական բռնատիրություն ժամանակաշրջանում նա Նապոլեոնին էր տեսնում որպես հերոս ու ազատության խորհրդանիշ: Բայց երբ Ֆրանսիացի զորավարը իրեն կայսր հռչակեց, կոմպոզիտորը փոխեց մտադրությունը: Դատապարտելով իր նախկին հերոսին՝ որպես անառակ ու բռնապետ, նա այնքան զայրույթով ջնջեց Բոնապարտի անունը, որ նոտաների թուղթը պատռվեց: Հիսուսի վաղեմի հավատացյալները նույնպես պետք է, որ հիասթափված լինեին, երբ նրանց քաղաքական բարեփոխումների հույսերը խորտակվեցին: Նա կյանքի հույս էր ներշնչել՝ առանց Կեսարի ծանր հարկերի, բռնության ու ռազմական ներկայության: Սակայն տասնամյակներ անց էլ Հռոմը իշխում էր աշխարհին, և Հիսուսի վկաները մնացել էին վախի, սարսափի ու վհատության մեջ: Նրա աշակերտները մատնվել էին անհուսության ու երկպառակությունների (Ա.Կորնթ. 11-12, 3. 1-3): Բայց տարբերություն կար: Պողոսը անփոփոխ մնացած բաներից այն կողմ էր տեսնում: Նրա նամակները հեղեղված էին, սկսվում ու ավարտվում էին Քրիստոսի անունով, հարուցյալ Քրիստոսի վերադառնալու խոստումով: Առաջին և ամենակարևոր բանը, որ Պողոսը ցանկանում էր, այն էր, որ Հիսուսին հավատացողները հիմնվեին Նրա խաչվելու իմաստի ու հետևանքների վրա (2.2, 13. 1-13): Հիսուսի զոհաբերությամբ արտահայտված սերը Նրան դարձրեց այլ տեսակի առաջնորդ: Նրա խաչը փոխում է ամեն բան: Հիսուսի անունը հավիտյան հայտնի պիտի լինի ու փառավորվի բոլոր անուններից ավելի:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ օգնիր, որ տեսնեմ Քո սիրտը՝ Քո Որդու զոհաբերության մեջ: Ամեն:

**Տե՛ր Յիսուս, Աստ՜ Որդի՜ն արքե՛ր է բոլոր հեռուներից ու բռնադատներից:**

Սակայն շուտով Աստված նորից գթալու է ձեզ, վեր է կենալու, որպեսզի ողորմի ձեզ... Երանի՜ բոլոր նրանց, ովքեր սպասում են նրան: (Ես. 30.18)

## **ԱՐԺԱՆԻ ՄՊԱՍՈՒՄ**

**Ջ**եյմսը զբաղված էր շատ երկար ու ճնշող աշխատանքով և առիթ էր փնտրում, որ դուրս գար: Սակայն նա պարտականություն ուներ իր ընտանիքի՝ կնոջ ու երեխաների հանդեպ: Մի անգամ նա փորձել էր հրաժարվել այդ գործից, բայց կինը հորդորել էր. «Ե՛կ համբերենք, տեսնենք՝ Աստված ինչ կտա մեզ»:

Ամիսներ անց նրանց աղոթքները արդյունք ունեցան: Ջեյմսը գտավ մի նոր ու ավելի հարմար աշխատանք և սկսեց ավելի շատ ժամանակ անցկացնել իր ընտանիքի հետ: Նա ասում է. «Շատ երկար ու դժվարին էին այդ ամիսները, բայց ես ուրախ եմ, որ սպասեցի Աստծո ծրագրի իրագործմանը»:

Նեղույթյունների պահին Աստծո օգնությունն սպասելը դժվար է, և մարդիկ նախ փորձում են ինքնուրույն լուծումներ գտնել: Իսրայելցիները նույն կերպ վարվեցին. երբ իրենց թշնամիների սպառնալիքի ներքո էին, Աստծուն դիմելու փոխարեն օգնություն փնտրեցին Եգիպտոսից (Ես. 30.2): Բայց Աստված նրանց ասաց, որ եթե ապաշխարեն և հույսը դնեն Իր վրա, կգտնեն ուժ և փրկություն (Հմ.15): Եվ ավելացրեց. «Աստված նորից գթալու է ձեզ, վեր է կենալու, որպեսզի ողորմի ձեզ» (Հմ.18):

Աստծուն սպասելը հավատք և համբերություն է պահանջում: Բայց վերջում տեսնելով մեր սպասումի պատասխանը՝ կհասկանանք, որ արժեր սպասել: «Երանի՜ բոլոր նրանց, ովքեր սպասում են նրան» (Հմ.18): Եվ ամենազարմանալիին էլ այն է, որ Աստված սպասում է, որ մենք դառնանք Իրեն:

**Աղոթք** - Հայր, տու՛ր ինձ համբերություն, որպեսզի սպասեմ Քո պատասխանին: Գիտեմ, որ Դու բարի ու սիրող Աստված ես, որի կամքն ու ժամանակը միշտ կատարյալ են: Ամեն:

**Եթե ունես աղոթքի խնդրանքներ, վստահի՛ր Նրա հավասարմությանն ու սիրոն և հավասա, որ ժամանակին Նա կգա քո բոլոր խնդրանքների դասասխանները:**

Ես աղոթքի կանգնեցի ու միտքս ուղղելով երկնքի Տեր Աստծուն՝ ասացի քազավորին: (Նե. 2. 4)

## ԻՆՉ ԵՄ ԱՍԵԼՈՒ

Հին գրքերի խանութում թերթում էի Ք. Լուիսի գրքերը, երբ եկավ խանութի տերը: Եվ մենք սկսեցինք խոսել այն մասին, թե արդյո՞ք հեղինակը իրոք հետաքրքրված է այն հավատով, որի մասին այդքան ներշնչված հատորներ է գրել: Ես լուռ աղոթեցի՝ Աստծուց խնդրելով առաջնորդություն: Մտաբերեցի Լուիսի կենսագրությունից որոշ դրվագներ, ու մենք սկսեցինք քննարկել, որ նրա կերպարը ինչ-որ կերպ Աստծուն է մատնանշում: Ես շնորհակալ էի, որ մի արագ աղոթքը վերափոխեց մեր խոսակցության ընթացքն ու այն դարձրեց հոգևոր հարցերի շուրջ:

Նէեմիան էլ մի պահ կանգ առավ ու աղոթեց այն վճռորոշ պահին, երբ զրուցում էր Արտաշես թագավորի հետ: Արքան հարցնում էր, թե ինչպես կարող է օգնել Երուսաղեմի կործանման պատճառով վրդովված իր սպասավորին: Նէեմիան շատ էր ուզում վերականգնել իր հայրենի Երուսաղեմը: Ուստի նախքան արքային իր խնդրանքը հայտնելը՝ նա աղոթեց երկնքի Տեր Աստծուն (Նե. 2. 4): Թագավորը համաձայնեց, նույնիսկ խոստացավ օգնել ոչ միայն նրա ճամփորդությանը, այլև կարգադրեց տրամադրել ծրագրի համար անհրաժեշտ փայտը: Աստվածաշունչը խրախուսում է մեզ.«Աղոթքով ու աղաչանքով՝ աղոթք արեք, ամեն ժամանակ՝ Հոգով» (Եփ. 6.18): Խոսելուց առաջ աղոթելը մեզ կօգնի, որ մենք Աստծուն հանձնենք մեր վերաբերմունքի ու խոսքերի վերահսկման պարտականությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, իմ խոսքերը համձնում եմ Քեզ: որձածի՛ր դրանք Քո փառքի համար: Օգնի՛ր, որ դրանք ներշնչեն ու քաջալերեն ուրիշներին: Ամեն:

**Եթե չգիտեմ՝ ինչ ասել, դիմեն՛ք Ասծուն և Նա կօգնի մեզ:**



Աչքը չի կարող ձեռքին ասել. «Ինձ պետք չես»: (Ա.Կորնթ. 12.21)

## **ԻՐ ՁԵՌՔԵՐՆ ԵՍ**

**2**000 թվականին Ջիա Հեյքսիան կորցրեց տեսողությունը, իսկ նրա ընկեր Ջիա Ուենգին մանկուց կորցրել էր ձեռքերը: Բայց նրանք գտել էին հաշմանդամությունը հաղթահարելու ձևը: Հեյքսիան ասում էր.«Ես իր ձեռքերն եմ, ինքը՝ իմ աչքերը»: Այդպես միասին նրանք նույնիսկ որոշեցին վերափոխել իրենց գյուղը Ջինաստանում:

2002 թվականից ի վեր այս երկու ընկերները մտադրվել էին մշակել իրենց տան մոտակա տարածքը: Ամեն օր ձեռք չունեցող ընկերը շալակում էր կույր ընկերոջը, որ անցնեին գետը և հասնեին իրենց մշակելիք վայրը: Այնուհետև երկու հաշմանդամները միայն իրենց հայտնի եղանակներով, միմյանց օգնելով, աշխատում են, և երբեմնի անապատը արդեն դարձրել են այգեստան, 10 հազար ծառ են տնկել: «Միասին աշխատելով մենք մեզ բոլորովին հաշմանդամ չենք զգում: Մենք մի խումբ ենք»:

Պողոս առաքյալը եկեղեցին նմանեցնում է մարմնի, որի յուրաքանչյուր մասը անհրաժեշտ է մյուսի համար: «Եթե ամբողջ մարմինն աչք լիներ, լսելիքը որտե՞ղ կլիներ, և եթե ամբողջ մարմինը լսելիք լիներ, հոտոտելիքը որտե՞ղ կլիներ» (Ա.Կորնթ. 12.17): «Աչքը չի կարող ձեռքին ասել՝ ինձ պետք չես» (Հմ.21): Մեզանից յուրաքանչյուրը եկեղեցում դեր ունի կատարելու՝ հիմնվելով մեր հոգևոր պարգևների վրա (Հմ. 7-11, 18): Երկու հաշմանդամ ընկերների նման, երբ համատեղենք մեր ջանքերը, կկարողանանք փոփոխություն մտցնել աշխարհում:

Երկու մարդիկ համատեղեցին իրենց կարողությունները՝ ծաղկեցնելու անապատը: Գործի լծված եկեղեցու ի՛նչ հիանալի պատկեր:

**Աղոթք** - Սու՛րբ Հոգի, շնորհակալ եմ, որ ինձ տալիս ես հոգևոր պարգևներ և ինձ դնում ես մի մարմնի մեջ, որտեղ ես անհրաժեշտ եմ: Ամեն:

**Հիմնվելով ԲՈ Հոգևոր Դարգևների վրա՝ ի՞նչ դեր կարող ես խաղալ Քրիստոսի մարմնի մեջ:**







Սրտերից մոռացվեցի ես ինչպես մեռյալ և նմանվեցի անպետք անոթի: (Սաղմ. 30.13)

### **ԳԵՂԵՑԿՈՐԵՆ ԿՈՏՐՎԱԾ**

**Մ**եր ավտորուսը վերջապես հասավ Իսրայելի հնազիտական պեղումների այն վայրը, որտեղ մենք աշխատելու էինք: Տնօրենը բացատրեց, որ մեր հայտնաբերած յուրաքանչյուր իր հազարավոր տարիներ անձեռնմխելի է եղել: Խեցեգործության նմուշների կոտրած բեկորները գտնելով՝ մենք հասկանում էինք, որ պատմությունն ենք շոշափում: Որոշ ժամանակ անց մեզ տեղափոխեցին աշխատանքի մեկ այլ վայր, որտեղ այդ փշրված ծաղկամանների կտորտանքները միացնում էին իրար:

Պատկերը պարզ էր: Դարեր առաջ կոտրված խեցեղենի վերականգնումը ցույց էր տալիս, որ Աստված սիրում է կոտրված բաներ նորոգել:

30-րդ սաղմոսի 13-ում Դավիթը գրում է.«Սրտերից մոռացվեցի ես ինչպես մեռյալ և նմանվեցի անպետք անոթի»: Թեև այս սաղմոսը գրելու առիթը նշված չէ, բայց Դավիթի կյանքի դժվարությունները հաճախ են իրենց ձայնը լսելի դարձնում այդ ողբի մեջ, ինչպես այս մեկում է: Երգում նա կոտրված է պատկերվում վտանգի, թշնամիների ու հուսահատության պատճառներով:

Իսկ ու՞ր դիմեց օգնության համար: 17-ում Դավիթն աղաղակում է. «Ցու՛յց տուր երեսդ քո այս ծառային, պահպանի՛ր ինձ, Տե՛ր, քո ողորմությունը»:

Աստվածը, որ Դավիթի վստահության առարկան էր, նույնն է և դարձյալ նորոգում է կոտրված բաները: Նրա միակ խնդրանքն է, որ կանչենք ու վստահենք Իր անսպառ սիրուն:

**Աղոթք** - Օգնության Աստված, շնորհակալ եմ բոլոր այն ժամանակների համար, երբ ընկած ու կոտրված էի, և Դու վերականգնեցիր ինձ: Ամեն:

**Կոտրվածության զգացում ունես: Աստված մի՞տո՞ղարհաս է օգնելու և բարձրացնելու քեզ:**

Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատը պահեցի: (Բ.Տիմ. 4.7)

## **ԿԵՑՑԵՄ**

**Դ**պրոցը, որտեղ որդիս՝ Բրայընը, ֆուտբոլի մարզիչ է, չկարողացավ պահպանել առաջին տեղը: Նրանց մրցակիցը անպարտելի էր: Երբ ես ցավ հայտնեցի այդ առիթով, որդիս պատասխանեց.«Երեխաները պայքարեցին»:

Խաղից հետո որևէ մարզիչ ամոթանքի կամ հանդիմանություն խոսքի չի ասել այս կամ այն խաղային դրվագի կամ սխալ քայլի համար:

Նույն իմաստով էլ Հիսուսին հավատացողները Նրանից չեն լսի դատապարտություն կոպիտ խոսք: Երբ Քրիստոսը գա, ու մենք Նրա առջև կանգնենք, մենք ամոթով չենք լինի, որովհետև Նա տեսնում է, թե Իրեն հետևելով՝ ինչ ենք արել (Բ.Կորնթ. 5.10, Եփ. 6.8): Ենթադրում եմ, որ Նա այսպիսի բառեր կասի. «Դուք պայքարեցիք: Կեցցեք»: Պողոս առաքյալը վկայում է. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատը պահեցի: Այսուհետև մնում է ինձ արդարություն պսակը, որ Տերը՝ արդար դատավորը, կտա ինձ» (Բ.Տիմ. 4.7-8):

Կյանքը անխնա պայքար է կատարի, անզիջում թշնամու դեմ, որը տենչում է մեր պարտությունը: Նա դիմադրում է Հիսուսին նմանվելու և ուրիշներին սիրելու մեր յուրաքանչյուր ջանքին: Այդ ճանապարհին կլինեն հաղթանակներ ու պարտություններ: Աստված գիտե: Սակայն Հիսուսով պայքարողների համար չկա հավերժական դատապարտություն (Հռոմ. 8.1): Եթե մենք Նրա առջև կանգնենք Աստծո Որդու արժանիքներով, յուրաքանչյուրս «կստանանք Իր գովասանքը» (Ա.Կորնթ. 4.5):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ այն խոստման համար, որ իբրև փրկիչ ընդունելով Հիսուսին՝ ես երբեք չեմ դատապարտվելու: Ամեն:

**Աստծո առաջ կանգնելու հեռանկարը մեզ վախեցնու՞մ է, թե ուրախացնում: Վախենալու ոչինչ չկա: Փառք Նրա Սուրբ անվանը:**

Աստված հիշեց Ռաբելին, անսաց նրան: (ԾԱՆ. 30.22)

### **ՀԻՇՎԵԼ ԱՂՈԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ**

**Ա** ֆրիկյան մեծ եկեղեցու հովիվը ծնկաչոք աղոթում էր Աստծուն և ասաց. «Հիշի՛ր մեզ»: Աղոթքի պահին ամբոխն էլ լալով կրկնեց.«Տե՛ր, հիշի՛ր մեզ»: Յուրթուբուր անհանելով աղոթքի այդ պահը՝ նկատեցի, որ ես էլ էի լալիս: Աղոթքի այդ նկարահանումն ինձ հիշեցրեց մանկուլթյանս տարիները, երբ մեր ընտանիքի հովիվը նույնպես Աստծուն աղաչում էր՝ հիշել մեզ: Այն ժամանակ ես սխալմամբ կարծում էի, թե Աստված երբեմն մոռանում է մեր մասին, ուստի պետք է հիշեցնել: Բայց Աստված ամենազեղ է ու ամենազոր (Սաղմ. 146.5, Ա. Հովհ. 3. 20), Նա մեզ բոլորիս միշտ տեսնում է (Սաղմ. 32.13-15) և սիրում է մեզ չափից ավելի (Եփ. 3. 17-19):

Նրա հիշելու մասին բազում վկայություններ կան: Այսպես, «Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին: Աստված հողմ բարձրացրեց երկրի վրա, և անձրևը դադարեց» (ԾՄ. 8.1): Հիշեց ամուլ Ռաբելին, «անսաց նրան և բեղմնավոր դարձրեց նրա արգանդը: Սա հղիացավ և Հակոբի համար ծնեց որդի» (Հմ.30. 22-23):

Վստահելով Աստծուն՝ աղոթքով կարող ենք խնդրել, որ Նա հիշի մեզ: Բայց թե ինչպես պետք է պատասխանի այդ խնդրանքին, որոշում է Ինքը: Մենք կարող ենք աղոթել՝ այն վստահ համոզումով, որ մեր խոնարհ խնդրանքին ի պատասխան՝ Աստված կկատարի այն, ինչը պետք է մեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ երկնավոր Հայր, զարգացրո՛ւ իմ ընկալումը, որ հիշում ես ինձ: Հետո, երբ ունենամ Քո օգնության կարիքը, կխնդրեմ հիշել ինձ: Ամեն:

**Կյանքում հաճախ եմ կարիք զգում, որ Աստված հիշի մեզ:  
Աղոթով խնդրեմ նրան այդ մասին:**

Մի՛ վախեցեք, որովհետև... Ձեզ Փրկիչ ծնվեց: (Ղուկ. 2.10-11)

## **ՄԻ՛ ՎԱԽԵՑԵՔ**

Գետնանուշների մասին զվարճալի կոմիքսների հերոսներից Լայնսը հայտնի էր իր կապույտ ծածկոցով: Նա այն տանում էր իր հետ ամեն տեղ, որովհետև դրանով իրեն ապահով էր զգում: Քույրը՝ Լյուսին, ընդհակառակը, չէր սիրում այդ ծածկոցը և նույնիսկ փորձել էր կտրտել: Լայնսը, զգալով, որ կախվածություն է ձեռք բերում այդ առարկայից, երբեմն թույլ էր տալիս քրոջը վերցնել այն, բայց անպայման վերադարձնելու պայմանով:

«Չարլի Բրաունի Սուրբ Ծնունդը» կինոնկարում հիասթափված Բրաունը հարցնում է.«Կա՞ մեկը, որ գիտի՝ ինչի մասին է Ծնունդը»: Այդ պահին Լայնսը, անվտանգություն իր ծածկոցը ձեռքին, բարձրանում է բեմ և մեջբերում Ղուկասի 2. 8-14-ը: Արտասանելով «մի՛ վախեցեք» բառը՝ նա նետում է ծածկոցը, որին կառչած էր իր վախի պատճառով:

Իսկ ի՞նչն է Սուրբ Ծնունդի մեջ հիշեցնում, որ պետք է վախենալ: Հովիվներին երևացած հրեշտակներն ասում են.«Մի՛ վախեցեք, որովհետև Ձեզ Փրկիչ ծնվեց» (Ղուկ. 2.10-11):

Հիսուսը՝ «Աստված մեզ հետ է» (Մատթ. 1.23): Մենք Նրա ներկայությունը զգում ենք իր Հոգու միջոցով, որ իսկական Մխիթարիչն է (Հովհ. 14.16), ուստի պետք է վախենալ: Մենք էլ կարող ենք նետել մեր «անվտանգության ծածկոցները» և վստահել Նրան:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, ես դեռ սովորում եմ, որ Դու ես մեծագույն Մխիթարիչը: Օգնի՛ր ինձ՝ ազատվեմ կեղծ անվտանգություն տվող բոլոր բաներից: Խնդրում եմ առաջնորդի՛ր ինձ, որ ապավինեմ Քեզ: Ամեն:

**Ինչի՞ց ես վախենում: Հի՛շի՛ր, որ Սուրբ Հոգու ներկայությունը կօգնի քեզ**

Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լուսավորում է իմ շավիղները: (Սաղմ. 118. 105)

## ԱՍԾՈ ԿՈՂՄՆԱԳՈՒՅՑԸ

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Վալդեմար Սեմյոնովը, որպես կրտսեր մեքենագետ, ծառայում էր Ալկոա ռազմանավի վրա: Հյուսիսային Կարոլինայի ափերից մոտ երեք հարյուր մղոն հեռու գերմանական մի սուզանավ հայտնվեց ու կրակ բացեց Ալկոայի վրա: Նավում հրդեհ բռնկվեց, ու այն սկսեց խորտակվել: Սեմյոնովն ու իր անձնակազմը, փրկարար նավակ իջեցրին ջուրը և նավի կողմնացույցի օգնությամբ նավարկեցին դեպի բեռնափոխադրման ուղին: Երեք օր անց հսկիչ սավառնակը նկատեց նրանց: Սեմյոնովն ու անձնակազմի ևս 26 անդամ փրկվեցին կողմնացույցի շնորհիվ:

Սաղմոսերգուն Աստծո ժողովրդին հիշեցնում է, որ նրանք գինված են կյանքի կողմնացույցով՝ Աստվածաշնչով: Սուրբ Գիրքը համեմատում է «ճրագի» հետ (Սաղմ. 119. 105), որը լուսավորում է Աստծուն որոնողների կյանքի ուղին: Երբ սաղմոսերգուն կյանքի քաոսային ջրերում էր նավարկում, գիտեր, որ Աստված կարող է օգտագործել Սուրբ Գիրքը՝ հոգևոր երկարություն ու լայնություն ապահովելու և իր գոյատևման համար: Նա ազդեց, որ Աստված իր լույսն ուղարկի՝ իրեն կյանքում ուղղորդելու և անվտանգ հասցնելու իր սուրբ ներկայության հանգրվանը (42.3):

Որպես Հիսուսին հավատացողներ՝ երբ մենք կորցնում ենք մեր ճանապարհը, Աստված իր Սուրբ Հոգով և Խոսքով եղած ուղղություններով կարող է առաջնորդել մեզ: Հետևենք Նրա տված իմաստնությունը:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, շնորհակալություն այն բանի համար, որ երբ ես փորձում եմ հեռանալ, Սուրբ Գրքի իմաստնությունն ինձ հետ է բերում: Ամեն:

**Թույլ տու՛ր, որ կյանքի հորձանուներում Ասծո Սուրբ Խոսքը, որդես իսկական կողմնացույց, ուղղորդի քեզ և առաջնորդի:**

Թեև մարմնով բացակա եմ, բայց հոգով ձեզ հետ եմ: (Կող. 2. 5)

### **ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ե**րբ թագավարակը մոլեգնում էր աշխարհում, առողջապահ-հուլիթյան մասնագետները դրա տարածումը կանխելու համար խորհուրդ տվեցին պահպանել սոցիալական հեռավորություն: Շատ երկրներում մարդիկ ինքնամեկուսանում կամ մեկուսանում էին: Կազմակերպություններն անցան հեռավար աշխատանքի: Շատերի պես ես էլ սկսեցի մասնակցել եկեղեցական առցանց միջոցառումներին: Փաստորեն աշխարհը, ֆիզիկապես իրարից բաժանված լինելով, միասին լինելու նոր ձև կիրառեց:

Միայն համացանցը չէ, որ մեզ հնարավորություն է տալիս պահպանել միասնական լինելու զգացումը: Սուրբ Հոգու միջոցով մենք միմյանց հետ կապվում ենք՝ որպես Քրիստոսի մարմնի անդամներ: Այս գաղափարը դարեր առաջ հայտնել էր Պողոս առաքյալը՝ կողոսացիներին ուղղված նամակում: Նա թեև անձամբ չէր հիմնել այդ եկեղեցիների մեծ մասը, սակայն խորապես հոգատար էր նրանց ու իրենց հավատի հանդեպ: Ու թեև նա անձամբ չէր կարող նրանց հետ լինել, այնուամենայնիվ հիշեցրեց, որ ինքը «հոգով նրանց հետ է» (Կող. 2.5):

Որևէ հեռակա կապ «միասին լինելուց» ավելի ջերմ չի կարող լինել: Նման պահերին մենք էլ Պողոսի նման կարող ենք ուրախանալ միմյանց ունեցած հաստատ հավատի համար և աղոթքով քաջալերել իրար, որպեսզի «նրանց սրտերը մխիթարվեն սիրով իրար միացած, և կատարյալ իմաստություն ամեն ճոխություն հասնեն, այսինքն՝ Աստծու և Հոր և Քրիստոսի խորհուրդն իմանալուն» (Կող. 2.2):

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ հետ ես, նույնիսկ երբ որևէ մեկը չի կարող ֆիզիկապես ներկա լինել:

Շնորհակալություն՝ Սուրբ Հոգու միջոցով ուրիշների հետ լինելու՝ Քո տված կապի համար: Ամեն:

**Քրիստոսի մարմնի այլ անդամների հետ մեր ունեցած կապի համար մեր քաջալերական աղոթքը բարձրացնենք առ Ասված:**

Աշակերտներն առաջինը Անտիոքում «քրիստոնյա» անվանվեցին: (Գործք. 11. 26)

### **ԻՆՉՊԵ՞Ս ԿԻՄԱՆԱՆ**

Հյուսիսային Թաիլանդի «Հավաքը» միջհամայնքային ու միջազգային եկեղեցի է: Վերջերս Կորեայից, Գանայից, Պակիստանից, Բանգլադեշից, Միացյալ Նահանգներից, Ֆիլիպիններից և այլ երկրներից հավատացյալներ էին հավաքվել համագումարի: Նրանք կատարեցին «Միայն Քրիստոսով» և «Ես Աստծո զավակն եմ» երգերը, որոնք այդ միջավայրում շատ հուզիչ էին:

Ոչ ոք չի կարող մարդկանց այնպես հավաքել, ինչպես Հիսուսը: Նա այդ բան անում էր ի սկզբանե: Առաջին դարում Անտիոքում կային տասնութ տարբեր ցեղախմբեր, որոնցից յուրաքանչյուրն ապրում էր իրեն հատկացված հատվածում: Երբ առաջին անգամ հավատացյալներն եկան Անտիոք, Հիսուսի մասին լուրը տարածեցին միայն «հրեաների մեջ» (Գործք 11. 19): Բայց Աստծո ծրագիրն այդպիսին չէր: Շուտով ուրիշներն էլ եկան և «խոսում էին հույների հետ՝ քարոզելով Տեր Հիսուսին: Եվ բազմաթիվ մարդիկ հավատացին ու Տիրոջը դարձան» (Հմ. 20-21): Մարդիկ տեսան, որ Հիսուսը վերացնում է հրեաների ու հույների միջև եղած դարավոր թշնամանքը և հայտարարեցին, որ այս բազմազգ եկեղեցին պետք է կոչել «Քրիստոնյաներ» կամ «Փոքր Քրիստոսներ» (Հմ.26):

Մեզ համար կարող է դժվար լինել հատել ազգային, սոցիալական ու տնտեսական սահմանները՝ ողջագուրվելու նրանց հետ, որոնք մեզանից տարբեր են: Բայց այդ դժվարությունը Տեր Հիսուսով մեր գործն անելու առիթ է:

**Աղոթք** - Հիսուս, նրանք թող իմանան, որ ես քրիստոնյա եմ՝ Քո սիրով: Ամեն:

**Եթե մտածում ես, որ դժվար է մեզանից արբեր մարդկանց մոտենալ, Հիսուսը դասրաս է օգնել, որ հավասարմոտեն կասարենք այդ սրբազան դասականությունը:**

Նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ, Սքանչելի խորհրդակից, Աստված հզոր, Իշխան, Հայր հանդերձյալ աշխարհի: (Ես. 9.6)

## **ԽԱՂԱԴՂՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆԸ**

**Ձ**ոնը թոքաբորբով հիվանդանոց տեղափոխվեց: Միաժամանակ նրա մայրն էլ նույն հիվանդանոցի վերին հարկում քաղցկեղից էր բուժվում: Հետևաբար Ձոնը շատ ծանր էր տանում այդ փաստը: Բայց Սուրբ Ծննդյան գիշերը ռադիոյով լսելով «Ո՛վ Սուրբ գիշեր» երգը՝ նա լցվեց աստվածային խաղաղությամբ: «Հոգնած հոգին ցնծում է, քանի որ անցյալը կտրվում է նոր ու փառավոր առավոտով» բառերը Ձոնին մի նոր հույս տվեցին, իր ու մոր առողջության համար եղած անհանգստությունը փարատվեց:

Մեզ ծնած սիրելի Փրկիչը՝ Հիսուսը, «Սքանչելի խորհրդակից է, հզոր Աստված, Իշխան»,-մարգարեանում է Եսային (Ես. 9.6): Հիսուսն իրագործեց այդ մարգարեությունը, երբ աշխարհ եկավ որպես մանուկ՝ Իր հետ բերելով լույս ու փրկություն: «Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում և մահվան ստվերների մեջ, լույս պիտի ծագի» (Մատթ. 4.16, տե՛ս Ես. 9.2): Տեր Հիսուսը մարմնավորում և խաղաղություն է տալիս նրանց, ում սիրում է, նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք դժվարությունների մեջ կամ մահվան շեմին են:

Հիվանդանոցում, մտածելով Հիսուսի ծննդյան մասին, Ձոնը այնպիսի խաղաղություն ապրեց, որը վեր էր ամեն մտքից (Փիլ. 4.7): Ծննդյան գիշերը հիվանդանոցում պառկած, հեռու ընտանիքից՝ Աստծո հետ ունեցած իր հանդիպումը ամրապնդեց նրա հավատն ու երախտագիտության զգացումը: Թող որ մենք էլ ստանանք Աստծո խաղաղությունն ու հույսը:

**Աղոթք** - Խաղաղության Աստված, երբ ես անհանգստանամ ու նեղվեմ ինչ-որ բանից, օգնիր, որ Քեզ դիմեմ և ստանամ խաղաղության Քո պարգևը: Ամեն:

**Նեղություններ, ցավեր ու դժվարություններ մի՞տ էլ կլինեն, բայց մեզ մխիթարելու համար մեզ հետ է Խաղաղության Իշխանը՝ մեր Տերը:**



Այլ իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով ու կերպարանքով մարդու պես գտնվելով: (Փիլիպ. 2. 7)

## **ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՍԱՆՈՒԿԸ**

**Պատկերացրու՛, որ մայրիները ստեղծողն ինքը առաջացել է մի սերմից՝ կյանքն սկսելով որպես սաղմ: Աստղերն ստեղծողը արգանդում է ձևավորվել: Երկինքը լցնողն ինքը սկզբնապես մի կետ է եղել, որը նշմարվել է միայն ուլտրաձայնային սարքի օգնությամբ: Հիսուսը, որ Աստված է «իր անձն ունայնացրեց (Փիլ. 2. 6-7): Ինչպիսի՛ զարմանալի բան:**

Նա ծնվել է գոմում, հովիվների, հրեշտակների և երկնքի փայլուն լույսերի մեջ, նրա առաջին օրորոցայինը եղել են կենդանիների շունչն ու բզզոցը: Այդ մանուկը, հասակ առնելով ու իմաստնանալով, պատանեկան տարիքում արդեն իր ուսուցիչներին զարմացնում էր բարդ հարցերին պատասխան տալով, որպես երիտասարդ՝ Հորդանան գետի մոտ երկնքից ստանում է Հոր հովանավորությունը և անապատում, անոթի ու ծարավ, աղոթում է Հորը: Սկսելով աշխարհը փոխող իր առաքելությունը՝ Նա բուժում է հիվանդներին, դիպչում բորոտներին, ներում պիղծ ու մեղավոր մարդկանց: Պատկերացրու՛ այն պահը, երբ Նա պարտեզում տառապանքով ծնկի է իջած, նրան ձերբակալում են, նրա մոտից փախչում են նույնիսկ ամենամոտ ընկերները: Պատկերացրու՛, թե ինչպես են մարդիկ թքում նրա վրա, ապա նրան գամում խաչին՝ աշխարհի բոլոր մեղքերը զնելով նրա ուսին: Շարունակի՛ր պատկերացնել և կհասնես այն տեղը, երբ կգլորվի Նրա գերեզմանաքարը և կերևա, որ գերեզմանը դատարկ է: Այո, այո՛, որովհետև Նա ողջ է: Պատկերացրու՛, որ «Աստված շատ բարձրացրեց նրան» (Հմ.9): Աստղեր ստեղծողը դարձավ մի փոքրիկ կետ ուլտրաձայնային սարքի ցույց տված պատկերի մեջ: Եվ Դա մեր Սուրբ Ծննդյան Մանուկն է:

**Աղոթք** - Դիսուս, շնորհակալ եմ, որ մեզ հասնելու և ներելու համար ունայնացնում ես Քո անձը: Ամեն:

**Շնորհակալության աղոթք բարձրացնենք Աստուծո՛ւ հանուն մեզ իր արած մեծ շնորհի համար:**

Քո ոսոխի հետ շուտով հաշտվիր: (Մատթ. 5.25)

## **ԺԱՄԱՆԱԿԻՆ ՈՐՈՇՈՒՄ**

**Ս**այմոնի ու Ջեֆրիի միջև տարիներ շարունակ չլուծված խնդիր կար, որը խանգարում էր նրանց երբեմնի լավ հարաբերությունները վերահաստատելու փորձերին: Լսելով Ջեֆրիի մոր մահվան լուրը, Սայմոնը որոշեց գնալ ցավակցելու: Հետագայում անդրադառնալով իրենց հանդիպմանը՝ Սայմոնը հիշում է. «Ընդհանրապես չէի պատկերացնում, թե ինչպես էր լինելու մեր հանդիպումը, բայց հուզարկավորությունից հետո մենք ողջագուրվեցինք, սրտաբաց զրույց ունեցանք, աղոթեցինք ու որոշեցինք դարձյալ հանդիպել»: Եթե նրանք ավելի վաղ հաշտված լինեին, կխուսափեին իրենց տանջող ցավերից: Մատթեոսի 5. 21-26-ում Հիսուսի խոսքերը կօգնեն հետագայում կարգավորել լարված հարաբերությունները: Բարկությունը դատապարտելի բան է (Հմ.22): Ավելին, հարաբերությունները կարգավորելը Աստծուն երկրպագելու նախապայման է (Հմ.23-24): Հիսուսի իմաստուն խրատը, թե «Քո ոսոխի հետ շուտով հաշտվիր» (Հմ. 25), մեզ հիշեցնում է, որ որքան շուտ անենք հաշտության քայլը, այնքան լավ: Կկարողանանք վերահաստատել խզված հարաբերությունները:

Մենք՝ Իրեն որպես «Խաղաղության իշխան» ներկայացնողներս (Ես. 9. 6), դուրս գանք մեր հանգստի գոտուց և մեր սիրտն ու ձեռքը բանանք նրանց համար, ում հետ չլուծված հարցեր ունենք:

**Աղոթք** - Հայր, Դու գիտես, թե կյանքում որտեղ եմ փշրվել մեր հարաբերությունները: Ների՛ր ինձ իմ դանդաղկոտության համար: Տու՛ր ինձ հաջորդ քայլը կատարելու համարձակություն: Ամեն:

**Եթե ուրիշների հետ ունես չլուծված հարցեր, կատարի՛ր առաջին քայլը և ամեն ջանք թափի՛ր համաձայնության ու հաշտության հասնելու համար:**

Արդարեւ, ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից, որ ասում եմ քեզ, թե՛ «Մի՛ վախեցիր, ես կօգնեմ քեզ»: (Ես. 41.13)

## **ԱՍՏԾՈ ԱՋ ՁԵՌՔԸ**

**Շ** ներիս տարել էի զբոսանքի: Նրանցից մեկի կապը ուղղելու ժամանակ հանկարծ մի նապաստակ հայտնվեց, և շունս, վազելով նրա հետևից, մատու ուժեղ սեղմեց, և ես, ցավից դալարվելով, ընկա խոտերի վրա:

Շտապ օգնության կենտրոնում ինձ առաջին օգնություն ցուցաբերելուց հետո բժիշկներն ասացին, որ վիրահատության կարիք կա: Ես Աստծուն աղաչեցի. «Ես գրող եմ: Ինչպե՞ս եմ մեքենագրելու, չէ՞ որ դա է իմ ամենօրյա պարտականությունը»: Ինչպես երբեմն պատահում է, այդ օրն էլ Սուրբ Գրքի ընթերցման ժամանակ Աստված խոսեց ինձ հետ և ասաց. «Արդարեւ, ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից, որ ասում եմ քեզ, թե՛ «Մի՛ վախեցիր, ես կօգնեմ քեզ» (Ես. 41.13): Ավելի ուշադիր կարդալով այդ հատվածը՝ տեսնում ենք, որ Աստծո ժողովուրդը, որին ուղղված էր Եսայի մարգարեի խոսքը, հատուկ հարաբերություն էր վայելում Նրա հետ: Նա խոստացել էր Իր ներկայությունը, ուժն ու օգնությունը Իր արդարություն միջոցով, որը խորհրդանշվում է Իր աջ ձեռքով (Հմ.10): Աստվածաշնչի մեկ այլ հատվածում էլ տեսնում ենք, որ Նրա աջը օգտագործված է Իր ժողովրդի համար հաղթանակներ ապահովելու նպատակով (Սաղմ. 16.7, 97.1):

Բուժմանս շաբաթների ընթացքում Աստծո աջակցությունն զգացի, երբ սովորեցի ոչ միայն համակարգչի վրա ձախ ձեռքով մեքենագրել, այլև տնային այլ գործեր էլ անել: Աստծո արդար աջից մենք օգնություն ենք ստանում, երբ ունենում ենք դրա կարիքը

**Աղոթք** - Բուժո՛ղ Աստված, Քո օգնության կարիքն ունեմ: Խնդրում եմ՝ արդար աջովդ բռնի՛ր կոտրված ու հոգնած ձեռքերս և օգնի՛ր ինձ: Ամեն:

**Աստծո օգնության ու աջակցության կարիքը մի՛ս էլ ունենմ: Աղոթով դիմենմ Իրեն:**

Մի քանիսին խտրություն անելով՝ ողորմեցեք: Մի քանիսին էլ վախճում փրկեցեք, կրակից հափշտակելով, ատելով այն պատմուճանն էլ, որ մարմնից կեղտոտված է: (Գուդա 1. 22-23)

## **ՄԵԾ ԻՄԱՍՏՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՋԱՐԱՎՈՐ ԱՉՔԵՐ**

«Հովիվը պետք է ունենա մեծ իմաստնություն և հազարավոր աչքեր, որպեսզի ամեն տեսանկյունից քննի մարդու հոգեվիճակը», - գրել է Հովհան Ոսկեբերանը՝ խոսելով ուրիշների մասին հոգ տանելու բարդության մասին: Քանի որ անհնար է ստիպել որևէ մեկին բուժվել, նա շեշտում է, որ այլոց սրտերին հասնելու համար մեծ կարեկցանք ու համակրանք է հարկավոր: Բայց դա ամենևին չի նշանակում ցավ չպատճառել, որովհետև «եթե դուք խոր վիրահատության կարիք ունեցողին շատ նուրբ կտրվածք անեք, չեք հեռացնի քաղցկեղը: Միաժամանակ եթե անհրաժեշտ գործողությունը կատարեք առանց կարեկցանքի ու անխղճորեն, հիվանդը, իր տառապանքից հուսահատված կարող է ինքնասպան լինել»:

Նմանատիպ բարդ իրավիճակ է նաև Հուդայի նկարագրածում, երբ նա մտածում է՝ ինչպե՞ս պատասխանել այն մարդկանց, որոնք մոլորված են սխալ վարդապետություններով: Նրանց արարքը նկարագրելով շատ խիստ բառերով (1. 12-13, 18-19)՝ Հուդան, սակայն, առաջարկում է ոչ թե կոպիտ զայրույթով արձագանքել, այլ բոլոր սպառնալիքներին պատասխանել Աստծո սիրո մեջ խորանալով (Հմ.20-21): Որովհետև միայն այդ ժամանակ կկարողանանք գտնել ուրիշներին արագ, խոնարհաբար ու կարեկցանքով օգնելու իմաստնություն ( Հմ. 22-23):

**Աղոթք** - Ո՛վ Աստված, օգնի՛ր, որ չարին ու ատելությանը դիմագրավելիս ոչ թե ուղղակի բարությանը պատասխանեմ, այլ անձս խարսխեմ Քո սիրուն: Տու՛ր ինձ իմաստնություն ու կարեկցություն՝ ուրիշների կարիքներն ու հույսը տեսնելու «հազար աչքով» և ցույց տալու Քո սերը: Ամեն:

**Շատ կարևոր է նախքան մեզ սղառնացող չարիքներին դասասխանելը՝ մեր անձերը հաստատել Սուրբ Գոգու վրա:**

Ահա հաղթեց առյուծը, որ Յուդայի ցեղից է՝ Դավթի արմատը: (Յայտն. 5.5)

### **ԱՌՅՈՒԾ, ԳԱՌՆՈՒԿ, ՓՐԿԻՉ**

**1** 911 թվականից ի վեր Նյու Յորքի հանրային գրադարանի մուտքը զարդարում են երկու մարմարե առյուծներ: Ակզբում դրանք գրադարանի հիմնադիրների անունով էին կոչվում՝ Լեո Լենոքս ու Լեո Ասթոր: Բայց տնտեսական մեծ ճգնաժամի ժամանակ Նյու Յորքի քաղաքապետ Ֆիորելլո Լա ուարդիան այդ արձանները վերանվանեց Տոկունություն և Համբերություն: Նա համոզված էր, որ այդ երկու առաքինություններով էին նյույորքցիները հաղթահարելու ճգնաժամը:

Աստվածաշնչում նկարագրված է մի կենդանի ու հզոր առյուծ, որը դժվարության պահերին քաջալերանք է տալիս: Իր տեսիլքի մեջ Հովհաննես առաքյալը լալիս է՝ տեսնելով, որ ոչ ոք չի կարողանում բացել Աստծո դատապարտության ու փրկության ծրագիրը պարունակող կնքված մագաղաթը: Այդ պահին նրան ասվում է. «Լաց մի՛ եղիր, ահա հաղթեց առյուծը, որ Հուդայի ցեղից է՝ Դավթի արմատը, որպեսզի գիրքը բաց անի ու նրա յոթ կնիքները բացի» (Հայտ. 5.5):

Հաջորդ հատվածում Հովհաննեսը բոլորովին այլ պատկեր է նկարագրում.«Տեսա. ահա այն գահի մեջտեղը և չորս կենդանիների մեջտեղը և երեցների մեջտեղը՝ մի Գառ կանգնած» (Հմ. 6): Առյուծը և գառնուկը նույն անձն են՝ Հիսուսը: Նա հաղթող թագավորն է և «Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. 1. 29): Նրա զորության ու խաչի միջոցով մենք ստանում ենք ողորմություն և ներում, որպեսզի կարողանանք ապրել ուրախությամբ և զարմանալով Նրա հավերժությամբ:

**Աղոթք** - Գեղեցիկ Փրկիչ, կարող եմ Քեզ փառաբանել ամեն հավիտենության համար՝ այդպես էլ չհասնելով Քո իսկական եությանը: Շնորհակալ եմ, որ Դու անձո՞ղ նվիրեցիր, որպեսզի ես կարողանամ հավիտյան ապրել Քո մեջ: Ամեն:

**Հիսուսի սված անուններից ո՞րն է քո նախընտրելին:  
Նրա նկարագրի ո՞ր մասերն են քեզ ոգևորում զովելու  
Նրան:**

Այն կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան: (Առ. 3.18)

## **ՈՍԿՈՒՑ ԱՎԵԼԻ ԼԱՎ**

**ԱՄՆ** ոսկու մեծ ներխուժման ժամանակ ոսկի որոնող էդուարդ Ջեքսոնը ճանապարհ ընկավ դեպի Կալիֆոռնիա: 1849 թ. մայիսի 20-ի նրա օրագրային գրառման մեջ նա ողբով է նկարագրում իր դժնդակ ճամփորդությունը և մահվան վտանգը. «Օ՛, չթողնեք իմ ոսկորներն այստեղ: Եթե հնարավոր է, դրանք թող տանը պառկեն»: Մեկ այլ ոսկի որոնող էլ՝ Ջոն Վալկերը, գրել է. «Դա կատարյալ վիճակախաղ է, և ես չեմ կարող խորհուրդ տալ որևէ մեկին՝ գալու այստեղ»: Վերջինը վերադարձավ տուն և հաջողություն ունեցավ հողագործության ու նահանգային քաղաքականության մեջ: Երբ տարիներ անց նրա ընտանիքի անդամներից մեկը Վալկերի դեղնած նամակները տարավ հնատիպ իրերի մասին հեռուստածրագրին, հաղորդավարը նկատեց. «Ոսկու ներխուժումից մնացած միակ արժեքավոր բանն այս նամակներն են»: Վալկերն ու Ջեքսոնը, իմաստություն ստանալով, վերադարձան տուն և ավելի գործնական կյանք ունեցան: Սողոմոն թագավորն ասում է. «Երանի այն մարդուն, որ իմաստություն կգտնի, և այն մահկանացուն, որ հանճար կստանա: Այն կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան» (Առ. 3.13.18): «Քանզի իմաստությունն ավելի թանկ արժե, քան ոսկու և արծաթի գանձերը» (Հմ.14), այն ավելի հարգի է, քան երկրային ցանկությունը (Հմ.15), «նրա աջ ձեռքում երկար օրեր ու կյանքի տարիներ, նրա ձախ ձեռքում փառք և հարստություն կա... Նրա ճանապարհները բարու ճանապարհներ են, և նրա բոլոր շավիղները՝ խաղաղության» (Հմ.16-17): Հետևաբար, մեր մարտահրավերն է՝ պինդ պահել իմաստությունը, ոչ թե փայլուն ցանկությունները:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, երբ ցանկություններով ու գայթակղություններով կուրացած լինեմ, ինձ ներշնչի՛ր, որ ապավինեմ իմաստությանը, քայլեմ իմաստության ճանապարհներով ու վերադառնամ դեպի Քո խաղաղությունը: Ամեն:

**Ի՞նչ ցանկություններ ունես քո կյանքում: Ընտրի՛ր իմաստության ճանփան:**

Բայց մեր բնակությունը երկնքում է, որ այնտեղից էլ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին: (Փիլ. 3.20)

## **ՄԵԿ ՕՐ ԱՎԵԼԻ ՄՈՏ ԾՆՈՒՆԴԻՆ**

**Ա**ղջիկս տխուր ասաց.«Ձեմ հավատում, որ Սուրբ Ծնունդը վերջացավ»: Պատկերացնում եմ նրա զգացումները: Այո, Ծնունդի հաջորդ օրերին կարելի է տխրել: Նվերների տուփերը բացված են, լույսերն եւ տոնածառը հավաքելու ժամանակն է: Շատերն էլ հունվարին ավելորդ կիրոզրամներ են ձեռք բերում: Սուրբ Ծնունդից առաջ եղած սրտատրոփ սպասումները հանկարծ անցած ու հեռու են թվում:

Մի քանի տարի առաջ, երբ տեղադրում էինք Ամանորի զարդարանքները, ես մտածեցի, որ անկախ այն բանից, թե ինչ է ցույց տալիս օրացույցը, մենք մի օրով ավելի ենք մոտենում հաջորդ Ծնունդին: Ես այս միտքը հաճախ եմ կրկնում:

Իհարկե, Ծննդյան տոների տոնակատարություններից շատ ավելի կարևոր է դրա հիմքը կազմող հոգևոր իրականութունը: Դա Հիսուսի բերած փրկությունն է և Նրա վերադարձի մասին հույսը: Սուրբ Գիրքը բազմիցս խոսում է Քրիստոսի երկրորդ գալստյանը սպասելու ու կարոտի մասին: Սիրում եմ այն, ինչ Պողոսն ասում է փիլիպպեցիներին ուղղված նամակի 3. 15-21-ում: Նա աշխարհի ապրելակերպը հակադրում է «երկրային բաներ մտածելուն» (Հմ.19), այն ապրելակերպին, որը ձևավորված է Հիսուսի վերադարձի հույսով և ասում է.«Մեր բնակությունը երկնքում է, որ այնտեղից էլ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին» (Հմ.20):

Այդ իրականությունը, որ «մեր բնակությունը երկնքում է», փոխում է ամեն բան: Կարևորը ինչի հույս ունենալը և ինչպես ապրելն է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Հիսուսի և Նրա վերադարձի հույսի համար, որ մենք ունենք: Երբ ուրիշ հույսեր են փորձում գրավել իմ ուշադրությունը, օգնիր, որ հայացքս բարձրացնեմ դեպի Քեզ: Ամեն:

**Այս աշխարհում ինչի՞ վրա է մեր հույսը:**



## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հոկ. 17, 28, դեկ. 13, 19
Աշակերտություն.....	նոյ. 2, 9, 16, 23
Ապաշխարություն.....	Հոկ. 13
Աստուածաշնչի ներշնչում.....	դեկ. 21
Աստուածաշնչի սերտողություն.....	Հոկ. 21, նոյ. 23, դեկ. 5
Աստուծո հետ հաղորդակցություն.....	դեկ. 9
Աստծո սերն ու գուրգուրանքը.....	Հոկ. 5, 24, 29, նոյ. 6,17, 21,30, դեկտ. 3, 17, 19, 27, 28
Աստուծուն սպասել.....	նոյ. 24, դեկ. 13
Աստուծո ստորգեղիները.....	Հոկ. 12
Անարդարություն.....	Հոկ. 18
Ավետարանչություն.....	Հոկ. 26, նոյ. 2, 27, դեկ. 14
Բազմազանություն.....	դեկ. 2, 9, 16
Բախում և ճակատում.....	դեկ. 4, 8, 15, 22
Գոհունակություն.....	դեկ. 30
Դատել.....	նոյ. 28
Եկեղեցու մասնակցություն.....	դեկ. 1, 8, 15, 22
Եկեղեցու միություն.....	դեկ. 4, 8, 15, 22
Երջանկություն.....	Հոկ. 19, 29, նոյ. 5, 20
Ինքնադիմանկար.....	Հոկ. 24, նոյ. 17, դեկ. 3
Խորհրդատվություն.....	Հոկ. 9, դեկ. 5
Ծառայություն.....	Հոկ. 9, 15, 16, 22, նոյ. 26, դեկ. 4
Ծերություն.....	դեկ. 4
Հալածանք.....	նոյ. 29
Հանգիստ.....	նոյ. 9
Հավատացյալների հետ ապրել.....	նոյ. 10, դեկ. 9
Հավատացյալների հարություն.....	Հոկ. 3
Հավատք.....	Հոկ. 10, 14, նոյ. 18
Հավիտենական կյանք.....	սեպ. 12
Հոյս.....	սեպ. 10, 24





Հնազանդութիւն.....	Հոկ. 13
Մահ.....	Հոկ. 5, 31
Մատակարարում և տալ.....	Հոկ. 23, դեկ. 6
Մեղքի թողութիւն.....	Հոկ. 20, նոյ. 18, դեկ. 29
Միաբանութիւն.....	Հոկ. 7, 10
Մտահոգութիւն.....	Հոկ. 14
Հարաբերութիւններ.....	Հոկ. 2
Շնորհակալութիւն.....	Հոկ. 31, նոյ. 1, 25
Պաշտամունք.....	Հոկ. 4, նոյ. 1, 8, 15, 22
Սեր ուրիշների հանդեպ.....	նոյ. 3, 28, դեկ. 11, 23
Սուրբ Հոգի.....	Հոկ. 17, դեկ. 20, 21
Ստեղծագործութիւն.....	նոյ. 12
Վախ.....	դեկ. 20
Վիշտ.....	Հոկ. 5, նոյ. 6
Վստահութիւն Աստծո հանդեպ.....	Հոկ. 2, 15, 25, նոյ. 13, 19, 24, դեկ. 20
Տալ.....	նոյ. 4
Տառապանք.....	Հոկ. 5, 27, նոյ. 3, 13, 19
Փրկութիւն.....	Հոկ. 1, 11, 14, 20, 30, նոյ. 9, 18, 27, դեկ. 10
Քաջակերութիւն.....	Հոկ. 6, նոյ. 3, դեկ. 1
Քրիստոնեական մշակույթ.....	դեկ. 9, 16, 23
Քրիստոսի ծնունդը.....	դեկ. 6, 7, 24, 25
Քրիստոսի մահը.....	դեկ. 2
Քրիստոսի հարութիւնը .....	նոյ. 11
Քրիստոսի վերադարձը.....	Հոկ. 3, դեկ. 31
Քրիստոսը Փրկիչ և Մեսիա.....	դեկ. 12, 18, 24, 25, 29
Քրիստոսի անունները.....	դեկ. 7, 24, 29
Քրիստոսի համար ապրիլ.....	Հոկ. 8, 16, 30, նոյ. 7, 16
Քրիստոսի նմանութիւն.....	Հոկ. 1, 8, 15, 22



## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 94 52 75

-----  
Անուն, ազգանուն .....  
Հասցե.....  
.....  
Հեռախոս.....  
-----



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ  
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և  
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Էլկայք՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ  
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա  
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95